

Հիմնադիր՝

լրատվական գործունեություն իրականացնող

«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՅԻ ԱՆՎԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ»

պետական ոչ առևտրային կազմակերպություն

Վեհական N 03Ա 059505,
գրանցման տարեթիվը 07.04.2003

ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 2 (59) 2020

Հիմնադրվել է 1998 թվականին

Գիտական, տեսական, քննադատական-
հրաժարակախոսական, երաժշտական ամսագիր

Երաշխավորված է՝ ԵՊԿ գիտական խորհրդի կողմից 1996 թ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ՍՈՒԱ Հ. ՀԱՎԱՐԵԱՆԻ ԽՄԲԱՅ (յամբավար, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ ուկտոր, ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ)

ԼԻԼԻԹ Վ. ԵՐԱՋԱԿՅԱՅ (արևելագեն, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ)

ՇՈՎՔԻՆ Հ. ՄՈՎԱԿԻ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, արվեստագիտուրյան թեկնածու, դրցենու, ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր)

ՄԵՐԳԵՅ Գ. ՍԱՐԱԶՅԱՆ (դաշնակահար, պրոֆեսոր, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ,
«ԵՊԿ երաժշտական» խորհրդի նախագահ)

ՕԼՅԱՅ Յ. ՆՈՒՐԻԶԱՅՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, արվեստագիտուրյան թեկնածու, դրցենու, ԵՊԿ գիտական քարտուղար)

ԱՐՄԵՆ Բ. ՍՈՒՐԱՅՅԱՆ (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ամսագրի հիմնադիր-տնօրեն)

ԳՈՀԱՅ Կ. ՇԱԳՈՅՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս, հրաժարական, ամսագրի հիմնադիր-գլխավոր լինքագիր)

ՄԱՐԳԱՐԻՏ Ա. ՈՈՒՄՈԿՅԱՆ (երաժշտագետ, պրականական ակադեմիայի դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԻՐԻՆԱ Լ. ՉՈԼՈՏՈՎԱ (երաժշտագետ, դաշնակահարուիկ, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր)

ՄՎԵՏԼԱՅՆ Կ. ՍԱՐԳԱՅՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի և

Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ)

ԱՆԻԱ Ս. ԱՐԵՎԱՐԵԱՅ (միջնադարագեն, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԺԱՆՆԱ Պ. ԶՈՒՐԱԲՅԱՆ (երաժշտագետ, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԿԱՐԻՆԵ Ա. ԶԱԳԱՅՅԱՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԱԼԻՆԵ Ա. ՓՈՎԼԵՎԱՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ-ֆոլկուրագետ, արվեստագիտուրյան թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԳԱՎԻԹ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ (յամբավար, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ)

ԼԵՎՈՆ Ա. ՉՈՈՒՆԵՅԱՅ (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

ԼՈՒՄԻՆԵ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ (երաժշտագետ, պրականական ակադեմիայի դոկտոր, դրցենու)

ՌՈՒԶԱՆՆԱ Վ. ՄՏԵՔԱՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, պրականական ակադեմիայի դոկտոր, դրցենու)

ՆՈՒՆԵ ՌՈՌԵՆՅԻ ԱԹԱՆԱՍՅԱՆ (երաժշտագետ, պրականական ակադեմիայի դոկտոր, դրցենու)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՈՆՍԱՆՏԻՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԵՆԿԻՆ (երաժշտագետ, դաշնակահար, խմբավար, արվեստագիտուրյան դոկտոր, պրոֆեսոր,

Պ. Զայլովսկով անվ. ՄՊԿ գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր, **Մոսկվա, ՌԴ**)

ԵԼԵՆԱ ԲՈՐԻՒՄԻ ԴՈՒԼԻՆ ԽՄԲԱՅ (երաժշտագետ, դաշնակահար, Ա. Շնիւրկի ինստիտուտի հիմնադիր,

արվեստագիտուրյան դոկտոր, Պ. Զայլովսկով անվ. ՄՊԿ պրոֆեսոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, **Մոսկվա, ՌԴ**)

ՀԱՅԿ ԱՐԵՎԻ ՈՒԹԻՒՃԵԱՆ (միջնադարագեն, արվեստագիտուրյան դոկտոր, դիրիժոր, խմբավար, **Պրահա, Չեխիա**)

ՎԱԶԵ ՊԱՐՍՈՒՄ ԽՄԲԱՅ (յամբավար, «Լարր» երաժշտական կենարունի հիմնադիր-տնօրեն, «Դրազպր» հրատարակության հրաժարական, Կալիֆորնիա, **Լոս-Անջելես, ԱՄՆ**)

ՀՐԱՑ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՅՔԻ ԽՄԲԱՅ (երգիչ, արվեստարան, լեզվաբան՝ անգլ., ֆրան., ռուս. լեզուների, **Ժնև, Շվեյցարիա**)

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԵԼԼԱԼՅԱՅ (կատարողական արվեստ, ջուրախամար, Պորտուգալիայի ազգային սինֆոնիկ

նվազամիջի արտիստ, Դելավար Տրիոյի հիմնադիր-ջուրախամար, «Հայրիկ Մորալյան» ՀԿ-ի նախագահ)

Լիսարոն, **Պորտուգալիա**)

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՅՆ ԽՄԲԱՅ (միջնադարագետ, երգիչ, խմբավար, դարավանդ, **Երուսաղեմ, Իսրայել**)

Գլխավոր խմբագիր-հիմնադիր,

Համարի թողարկման պատասխանատու՝ երաժշտագետ **ԳՈՀԱՅ ԿԱՌԵՆԻ ՇԱԳՈՅՆ ԽՄԲԱՅ**

Պատասխանատու քարտուղար՝ **ԱՆՈՒՆ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Գիտական խմբագիր՝ **ՏՈՎԻՆԱՐ ՀՐԱՅԻՐ ՄՈՎԻՄԵՆՅԱՆ**

Խմբագիր ՍՈՅԱ ՄԱԹԵՎՈՍԻ ԱՇԽԱՌԻ ԽՄԲԱՅ (ռուս. տեքստերի),

Թարգմանիչ՝ **ՆԱՐԻՆԵ ԼԵՇՆԻ ԳԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՅ ԽՄԲԱՅ** (անգլ. տեքստերի)

Կազմի մասհացումը և ձևափորմը՝ **ՄԱՐԻԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՊԵՏՐՈՎՅԱՆԻ**

Գեղարվեստական խմբագիր (մակետ, էջադրություն, ձևափորման)՝ **ԳՈՀԱՅ ՎԻԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

Ամսագիր ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի «Ասեճախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ցուցակում»՝ Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնությամբ:

Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյոթերը չեն վերադարձվում:

Գիտական հոդվածները ենթակա են գրախոսման:

Учредитель:
осуществляющий информационную деятельность
“ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМ.КОМИТАСА”
государственная некоммерческая организация

Свидетельство №03Ц 059505,
дата регистрации 07.04.2003

МУЗЫКАЛЬНАЯ АРМЕНИЯ

N 2 (59) 2020

**Научно-теоретический,
критико-публицистический журнал**
Основан в 1998 году

Рекомендован к изданию Научным советом ЕГК с 1996 года

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:

СОНА ОГАНЕСОВНА ОГАНЕСЯН (хормейстер, профессор, Заслуженный деятель искусств РА, ректор ЕГК, председатель Ученого совета ЕГК)

ЛИЛИТ ВАРДГЕСОВНА ЕРНДЖАКЯН (востоковед, доктор искусств., Заслуженный деятель искусств РА, членкор-академик Парижской международн. академии “Аракат”, профессор, председатель Управленияского совета ЕГК)

ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН (музыковед, к-т искусств., доцент, проректор ЕГК по науке)
СЕРГЕЙ ГЕОРГИЕВИЧ САРАДЖЯН (пианист, профессор, Заслуженный деятель культуры Польши, председатель издательского совета ЕГК)

ОЛЯ ЮРЬЕВНА НУРИДЖАНИЯН (музыковед, к-т искусств., доцент, ученый секретарь ЕГК)
АРМЕН БАГРАТОВИЧ СМБАТЯН (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, директор-основатель журнала)

ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН (музыковед, членкор-академик Парижской международн. академии “Аракат”, главный редактор-основатель журнала)

ЖАННА ПЕТРОВНА ЗУРАБЯН (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)
СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель культуры РА, Заслуженный деятель Польской культуры)

АННА СЕНОВНА АРЕВИШАТИЯН (медиевист, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)
ДАВИД ГАРСЕВАНОВИЧ КАЗАРЯН (хормейстер, профессор, Заслуженный деятель культуры РА, председатель АМО)
ЛЕВОН АЛЕКСАНДРОВИЧ ЧАУШЯН (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, председатель АМА)
КАРИНЕ АЗАТОВНА ДЖАГАГЦПАНИЯН (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)
МАРГАРИТА АШТОВОНА РУХКЯН (музыковед, музыкальный критик, доктор искусств., Заслуженный деятель искусств РА)

ИРИНА ЛЕОНИДОВНА ЗОЛОТОВА (музыковед, пианистка, доктор искусств., профессор)
АЛИНА АШТОВОНА ПАХЛЕВАНИЯН (фольклорист, музыковед, к-т искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

ЛУСИНЕ ЗАВЕНОВНА СААКЯН (музыковед, к-т искусств., доцент)

РУЗАННА ВАЧАГАНОВНА СТЕПАНИЯН (музыковед, к-т искусств., доцент)

НУНЭ РОМЕОВНА АТАНАСЯН (музыковед, к-т искусств., доцент)

МЕЖДУНАРОДНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ:

КОНСТАНТИН ВЛАДИМИРОВИЧ ЗЕНКИН (музыковед, доктор искусств., профессор, пианист, проректор по научной работе МГК им. П. И. Чайковского, Москва, РФ)

ЕЛЕНА БОРИСОВНА ДОЛИНСКАЯ (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств России, основатель Института А. Шнитке, Москва, РФ)

АЙК АРИСОВИЧ УТДЖЯН (музыковед, медиевист, доктор искусств., дьякон, дирижер, Прага, Чехия)

ВАЧЕ ПАРСУМЯН (дирижер, издатель, директор-основатель музыкального Центра “Lark”, издательства “Дразарк”, Калифорния, Лос-Анджелес, США)

ГРАНТ ОГАНЕСОВИЧ ХАЧИКЯН (певец, искусствовед, филолог (англ., франц., русск. яз.) Женева, Швейцария)

НАРИНЕ АРУТИОНОВНА ДЕЛЛАЛЯН (скрипачка, артистка Национального симфонического оркестра Португалии, основатель скрипачка Трио Деллалян, председатель ОО “Айrik Мурадян”, Лиссабон, Португалия)

АРТУР дьякон ВАРДАНЯН (певец, хормейстер, регент, директор Духовной семинарии, Иерусалим, Израиль)

Главный редактор-основатель, музыковед, издатель,

Ответственный за выпуск номера: **ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН**

Ответственный секретарь: **АНУШ МЕСРОПОВНА КИРАКОСЯН**

Научный редактор: **ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН**

Редактор: **СОФА МАТЕОСОВНА АЗНАУРЯН** (рус.)

Переводчик: **НАРИНЕ ЛЕОНИДОВНА МИКАЕЛЯН** (англ.)

Автор идеи и дизайн обложки: **МАРИАМ ВЛАДИМИРОВНА ПЕТРОСЯН**

Художественный редактор (макет, верстка, дизайн): **ГОАР ВИЛЕНОВНА ОГАННИСЯН**

Журнал включен ВАКом РА в Список научных изданий для публикации результатов диссертаций.

Перепечатка материалов производится исключительно с согласия редакции журнала “Музыкальная Армения” в письменном виде. Редакция не всегда согласна с мнением авторов. Материалы не рецензируются и не возвращаются. Научные статьи рецензируются.

Founder, information provider

"YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS"

State non-trade organization

**Certificate # 03 A 059505,
date of registration 07.04.2003**

MUSICAL ARMENIA

N 2 (59) 2020

Established in 1998

Scientific, critical and publicistic musical journal

Since 1996 publishing by the warranty of The Scientific Council of YSC

EDITORIAL BOARD:

SONA H. HOVHANNISYAN (Conductor, Professor, Rector of the YSC, Honored Worker of Art of RA, Chairman of the Scientific Council of the YSC)

LILIT V. YERNJAKYAN (Oriental Studies, PhD Doctor, Professor, Honored Worker of Art RA, Corresponding Member Academic of the International Academy of Sciences "Ararat" of Paris, Chairman of the Management Board of the YSC)

TSOVINAR H. MOVSISYAN (Musicologist, PhD Candidate, Docent, Vice Rector by Scientific Part)

SERGEY G. SARAJYAN (Pianist, Professor, Honored Worker of Art of Poland, Chairman of the Publishing Council of YSC)

OLYA Y. NURIJANYAN (Musicologist, PhD Candidate, Docent, Scientific Secretary of the YSC)

ARMEN B. SMBATYAN (Composer, Professor, Honored Worker of Art of RA,

Founder-director of journal)

GOHAR K. SHAGOYAN (Musicologist, Corresponding Member Academic of International Academy of Sciences "Ararat" of Paris, Founder-editor-in-chief)

ZHANNA P. ZURABYAN (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)

SVETLANA K. SARKISYAN (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Culture of RA and Polish Republic)

ANNA S. AREVSHATYAN (Musicologist, Medievalist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)

DAVID G. GHAZARYAN (Conductor, Professor, Honored Worker of Culture of RA)

LEVON A. CHAUSHIYAN (Composer, Professor, Honored Worker of Art of RA)

KARINE A. JAGHATSPANYAN (Musicologist, PhD Doctor, Professor, Honored Worker of Art of RA)

MARGARITA A. RUKHKYAN (Musicologist, music critic, PhD Doctor, Honored Worker of Art of RA)

IRINA L. ZOLOTOVA (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor)

ALINA A. PALEVANYAN (Musicologist-Folclorist, PhD Candidate, Professor, Honored Worker of Art of RA)

LUSINE Z. SAHAKYAN (Musicologist, PhD Candidate, Docent)

RUZANNA V. STEPANYAN (Musicologist, PhD Candidate, Docent)

NUNE R. ATANASYAN (Musicologist, PhD Candidate, Docent)

INTERNATIONAL EDITORIAL COUNCIL

KONSTANTIN V. ZENKIN (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor, Choirmaster, Vice-Rector for Science in MSC after P. I. Tchaikovsky, Honored Art Worker of RF, Moscow, RF)

ELENA B. DOLINSKAYA (Musicologist, Pianist, PhD Doctor, Professor, Honored Art Worker of RF, founder of A. Schnittke's Institute, Moscow, RF)

HAYK A. UTIDJIAN (Conductor, Regent, Deacon, Medievalist, PhD Doctor, Praha, Czech Republic).

VACHE BARSUMYAN (Conductor, Publisher, founder - in-chief of "Lark" Musical Center, "Drazark" Publishing House, Californian, Los Angeles, USA)

HRANT H. KHACHIKYAN (Singer, Art critic, Philologist English, French, Russian of languages, Geneva, Switzerland)

NARINE H. DELLYAN (Violinist, Artist of the National Symphony Orchestra of Portugal, Founder and violinist of Dellalyan Trio, President of "Hayrik Muradyan" SO, Lisbon, Portugal)

ARTUR Deacon VARDANYAN (Singer, Choirmaster, Regent, Jerusalem, Israel)

Founder-editor-in-chief, musicologist, publisher,
Responsible of the published issue: **GOHAR K. SHAGOYAN**
Responsible secretary: **ANUSH M. KIRAKOSYAN**

Science editor: **TSOVINAR H. MOVSISYAN**

Editor of texts: **SOFA M. AZNAURYAN** (russ.)

Translator: **NARINE L. MIKAELYAN** (eng.)

The concept and design of the cover: **MARIAM V. PETROSYAN**

Artistic editor (modeling, layout, design): **GOHAR V. HOVHANNISYAN**

The publication is entered into the List of the issues accepted by the Supreme.

Certifying Commission of RA for publishing the results of theses. Re-printing is possible only on written permission by "Musical Armenia" journal. The publishing house does not always share opinions or points of view of authors. Materials are not returned from the publishing house. Scientific articles are reviewed.

Հայ բանագիտությունը (ֆոլկորագիտությունը) դրվել ժողովրդական բանահյուսությամբ գրամման ուսուազումն ակադեմիական է 19-րդ դարի կեսերին, որն իր մեջ ներառում է ոչ միայն ժողովրդական բանագիտությունները, այլև ժողովրդական երաժշտությունները: Այս ժողովրդական բանագիտությունները պահպանվել են առաջնահարուսացությամբ:

Ժողովրդագիտության այս բնագավառներն առավել որոշակելու և հետազոտելու նպատակով Հայաստանում ստեղծված գիտական և գիտակրթական համապատասխան հաստատությունները տասնամյակները շարունակ հսկայածավագ աշխատանքներ են կատարել հսկաբեր և ամբողջացնելու սերնեստության բանագիտությամբ ժողովրդական տարարձնությունը ամրապնդությունը ամրապնդությունների հարուսակազմը, մասնաւորությունների խորայիշի բանագիտությունը:

Հորակություններ մեջ պայօն առիթ ունեն դրամելու Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտության ֆոլկորագիտության ամբողջ գործունեության 50-ամյակը, որը հիմնադրվել է պրոֆեսոր Մարգարիտ Բրուսանի ամձնադիր աշանաւոր գանձերով և շարունակվել մեր երաժշտական ֆոլկորի հնուն գիտակների մասնավորապես պրոֆեսոր Ալիքս Փափլանյանի և ՀՀ վակովայիշի վասասականությունը գործիչ, բանագետ, բանահավաք, բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Հայ երաժշտության ֆոլկորագիտության ամրիոնի վաստակաշատ դասախոսություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշտուտությունը, Արտասահման կողմանի գործունեությամբ, որն ոչ միայն կազմել ու խնարգել են «Հայ ժողովրդական երգեր և նվազեր» հեղինակավոր մատենաշարի մի շարք հաստորներ, ուսումնամիջուկ ժողովրդական տաղապահական և կառուցվածքային առանձնահատկությունները, այլև Ա. Փափլանյանի իր գիտական հոդվածներում «Սասնա ծուեր» հերոսավեճայի երգին հաստվածները դիտարկել է լորպետ երաժշտական լեզու ու դրամելու երաժշտական խոր, ինչ Ա. Սահակյանը «Սասնա ծուեր» թեմատիկան, կատոցվածքն ու պատուների թեմական համեմատությունը մշտական պահել է իր գիտական հետաքրքրությունների առանցքություն:

Մեր հնագույն ֆոլկորի գուգահեռ բնագավառների խորայիշի բանագիտությանը մասնակի են մեր ժողովրդի ֆոլկորային ստեղծագործությունների անդամական հարուսակազմը մասին, որի արժանապահիլ ժառանգորդը պետք է լինենք մենք և մեր գալիք սերմանեմերը:

ԹԱՄԱՐ ԼԱԶԱՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Բանահավաքական

գիտությունների բակալավր,
առաջատար գիտաշխատող,
բանագետ-մշակութաբան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի
բանահյուսության տերսաբանության
պատճի վարիչ

**ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ
ՓԱԸԼԵՎԱՆՅԱՆ**

**Արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր
E-mail: alinapahlevanyan1@gmail.com**

**ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԵՐԱԺԾՏԱԿԱՆ
ՖՈԼԿՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵջ
ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Lավաշչական աշխատանքը ֆոլկորագիտության կարևորագույն ոլորտն է, կարելի է ասել՝ իմբռ, որովհետև նորու է տալիս ուսումնասիրության համար: XIX դարասկզբի ազգային ինքնաճանաչողության համընդհանուր վերելքի ալիքը խթանեց հավաքչական աշխատանքը գիտության տարրեր ոլորտներում՝ մեծ քափով սկսեցին ծավալվել հնագիտական պեղումները, ազգագրական բազմապիսի տեղեկությունների, բանահյուսական նյութերի գրառումները և դրանց գիտական ուսումնասիրությունները: Երաժշտական ֆոլկորագիտությունը յուրահատուկ ոլորտ լինելով՝ երաժշտական գրագիտության առումով, մի քանի տասնյակ տարով հետ մնաց վերոհիշյալ հումանիտար գիտություններից և սկսեց բուռն կերպով զարգանալ միայն XIX դարավերջից և XX դարակրից: Այդ աշխատանքի փայլուն սկիզբը և գիտական հիմքը, ինչպես հայտնի է, դրեւ Կոմիտասը:

Կոմիտասի հավաքչական գործունեությունը յուրահատուկ է հայ ազգային երաժշտական «դեմքի» բացահայտման ուղղությամբ ունեցած իր բախտորոշ նշանակությամբ: Հավաքչական աշխատանքում նաև կիրառել է այցելած տարածքներում պարբերաբար և տևական ուսումնասիրության մեջողը, ինչը հնարավորություն է տվել նրան իր ժամանակին կենցաղում հեղող ծով նյութից ընտրություն կատարել և գրառել այն գեղջկական նմուշները, որոնք համապատասխանել են իր նախանշած գիտական նպատակներին՝ բացահայտել ազգային երաժշտական լեզվի տեսակետից ամենատիպականը և գեղարվեստորեն արժեքավորը: Կոմիտասն իր ձայնագրությունները կատարել է առլիտիկ եղանակով, անմիջականորեն երգասացի ձայնից հայկական ձայնանիշերով:

Կոմիտասի հորդորով իր հետքերով գնաց Էջմիածնի Գևորգյան հոգևոր ձեմարանի իր լավագույն սան՝ Սպիրիդոն Մելիքյանը, որն իր բեղուն հավաքչական աշխատանքով մեծապես հարստացրեց հայ երաժշտական ֆոլկորի շտեմարանը նոր, անզնահաստելի նմուշներով:

Բոլոր երկրներում ֆոլկորագիտությամբ զբաղվող երաժշտները քաջ գիտակցում են հավաքչական լուրջ աշխատանք ծավալելու անհրաժեշտությունը և հրատապությունը, քանի որ խոսքը բանավոր, հարավունի, անցավոր մարդու կյանքի հետ անմիջականորեն կապված երևոյթի մասին է: Հիմնավորելով հավաքչական աշխատանքի անհետազելիությունը՝ ուս երաժշտագետն L. Կուլակովսկին գրում է. «Ի տարրերություն հնագիտական գտածոների, ֆոլկորային «հանքաշերտերը» սպասել չեն կարող: Հնագետները գործում են հանգիստ, անշտապ <...> Նրանք գիտեն՝ հնագույն շինությունների, ամանեղենի, զենքի բեկորները, որոնք գետնի տակ մնացել են հազարամյակներ, տարիների ընթացքում էլի կրիմանան: Այլ է ֆոլկորագիտության մեջ: Ծերունիները, որոնց թուղարքը հիշողության ծալքերից եթե մենք առաջին խկ հանդիպման ժամանակ չհասցեցինք կորզել ամեն արժեքավորը, չեն սպասում երկրորդ այցելության, մեռնում կամ պարզապես զառանում են և մոռանում իրենց բոլոր երգային հարստությունները: Իսկ նրանց երեխաները, հաճախ չենթադրելով, թե ինչպիսի արժեքների է տիրապետում ավագ սերունդը, չեն յուրացնում դրանք: Ֆոլկորային «բլուրները» մեր աշքի առաջ ձևա պես հալվում են, ցրվում մատախուղի պես» (1. էջ 3):

Հավաքչական աշխատանքի հրատապության գիտակցումն էր, որ Կոմիտասի Կ. Պոլսու շրջանի հինգ նրանակուր սաներից մեկին՝ Միհրան Թումանյանին մղեց 1915 թվի եղենից փրկված և Եվրոպայի ու Ամերիկայի Միհրայալ Նահանգների քաղաքներում ապաստան գտած հայերից գրառել նրանց հիշողության մեջ պահպանված անհամար զանձերը: Կոմիտասի հետ շփումը, նրա անզնահաստելի դասերը երիտասարդ Թումանյանի սրտում անմար սեր առաջացրեցին ժողովրդական երգարվեստի, բառ ու բանի նկատմամբ, և նա գիտակցարար նվիրվեց հավաքչական աշխատանքին, որի շնորհիլ հայ ֆոլկորագիտությունը հնարավորություն ստացավ ուսումնասիրել նաև Արևմտյան Հայաստանի ժողովրդական երգարվեստը:

ամբիոնի 50-ամյա (2019 թ.) գործունեությանը

Բավական լայն է Թումաճանի հավաքական աշխատանքի «աշխարհագրությունը՝ Սոֆիա, Ֆիլիպ, Կ. Պոլիս, Իզմիր, Աղանա, Տիգրանակերտ, Հալեպ, Դամասկոս, Կահիրե, Ալեքսանդրիա, Փարիզ, Բեյրի, Նյու-Յորք, Բուստոն և շատ ուրիշ վայրեր: Սա խկացես մեծ սիրանք է՝ հավաքել շուրջ հազար ֆոլկորային նմուշ սեփական նախաձեռնությամբ, առանց որևէ կողմնակի օգնության: Այդ հարուստ հավաքածուն պարունակում է տարրեր ժանրերի ավանդական ժողովրդական երգեր, ներկայացված ըստ ծագման վայրի՝ Կոստանդնուպոլիսի շրջանում գտնվող Բուրանիայի հայաբնակ վայրերից մինչև Վանա լճի ավազանին պատկանող Վասպորական աշխարհը:

Ինչպես հավաքել ֆոլկորային նյութը, որպեսզի արդյունքն առավել լավ լինի, ինչպես աշխատել երգասացների հետ, ինչպես տրամադրել նրանց, որ հասկանան, թե ինչ է հավաքողի փնտրածը: Այս բոլոր հարցերի հանգամանալի պատասխանը գտնվում է Միհրան Թումաճանի հանձնարարականներում, որոնք պարունակվում են նրա «Հայրենի երգ ու բան» բառահատորյակի առաջին գրքի նախարանում: Նա գտնում է, որ հավաքական աշխատանքի ասպարեզում երաժշտական ուսումնական հաստատությունների մեջ ստացած գիտելիքները շատ կարևոր և օգտակար են ուսանողի նախարարական հակումն ի հայութերելու իմաստով: Եզ քանի որ հավաքական աշխատանքին մասնակցելիս ուսանողը ծանորանում է ուսումնասիրվող վայրին վերաբերող բանահյուսական և ազգագրական նյութերին, պատմությանը, աշխարհագրական դիրքին, առնությանը պատմական Հայաստանի այս կամ այն ազգագրական գոտու հետ, ապա հասկանալի է, թե որքանով են հարտանում նրա գիտելիքները, ինչպիսի հնարավորություն է ստեղծվում ապագա ֆոլկորագետի համար դառնալ ժամանակակից գիտությամբ և հմտություններով գինված մասնագետ:

Հայաստանում արդի պայմաններում կատարվող հավաքական աշխատանքն անշուշտ, պահանջում է նոր մուտեցումներ, իմնակած հին փորձի վրա և հարրտացած ժամանակակից պատկերացումներով: Այօր, երբ տարեց-տարի բարակում է նախկինում հորդառատ ֆոլկորային «գետը», առավել քան երբեմ կարենում է հավաքման անհետաձգելի կազմակերպումը: Ավելացնեմք նաև, որ այսօրվա պայմաններում չափազանց կարևորվում է յուրաքանչյուր ավանդական նմուշ՝ պահպանված ավագ սերնդի հիշողության մեջ, հայտնի երգատեսակների յուրաքանչյուր նոր տարրերակ, նոյնիսկ երգի մի հատված, մի թեկոր, որը կարող է ազդակ հանդիսանալ այդ երգատեսակի նպատակասաց որոնումների համար: Այդ ամենը բարերեր նյութ է արդի ֆոլկորային կենցաղի ուսումնասիրման, ժամանակին գուգրեաց ժողովրդական երգարվեստում կատարվող լուրջ տեղաշարժերի ընկալման և գիտական մեկնարանության համար:

Ֆոլկորի կենցաղավարման արդի վիճակի ուսումնասիրությունը կարող է կատարվել երկու սկզբունքով՝ ստացինար հետազոտության և գիտարշավների պարերար կազմակերպմամբ: Իհարկե ստացինար ծննդա-

առավել արդյունավետ է, քանի որ ուսումնասիրվող վայրում հիմնական հետազոտության կետ ունենալու դեպքում, այսինքն ականատեսն ու հնարավոր մասնակիցը լինելով ժողովրդի կյանքի տարրեր պահերի իրադարձություններին՝ տոնախմբություններին, ժողովրդական օրացուցային ծեսերին, հարսանիքներին, հուղարկավորություններին, մասնագետները հնարավորություն են ստանում ձայնագրել, նկարահանել այդ ամենն իր տեղում, իր ժամանակին: Գրառված նմուշները մեծ նշանակություն ունեն նաև այս հարցի ուսումնասիրման համար, թե որն է ժամանակակից երգաստեղծության առնչության աստիճանն ավանդական երգամտածողության հետ:

Ժողովրդական մշակույթն ուսումնասիրող գիտահետազոտական ինստիտուտները հնարավորություն ունեն կիրառել և ստացինար, և գիտարշավային մեռողները, ընդ որում նրանք կարող են կազմակերպել նաև այսպես կոչված «կոմպելքսային գիտարշավ», որի կազմում ընդգրկվում են տարրեր մասնագետներ՝ բանագետներ, ազգագրագետներ, երաժշտագետներ, պարագետներ, գործիքագետներ, կերպարվեստագետներ, սոցիոլոգներ, հոգեբաններ և այլն:

Ուսումնական նպատակներով կազմակերպվող ուսանողական գիտարշավները դասախոսների ղեկավարությամբ, բնականարար, չեն կարող ստացինար բնույթը կրել: Դրանք կազմակերպվում են ժամանակ առ ժամանակ, ենթերու ուսումնական ծրագրերով: Կոնսերվատորիայում հավաքական աշխատանքին ծանրացնումը կազմում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործները» դասընթացի ուսումնասիրման գործնական, չափազանց կարևոր մասերից մեկը: Երկու կիսամյակի ընթացքում ուսումնասիրվող, հայագիտական նշանակություն ունեցող այդ կուրսը մտնում է մասնագիտական դասընթացների ցանկի մեջ: Ուստի և ուսանողական գիտարշավներին մասնակցում են այդ լիակատար կուրսն անցնող ապագա երաժշտագետները, կոմպոզիտորները և խրմակարները, որոնց համար հավաքական աշխատանքին մասնակից լինելը կարևոր քայլ է ազգային երգատածողության էությունը ճշշտ ընթանելու ճանապարհին: Ուսանողի համար անոռանալի տպակորություն է դառնում ազգային արմատների հետ սերտորեն առնչընթելը, ժողովրդական երգի ունկնդրումը հենց նրա ստեղծողների և կրողների՝ ժողովրդական երգամտածում գլուխական կենցաղի հետ:

Ուսումնական յուրաքանչյուր կիսամյակում գիտարշավ կազմակերպելու համար ընտրվում է ամենահարմար ժամանակը, երբ զյուղացիները ծանրաթունված չեն դաշտային աշխատանքներու կամ արդար ժամանակ առանձնահարթել գիտարշավի մասնակիցներին: Դա ուշ զարունակ է՝ ցանքսերից հետո և աշունը՝ բերքավարքի ավարտին:

Չափազանց կարևոր է նաև գիտարշավի վայրի ընտրությունը: Դա կարող են լինել այն շրջանները, որտեղ նախկինում արդեն կատարվել են հավաքական աշխատանքներ, որոնց ընթացքում պարզվել է, որ դեռ շատ նյութ կա հավաքելու, կան չընդգրկված գյուղեր,

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՈՒԱԿԱՆ ՖՈՆԿԼՈՐԱԳԻՍՏՆԻՔԱՆ

կամ երգասացների հասցեներ, որոնց դեռ չի հաջողվել այցելել: Կարող է լինել նաև երբևէ չայցելած շրջան: Այդ դեպքում վաղօրոր կատարվում է որոշ «հետազոտական» աշխատանք պարզելու համար, թե ընտրված շրջանի գյուղերում կան արդյոք ավանդական ֆոլկլորի կրող տարեց երգասացներ և ովքեր են նրանք: Համապատասխան հասցեներ ունենալով՝ արդեն տեղում շարունակվում է գյուղերում հայտնի, իրավես կրողի համրավ ունեցող երգասացների որոնումը և հայտնաբերումը:

Երգասացներից ոմանք աչքի են ընկնում գեղեցիկ ձայնով, երգի գեղարվեստական կատարմամբ, մյուսները և կատարողական ձիրքով, և հարուստ երգացանկով, և ավանդույթների գերազանց իմացությամբ: Նման մարդիկ շատ հաճախ հանդիպում են հատկապես ծերերի շրջանում և մասնավորապես կանանց, որոնք թե Կոմիտասի և թե հունարացի կոմպոզիտոր և ազգագրագետ Բելա Բարտոլիի կարծիքով ավանդական ֆոլկլորի երգատեսակների հետաքրքրական տարբերակների գիտակներ են, ժողովրդական երգի իսկական «շտենարան»:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում ֆոլկլորային հավաքական աշխատանքն սկսվեց կես դար առաջ, հենց 1969 թվականից, երբ ստեղծվեց Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կարինետը՝ ի նշանավորումն Կոմիտասի ծննդյան 100-ամյակի: Առաջին գիտարշավի դեկավարն էր կարինետի վարչի, «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասընթացի հիմնադիր՝ պրոֆեսոր Մարգարիտ Արամի Բրուտյանը: Այդ գիտարշավի ընթացքում հավաքած նյութը վերծանվեց, նոտագրվեց և հիմք դարձավ 1984 թվականին հրատարակված «Թալիմ» ժողովածովի համար (վերծանող կազմողներ՝ Ալինա Աշոտի Փակեսանյան և բանագետ Արուսյակ Շատերի Սահակյան): Այդ ժողովածովի երկրորդ, բարեփոխված հրատարակությունը իրականացվեց 2012 թվականին, այն կազմեց կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի կողմից լույս ընծայվող «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի VII պարկը:

Անցած 50 տարիների ընթացքում կոնսերվատորիայի ուսանողական գիտարշավախմբերի ջանքերով արդեն հավաքվել է շուրջ 16.000 ֆոլկլորային նմուշ, որի մի զգայի մասն արդեն վերծանված է: Դրանք ոչ միայն նյութ են մատակարարում ամբիոնում դասավանդվող «Վերծանություն» դասընթացի համար, այլ դառնում են հայ ժողովրդական երգերի և գործիքային նվազների նոտագրված հավաստի նմուշներ՝ պատրաստ ուսումնասիրության և հրատարակման: Օրեքս լույս տեսավ կոնսերվատորիայի վերը նշված մատենաշարի XV հատորը (3.):

Քանի որ ուսանողական գիտարշավներից յուրաքանչյուրը նվիրված է հանրապետության որևէ մեկ շրջանին, ապա և ժողովածուներ կազմելիս պահպանվում է նոյն սկզբունքը, որի արդյունքում մատենաշարի յուրաքանչյուր պարա ներկայացնում է որոշակի շրջանի տեղական ավանդույթի և պատմական Հայաստանի

որևէ ազգագրական գրության երաժշտական մշակույթի հարաբերակցության բարդ, միևնույն ժամանակ չափազանց հետաքրքրական պատկերը:

Անցած տարիների ընթացքում կազմակերպվել է 30-ից ավելի գիտարշավ դեպի տարբեր շրջաններ՝ Թալիմ, Սեղմի, Սպիտակ, Եղեգնաձոր, Արթիկ, Անի, Ապարան, Էջմիածին, Հոկտեմբերյան, Բաղրամյան, Հրազդան, Մարտունի: Զայնագրություններ են կատարվել Երևանում, Լենինականում (Գյումրի), նաև հանրապետությունից դրս գտնվող հայաբնակ վայրերում՝ Աղերի և Սեծ Սոշիի շրջաններում, Կիրովարադում, Ախալցխայում և այլուր: 1986-1988 թվականների ընթացքում գիտարշավներ են կազմակերպվել նաև Արցախում՝ Ստեփանակերտի, Հադրութի և Մարտունու շրջաններում, որոնց շնորհիվ հավաքվել է մի քանի տասնյակ արժեքավոր ավանդական նմուշ, զրի առնված տարեց երգասացներից (80-ից մինչև 114 տարեկան): Այդ գիտարշավների նախաձեռնողն էր ամբիոնի աշխատակից Միլա Գասպարյանը: Հավաքված նյութի ժանրային կազմը բավական հարուստ է՝ աշխատանքային, ծիսական, սիրային-քննարական, զինվորագրության, պատմա-հայրենասիրական, աշուղական, մանկախաղաց երգեր, կատակերգեր, սգերգեր:

Հավաքական աշխատանքների ղեկավարությամբ տարբեր ժամանակներում զրադիւ են կարիմետի և ամբիոնի գրեթե բոլոր դասախոսները՝ Ս. Բրուտյանը, Խ. Մարտիրոսյանը, Ա. Սահակյանը, Ա. Փակեսանյանը, Ն. Աթանասյանը, Կ. Բրուտյանը, Ա. Գևորգյանը, Հ. Էլյանը, Ա. Կիրակոսյանը և ուրիշներ: Նրանք յուրաքանչյուր գիտարշավից առաջ կատարել են համապատասխան նախապատրաստական աշխատանք, ապահովել յումբը անհրաժեշտ սարքերով և այլ պարագաներով: Տեղում, ձայնագրությունները կատարելիս նրանք ոչ միայն ամրագրել են յուրաքանչյուր երգասացի և հեջող նյութի հետ կազմած անձնագրային մանրամասն տվյալները, այլ նաև զրի են առել բազմապահի հավելյալ տեղեկությունները, երգասացի տվյալ մեկնաբնությունները, սեփական տպագրությունները: Այդ բոլոր նյութերը պահպան են կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնագրան-արխիվում և նյութ են ծառայում հրատարակվող ժողովածուների գիտական ապարատի համար:

2000 թվականից ամբիոնի որոշմանը պարբերական ուսումնասիրության վայր ընտրվեց Արագածոտնի մարզի Ապարանի շրջանը, որտեղից առ այսօր զրադիւ է շուրջ 2000 նմուշ, ընդ որում ոչ միայն երաժշտական, այլ նաև բանահյուսական: Ինչո՞ւ ընտրվեց հատկապես Ապարանի շրջանը: Բանն այն է, որ երգային ավանդույթներով չափազանց հարուստ, երգատեր և ավանդական այդ շրջանի ժողովրդական երաժշտական ստեղծագործություններում անցյալ դարի 60-ական թվականներից եղել է սողերիս հեղինակի գիտական ուսումնասիրությունների առարկան: Դեռ ասսպիրանտական տարիներից իմ աշխատանքային տեսորերում Ապարանի վերաբերող՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 1948 և 1969 թվականների գիտարշավային նյութերի վերծանություններ էին կոտակվել, որոնց հիման վրա հետու-

գայում կազմվեցին և հրատարակվեցին «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի I, VIII և X պրակները (4.):

«Ետարրորդունը՝ շրջանի ֆոլկորի նկատմամբ նոր ուժով բռնկվեց, երբ իմ մասնագիտական դասարանն ընդունվեց և փայլուն ցուցանիշերով ավարտեց Անահիտ Գևորգյանը: Լինելով ծնունդով ապարանցի՝ նա մեծ եռամբուլ և սիրով նվիրվեց հարազատ ֆոլկորի ուսումնասիրմանը: Նոյնիսկ դեռ ուսանողական նստարանին նա ձայնագրեց և վերծանեց իր տատի՝ ավանդական ֆոլկորի կրող, շնորհալի երգասաց Լենա Գևորգյանի հարուստ երգացանկը, որի իման վրա է կազմեց և 2000 թվականին հրատարակեց «Հշողության ծալքերից» արժեքավոր ժողովածուն՝ հաստատելով, որ նա միանգամայն հասուն մասնագետ է ֆոլկորագիտության բարդ բնագավառում: Այսօր Ա. Գևորգյանը կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբողջ դասախոս է և զգալի ներդրում ունի թե՛ մանկավարժական, և թե՛ հավաքական աշխատանքների մեջ: Իսկապես, առանց Ա. Գևորգյանի կատարած նախնական «հետախուզական» աշխատանքի և դրա արդյունքում ստացված՝ երգասացների հասցեների հնարավոր չէր լինի մեկօրյա գիտարշավի ժամանակային սուլ պայմաններում հավաքել այդքափ շատ արժեքավոր ֆոլկորային նյութ: Նշենք նաև, որ նա, բանագետ Ա. Սահակյանի համահեղինակությամբ, վերծանեց և կազմեց «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի XII պրակը, որը նվիրված է Ապարանում 2000-2001 թվականներին իր իսկ նախաձեռնած գիտարշավների ընթացքում հավաքագրված պարերգենին (5.):

Ամբիոնի մանկավարժական, գիտահրատարակչական և մանավանդ հավաքական աշխատանքներում անուրանալի է բանագետ-սերստարան, էպոսագետ Արուսյակ Սահակյանի դերը: Նա ինքը՝ լինելով ավանդական ֆոլկորի կրող և անզուզական կրտների ժառանգ, իրեն մասնագիտություն ընտրած հայ բանահյուսությունը և այդ բնագավառում խոր և բազմակողմանի գիտելիքներ կուտակած մասնագետն, որը նաև սիրապեսում է հարազատ ազգագրական գրուռ բարբառին, նա գիտարշավների ժամանակ հետությամբ կարողացել է ստեղծել այնպիսի մտերմիկ և անմիջական մթնություն, որը թույլ է տվել երգասացներին հաղթահարել ամոթխածությունն ու կաշկանդվածությունը, և պատրաստակամ ու սիրով վերիշել իրենց մտապահած գանձերը:

Մասնագետները որքան էլ վիճեն այն հարցի շորջ, թե արդյոք կենդանի է դեռ ավանդական ֆոլկորը, թե անվերադարձ հեռանում է, կշարունակի՝ զարգանալ, բնականարար, նոր ձևեր ստանալով՝ ի հեճուկս սխուր կանխագուշակումների, թե՛ կդառնա լոկ բանգարանա-

յին նմուշ, այնուամենայնիվ կանքը ցույց է տալիս, որ անսպաս է մարդու ինքնարտահայտման պահանջը, որի բավարարման միջոցները քաղվում են նաև ֆոլկորի հարուստ շտեմարանից: Այսօր էլ գյուղերում շարունակում են երգաստեղությամբ գեղարվեստական արձագանք տալ կենցաղային, հանրային, բաղարական այս կամ այն իրադարձություններին: Պատմությունը ցույց է տալիս, որ հետարրորդունը ֆոլկորի նկատմամբ պարբերաբար բռնկվելու հատկություն ունի: Դա առանձնապես տեղի է ունենում այն օրհասական պահերին, երբ ազգային մտածության գլխին կախվում է կորսույան կամ այլ մշակութային երևույթների մեջ տարրագուման վտանգը: Դա պարզապես ֆոլկորի ինքնապահպանման բնազդն է, որ ժամանակ առ ժամանակ արթնանում է նոր ուժով: Իսկ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստը, որն իր ծնունդով պարտական է անցյալի գեղարվեստական ժամանգությանը, հնարավորություն է ստանում կրկին ու կրկին հենակել հարազատ հողին՝ ֆոլկորով սնվելու և նորանալու, ստեղծագործական նոր բափ ստանալու, ազգային ինքնազիտակցությունը պահպանելու նպատակով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Կոլակովսկի Լ. Վ., Կաк собирать и записывать народные песни.*, М., 1962. *Kulakovskij L. V., Как собирать и записывать народные песни.*, М., 1962.
2. *Միհրան Թումածան, Հայրենի երգ ու բան, 1-ին գիրք, Եր., ՀՀ ԳԱ իրատակ, 1972 թ., 2-րդ գիրք Եր., 1983 թ., 3-րդ գիրք, Եր., 1986 թ., 4-րդ գիրք, Եր., Զանգակ, 2005 թ.: Mihran Thumadchan, Hayreni erg u ban, 1-in girq, Yer., HH GA hrat., 1972 th., 2-rd girq, Yer., 1983 th., 3-rd girq, Yer., 1986 th., 4-rd girq, Yer., Zangak, 2005 th.*
3. Հայ ժողովրդական երգեր և նվազներ. «Թանկագին ավանդ» (Իշխան Կարապետյանի ծայնից վերծանեց, կազմեց և խմբագրեց Ա. Ա. Փակելանյանը), Եր., Ամրոց գրութ, 2020 թ.: Hay zhoghovrdakan yerger ev nvagner. “Tankagin avand” (Ishkhan Karapetyani dzaynitz vertsanetz, kazmetz ev khmbagretz A. A. Pahlevanyan’), Yer., Amrotz grup, 2020 th.
4. Հայ ժողովրդական երգեր և նվազներ Ապարան, պրակ I, Եր., Կոմիտաս, 2009 թ.: Նոյն մատենաշարի Ապարան-1948, պրակ VIII, գիրք I, Եր., Ամրոց գրութ, 2013 թ.: Ապարան-1948, պրակ X, գիրք II, Եր., Ամրոց գրութ, 2014 թ.: Բոլոր պրակների կազմող-խմբագիրն է Ա. Ա. Փակելանյանը: Hay zhoghovrdakan yerger ev nvagner. Aparan, prak I, Yer., Komitas, 2009 th. Nuyn matenashari Aparan-1948, prak VIII, girq I, Yer., Amrotz grup, 2013 th., Aparan-1948, prak X, girq II, Yer., Amrotz grup, 2014 th. Bolor prakneri kazmogh khmbagirn ej A. A. Pahlevanyan’.
5. Հայ ժողովրդական երգեր և նվազներ. Ապարան (2000-2001 թթ.), պրակ XII, Եր., Ամրոց գրութ, 2015 թ.: Hay zhoghovrdakan yerger ev nvagner. Aparan, (2000-2001 thth. prak XII, Yer., Amrotz grup, 2015 th.

Քանայի-բառեր. հավաքականության անհետաձգելիությունը, ուսանողական գիտարշավ, մյուրի վերծանություն, ժողովրդական կազմում և հրատարակում:

Ключевые слова: неотложность собирательства фольклора, студенческие экспедиции, расшифровка материала, составление и издание сборников.

Keywords: ethnographic expeditions, student expeditions, deciphering of materials, collection compilation, publishing.

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԺԴՅԱՆԱԿԱՆ ՓՈՂԿՈՐԱԳԻՒՆԻՔԱՆ

Տեղեկություններ հեղինակի մասին. ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ (ծ. 18.10.1936 թ. ք. Երևան): Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտուրյան (1961-ին՝ Ս. Գ. Հարությունյանի դասարանը) և դաշնամուրային (1960-ին՝ Գ. Վ. Սարաջյանի դասարանը) բաժինները, 1967-ին՝ ասպիրանտուրան ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում (պրոֆ.՝ Ն. Կ. Թահմիզյան): Արվեստագիտուրյան բեկմածու (1989 թ.), արվեստի վաստակավոր գործիչ (2008 թ.), պրոֆեսոր (1996 թ.): Դասավանդում է՝ ԵՊԿ-ում 1970-ից, 1992-2018 թթ. ղեկավարել է կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկուրագիտուրյան ամբիոնը: Հեղինակ է՝ 2 մենագրուրյան, 8 մասնագիտական և հանրակրթական դպրոցական դասագրքերի, հայ ժողովրդական երաժշտուրյան շուրջ 10 ժողովածուների, հայ ժողովրդական երգերի մատենաշարի, շուրջ 100 գիտական և հրապարակախոսական հոդվածների՝ նվիրված ազգային ֆոլկուրի և ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի հիմնախնդրներին: Նրա մասին տես՝ էջ 25:

Сведения об авторе: АЛИНА АШОТОВНА ПАХЛЕВАНЯН (род. 18 октября 1936 года в Ереване). Окончила ЕГК по специальностям "Музыковедение" (класс М.Г.Арутюнян, 1961) и "Фортепиано" (класс Г.В.Сараджяна, 1960), затем прошла курс аспирантуры в Институте искусств НАН РА (рук. Н.К.Тагмизян, 1967). Кандидат искусствоведения (1989), засл. деятель искусств РА (2008), профессор ЕГК (1996). Преподает в ЕГК (с 1970 года), руководила кафедрой армянской музыкальной фольклористики (с 1992 по 2018 г.). Автор 2-х монографий, 8-ми учебников, 10-ти сборников армянской народной музыки, около 100 статей, посвященных проблемам национального фольклора и современного профессионального музыкального искусства. См. С. 25.

Information about the author: ALINA ASHOT PALEVANYAN graduated from the Yerevan State Conservatory with a degree in Musicology and Piano. Later she completed postgraduate studies at the Institute of Arts of the NAS of the RA. A. Pahlevanyan is Professor, has Ph. D. in History of Arts, and holds the title of an Honored Art Worker of Armenia. In 1992-2018 she was the Chair at the Department of Armenian Musical Folklore Studies at the YSC. She has written numerous monographs, textbooks, collections of Armenian folk music, articles on national folklore, and contemporary professional music. Go to P. 25.

Резюме

Профессор ЕГК, кандидат искусствоведения **Алина Ашотовна Пахлеванян**. - “Роль собирательской работы в музыкальной фольклористике и в системе образования”.

Статья посвящена 50-летнему юбилею кабинета народного музыкального творчества ЕГК им. Комитаса. В ней, подводя итоги полувековой деятельности студенческих фольклорных экспедиций консерватории, автор обсуждает проблемы безотлагательности собирательства, необходимости приобщения специализирующихся студентов к экспедиционной работе. В результате плодотворной деятельности консерватории в области собирательства уже издано 15 томов серии “Армянские народные песни и наигрыши”.

Summary

Professor of YSC, PhD candidate **Alina Ashot Pahlevanyan**. - “The Importance of Folklore Collecting for Music Ethnography Studies and for the Education System”.

The article is dedicated to the 50th anniversary of the Folk Music Cabinet at Komitas YSC. The paper summarizes the results of student folklore expeditions organized and implemented by Komitas Conservatory during half a century. The author discusses the urgency for folklore collecting works, and find it necessary to introduce the students to expeditionary work. The fruitful activity of the conservatory in the field of folklore collecting resulted in the publication of 15 volumes of the series “Armenian Folk Songs and Tunes”.

**ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

**Երաժշտագետ-ֆոլկլորագետ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: anki.mus@mail.ru**

**ԳՅՈՒՄՐՎԱ ՀԱՅՏԱԿԱՆԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԱՐԺԱՆԻ ՀԵՏԵՎՈՐԴԸ.
ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԱՄԻ ԲՐՈՒՏՅԱՆ
1922-2022 թթ. 100-ամյակին ընդառաջ**



ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ

XIX դարավերջին և XX դարասկզբին Արևելյան Հայաստանի մշակութային կենտրոն հանդիսացող Ակերասներապոլ-Լենինականում (այժմ՝ Գյումրի) ապրում և ստեղծագործում էր Բրուտյանների (Բրուտյան) հայտնի գերդաստանը, որի ուշադրության կենտրոնում էին հատկապես երաժշտությունն ու նկարչությունը: Հիրավի, մեծ է Բրուտյանների գերդ հայ մշակույթի պատմության մեջ, գերդաստանի նահապետը՝ Արշակ Հովհաննեսի Բրուտյանը Գյումրիի հայտնի արվեստագետներից էր՝ երաժիշտ-բանահավաք, խմբավար, նկարիչ, մանկավարդ և երաժտահասարակական գործիչ: Նրա երկու որդիներից Գևորգը նկարիչ էր, բոռներից Ցեցիլիա Գևորգի Բրուտյանը՝ երաժշտագետ (Խ. Արովյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր, գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի հիմնադիր): Մյուս որդին՝ Արամը զինվորական էր՝ ռուսական բանակի սպա, որը 1937 թվականի քառադասոված անմեղ զրիերից է: Վերջինիս զավակները՝ պրոֆեսորներ Մարգոն և Լևոն Բրուտյանները, կոնսերվատորիայի կրթական համակարգի սյուներից էին:

Այսպես, հայ մշակույթի տարրեր բնագավառներում ստեղծագործելու լավագույն ավանդույթները փոխանցվեցին ժառանգներին, որոնցից մեկն էլ Մարգարիտ Արամի Բրուտյանն (1922-2002 թթ.) է՝ ճանաչված ու սիրված ամուն ոչ միայն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, այլև խորհրդային երաժշտագիտության, հատկապես՝ ֆոլկլորագիտության բնագավառում:

Գյումրիցի ծնողներից (Արամ Արշակի Բրուտյան և Գոհար Տիգրանի Չոլախյան) նա ժառանգել էր առաջադեմ մտավորականին բնորոշ առարինություն, բարյական բարձր նկարագիր: Դիմակալելով 1937 թվականի փորձություններին և անհայր մեծանալու ահռելի դժվարություններին (նաև առանց ընտանիքի՝ մայրիկի և եղբոր՝ Լևոնի, որոնց արտորել էին մի քանի տարով՝ խմբ.), հաջողությամբ պարտում է Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը (դաշնամուր), ապա Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պատմահանական բաժինը (1946 թ., այդժեսոր՝ Սերգեյ Վլադիմիրի Կոպտու): Զուգահեռարար աշխատում է ուսումնարանում, այնուհետև՝ կոնսերվատորիայում որպես ասիստենտ՝ կոմպոզիտոր Վարդգետ Գրիգորի Տալյանի դասարանում դասավանդելով պոլիֆոնիա և հարմոնիա:

1955-ին Մ. Բրուտյանը պաշտպանում է թեկնածուական թեզը՝ «Հայ ժողովրդական (գեղօղով) երգի կոմպոզիցիոն առանձնահատկությունները» թեմայով (պրոֆեսոր՝ Քրիստափոր Ստեփանի Քուշնարյան), դրանով իր ամրող կյանքն ու գործունեությունը կապում ազգային երաժշտական մշակույթի հետ: Այս աշխատանքի հիմքով նախ մշակում է ուսումնական ծրագիր, այնուհետև ստեղծում «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասընթացը: Վերջինիս հիման վրա 1971 թվականին հրատարակում է նոյնանուն դասագիրքը, որն առ այսօր իր տեսակի մեջ եղակի ու անփոխարինելի է բուհական ազգային գրականության ցանկում: Դասագիրքը վերահրատարակվել է երեք անգամ և վաղուց դասանողների և մասնագետների սեղանի գիրքը (նպատակ կար շարունակելու 2-րդ մասը՝ նվիրված (աշուղական և քաղաքական

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝
20.3.2021 թ. և նոյնամբ տպագրությամ՝ 21.3.2021 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 3.3.2021 թ.

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՈՒԱԿԱՆ ՖՈՆԿԼՈՐԱԳԻՍՏՆԻՔԱՆ

յին երաժշտական արվեստի հարցերին):

Հասկանալի է, որ սրանով նա չի բավարարվել: Այսօր դժվար է պատկերացնել Կոմիտասի անոնք կրող ուսումնական հաստատությունն առանց այն ազգային օրակի, որի հիմնադիրը եղավ Մարգարիտ Բրուտյանը: Այսպես 1969 թվականին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակի օրերին նա մեծ ջանքեր ներդրեց՝ հիմնելու ազգային փորձի Կարինես (ամբողջական անոնք՝ Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կարինեսու), որն ի դեպ, 2003-ից պաշտոնավես կրում է իր հիմնադիր անոնքը (հավերժագված է հուշատախտակով): Բայց սա էլ բավական չէր անհանգիստ երաժշտագետի բոլոր մտահացումները իրականացնելու համար. նա մտածում էր ֆոլկորի ամրին ստեղծելու մասին: Նրան հաճգիստ չէր տալիս այն «տիհաճ» փաստը, որ Կոմիտասի երազած բուհում բազմատեսակ ամրինների շարքում բացակայում է ամենակարևորը՝ ազգայինը: Վերջապես, 1989-ին Կարինեսը վերամեց «Հայ երաժշտական ֆոլկորագիտության» ամրինի: Այսպիսվել, կոնսերվատորիայի կրթական համակարգում դրվեց ազգային համալիր կրթության ամուր և զիտական հիմքը:

Մ. Ա. Բրուտյանի կողմից մշակված գործունեության շրջանակներն ընդգրկում էին՝

ա) ազգային դասընթացների դասավանդումը,

բ) ժողովրդական երգերի հավաքման զիտարշավները Հայաստանի տարբեր շրջաններում և նրա սահմաններից դուրս,

գ) երգերի նոտագրումն ու ժողովածուների հրատարակումը:

Շուրջ բառորդ դար անընդեջ դեկավարելով կարինետի բազմաբնույթ աշխատանքներն ու ուսումնական գործներացը, հետազայում նաև ամրինի վարիչի և զիտական դեկավարի պարտականությունների շրջանակներում՝ Բրուտյանն ընդլայնեց թե՛ ամրինի կազմը, և թե՛ դասավանդվող առարկայական դասընթացների ցանկը* համալիր ազգային կրթություն ստանալու հրակայական հնարավորություններ ընձեռելով երաժշտուածուությանը:

Նրանցից շատերն ավարտեցին Մ. Ա. Բրուտյանի մասնագիտական դասարանը՝ իրքն ֆոլկորագետներ և շարունակում են գործել իրենց ուսուցիչ ծավալուն գործունեությամ այս կամ այն ոլորտում: Իր սամերի նկատմամբ խստապահեց** էր, միաժամանակ մարդկային, շատ ջերմ: Շատերի համար նա ոչ միայն դեկավար էր, այլև հոգևոր ուսուցիչ: նա ունակ էր յուրաքանչյուրին հասկանալու անհատավես, հնարավորության դեպքում օգնել ինչով կարող էր՝ խոսրով կամ գործով: Մտահոգում էր նրանց կյանքով, ուրախանում հաջո-

ղորժութներով, զիտեր՝ ով որտեղ է աշխատում, ինչով է զրաղված, ինչ հոգսեր ունի: Նման հոգատարությունը նա ժառանգել էր իր սիրելի ուսուցչից՝ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետրուպոլի) կոնսերվատորիայի պրոֆեսոր Թրիստանիոր Ստեփանի Քուշնարյանից, որի նկատմամբ տածում էր մեծագույն հարզանքի, ակնածանքի ու երախտագիտության զգացումները: Ինքն էլ իր հերթին մասնավարժական երկար ու ձիգ տարիների ընթացքում կիրառում էր այն ամենը, ինչ սովորել ու վերցրել էր իր մեծերից: Մեր գրուցներից մեկի ժամանակ նա խոսուվանեց: «Եթե ես կարողացել եմ գոնե իմ մեկ աշակերտին վերաբերվել այնպես, ինչպես իմ լավագույն ուսուցիչներն են վերաբերվել ինձ, ապա դա կիամարեմ նրանցից ժառանգած հատկանիշի փոխանցում»:

Մանկավարժ Բրուտյանը մշտապես ներդաշնակության մեջ էր զիտնական և երաժշտահասարակական գործիչ Բրուտյանի հետ (թեև, ցավոք, առանց որևէ պաշտոնական կոչման): «Գիտելիք» ընկերության զիտամեթոդական սելցիայի նախազահ (1960-1975 թթ.), Հայֆիհարմոնիայի «Դպրոցականի ֆիլհարմոնիա»-ի գեկուցում-համերգաշարերի կազմակերպիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության ֆուլկորային հանձնաժողովի նախազահ (1972-1992 թթ.), կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան (1977-1981 թթ.), Հայաստանում մի շարք միջազգային զիտաժողովների և ֆուլկորային համերգների կազմակերպիչ և զիտական դեկավար՝ սա ոչ ամրողական ընդգրկումն է նրա բազմականի գործունեության: Գիտնականը սեղանին է դրել բազմաթիվ մենագրություններ***, կազմել ձայնագրայ ժողովածուներ, արձարձել երաժշտատեսական հարցեր, հանդես եկել գրախոսություններով, զիտական ելույթներով, զիտական և հրապարակախոսական հոդվածներով և այլն: Այս ցանկում ուրույն տեղ են զրադեցնում նրա կողմից արված մասնագիտական լուրջ թարգմանությունները****:

1982 թվականին, մանկավարժական գործունեության համար Բրուտյանն ստացել է պրոֆեսորի զիտական կոչում, իսկ 1995-ից՝ եղել է կոնսերվատորիայի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՌՀ) երկու փորձագետներից մեկը:

Երկար տարիներ Մ. Ա. Բրուտյանը փայփայում էր ֆոլկորի ինստիտուտ ստեղծելու մեջ ու բաղդայի երազանքը շատ իրավասու պաշտոնական երգերի դռներ է թակել, սակայն խորհրդային տարիներին նման երազանքն իրոք երազանք էր: Այօր նա շատ երշանիկ կլիներ՝ տեսնելով Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գոյությունն ու գործունեությունը՝ ըստ էության նա հենց սրս՝ մասին էր երազում:

*** «Թարթու Ավթոնյան», Եր., 1962 թ., «Ստեփան Դեմորյան», Եր., 1969 թ., «Վարդգես Տալյան», Եր., 1978 թ., «Հակոբ Աստուրյան-սիյուռքահայ գրողն ու երաժիշտը», Եր., 1999 թ.:

**** Ի. Դորովսկի, Ս. Եվլեն, Ի. Սպասրին, Վ. Սոլոյուլ «Հարմոնիայի դասագիրը»: Թարգմանությունը ուստեղնից՝ Մ. Բրուտյանի: Եր., 1966 թ., 2-րդ հրատ., 1978 թ.: Թրիստանիոր Քուշնարյան «Հայ մնոնդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր»: Լ-դ, 1958 թ., բարգմանությունը ուստեղնից՝ Մ. Բրուտյանի, խմբ.՝ Ա. Բաղդասարյան, Եր., 2008 թ.:

* «Ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Ֆոլկլոր», «Աշուղական արվեստ», «Հոգևոր երաժշտություն», «Հայ միջնադարյան երաժշտություն», «Արևելքի դասական երաժշտության իմանություն», «Հայկական նոտագրություն», «Երգերի և նվազների վերձանություն»:

** Մ. Ա. Բրուտյանի մանկավարժական խստապահնչության «զին» է դարձել նաև իր հարզագան եղբայրը՝ կյանքնետահար (հնարավայր պրոֆեսոր) Լսն Արամի Բրուտյանը՝ կոնսերվատորիայում ուսանելու տարիներին:

ա մ բ ի ն ն ի 5 0 - ա մ յ ա (2 0 1 9 թ .) գ ո ր ծ ո ւ ն ե ռ ո ւ թ յ ա ն ը

Անկասկած, Մարզո Բրուտյանի տեսակը նախաձեռնող, նպատակներին հետամուտ, մի խորով՝ գործի մարդու տեսակն էր, և այդպես՝ ամբողջ կյանքում: Ստեղծեց, կազմակերպեց, ղեկավարեց, ուսուցանեց ու փոխանցեց... Վերջին տարիներին ասում էր. «Արդեն կարող են հանգիստ լինել՝ իմքը դրված է, շարունակողները դուք եք»: Փոքրամարմին, բայց մեծ եռանդի տեր կմոց՝ լորջ գիտնականի աշխատասիրույթունը հասնում էր ծայրահեղության (հաճախ սենթելն էր մոռանում): Հերթական զրի վրա լարված աշխատանքն ու իիվանդությունը, ցավոր, զամեցին նրան անկողնուն, սակայն իր գործի մեջ նա անզիջում էր. ֆիզիկապես տկար, բայց միտքը պայծառ, իշխողությունը տեղը՝ նա շարունակեց մտովի աշխատել (գրանելու հարցում, իհարկե, օգնության կարիք ուներ): Արդյունքում հրատարակեցին մի շարք անավարտ աշխատություններ, այդ թվում իր տաղանդաշատ պասպիկի՝ Արշակ Բրուտյանի «Ը-ամկական մրմունցներ» ձայնագրյալ ժողովածուի երկրորդ հատորը (առաջին հատորը հրատարակել էր դեռևս 1984-ին) և այլ աշխատություններ*:

Հատկապես կյանքի վերջին՝ իիվանդությամբ անցկացրած տարիներին հաճախ էր կիսվում, հետաքրքիր դեպքեր պատմում իր կյանքից, երբեմն զարմանալիունն անկեղծանում էր ու պատմում խիստ անձնական իշխողություններ, զավեշտական դեպքեր իր բազմաթիվ ճամփորդություններից... Գիտեր, որ իր մասին զիրը եմ գրում (2.), թվում էր՝ թե չի ուզում, բայց ներքոստ ուրախ էր, որ իր արած գործն ինչ որ չափով կուսարանվի: Իր իսկ հորդորով և տրամադրված որոշ արիմիվային նյութերի իմքով, տողերին հեղինակը շարունակեց իր ուսուցչի սկսած աշխատանքը՝ նվիրված ժողովրդական նվազարանային կատարողական արվեստին (3.):

* «Քրիստափոր Քոչնարյան – Հողվածներ և ուսումնասիրություններ, կարծիքներ, հուշեր»: Եր., 2003:

Բրուտյան Մ., Հայ քաղաքացին ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր., 2001:

Ուզում եմ անպայման ակելացնել, որ Մարզո Արամի Բրուտյանն ուրախ անձնավորություն էր: Ամեն առիթով սիրում էր բոլորին հավաքել իր շորջը, կյուրասիրել: Իր մայրիկից ժառանգած զյումրեցու «հիվանդագին» կյուրասիրությունը փոխանցվել էր նաև իրեն, իրենից էլ՝ զավակներին (Պետրոս և Արմինե): Մարզո Արամովնայի և նրա կյանքի հավատարիմ ընկերոց՝ Հայաստանի արդյունաբերության բնագավառի ղեկավար, առաջատար մասնագետ, հմտություններուն հայացած միշտ կյուրընկալ էր. ոչ որ դուրս չէր զա այդ տաճից՝ առանց սեղանի աղն ու հացը կիսելու:

Արդեն երկար տարիներ մեզ հետ չէ մեր սիրելի ուսուցիչը... Ժամանակն առաջ է զնում, բայց մենք շարունակում ենք կարտուկ ու փնտրել նրան, ուզում ենք լսել նրա մասնագիտական ու մայրական խորհուրդները, հետաքրքիր մտքերը, տեսնել նրա բարի ժային ու սեղուն հայացը: Կարծում եմ դեռ երկար պետք է զզանք նրա կարիքը: Թեպես խորագիտությամբ ու հետաստորեն նա դասավանդեց ու պատրաստեց հետորդներ, իր գործը շարունակող նվիրված մասնագետներ, այնուանձնայինվ. Իր տեղն այդ բնագավառում «մնաց թափուր»:

ՇԱՆՈԹ-ԱԳ-ՐՈՒԹ-ՅՈՒՆ

1. Բրուտյան Մ. Ա., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն. Գեղջկական երգ, մաս 1, Եր., 1971, 1983, 2004, 2014 թթ.: Brutyan M. A., Hay zhoghovrdakan yerazhshtakan steghtsagortsuthyun. Geghjakan erg, mas 1., Yer., 1971, 1983, 2004, 2014 thth.
2. Կիրակոսյան Ա. Ա., Մարգարիտ Արամի Բրուտյան - Կենսամատնագրություն, Եր., 2007 թ.: Kirakosyan A. A., Margarit Aramii Brutyan, Kensamatenagritutyun, Yer., 2007 th.
3. Կիրակոսյան Ա. Ա., Հայ ժողովրդական նվազարանային կատարութական արվեստ, Եր., 2011 թ.: Kirakosyan A. A., Hay zhoghovrdakan nvagararanayin kataroghakan arvest, Yer., 20011 th.

Քանայի-բառեր. երաժշտագետ-ֆոլկլորագետ, պրոֆեսոր Մարզուրիտ Բրուտյան, Արշակ Բրուտյան, Գյումրի, Ալեքսանդրոպոլի, Լենինական, Քոչնարյան, Ժողովրդական ստեղծագործության կարիքնետ, դասընթաց, դասագիրք, գիտարշավ, մենագործություն, բարգմանություն, «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության» ամբիոն, ազգային համային կորույտն, Անահիտ Կիրակոսյան:

Ключевые слова: музыковед-фольклорист, профессор Маргарит Брутян, Аршак Брутян, Гюмри, Александрапол, Ленинакан, Кушнарев, кабинет народного творчества, дисциплина, учебник, экспедиция, монография, перевод, кафедра "Армянской музыкальной фольклористики", национальное комплексное обучение, Анаит Киракосян.

Keywords: ethnomusicologist, Margarit Brutyan, Arshak Brutyan, Gyumri, Alexandrapol, Leninakan, Kushnarev, Folk Music Cabinet, "Department of Armenian Ethnomusicology", comprehensive national education, Anahit Kirakosyan.

Տեղեկություններ հեղինակի մասին. Կիրակոսյան Անահիտ Արտսվազյան, (ծ. 1953, Երևան) երաժշտագետ, ֆոլկլորագետ, ԵՊՀ դրույնու, ավարտել է Երևանի Կոմիտասի ամփակ ամփական պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում՝ «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Կատարողական արվեստ», Մասնագիտական ֆոլկլորագիտության դասարան է վարում, դոցենտ: Հեղինակը է գրեթե՝ «Հրամի Սպահանի շրջանի Փերիա գավառի ժողովրդական և աշուղական երգերի ընտրանի» (ձայնագրյալ ժողովածու), «Դրազպեկ» իրատ., Փասադենա (ԱՄՆ), 1996, 69 էջ: «Հովհաննես Դարբինյան – Խմբավարներ» իրատ., Ամրոց, 2000 թ., -55 էջ: «Մարգարիտ Բրուտյան - Կենսամատնագրություն», Եր., Ամրոց գրուպ, 2007 թ., -71 էջ: «Հայ դրազպեկանացներ», /«Դուլուկը», Եր. 2007, էջեր 25-59: «Արքաս Ուկանյան – Մանկավարժը և հայ երգեցության դպրոցը», Եր., Անահիտ. 2008 թ., - 117 էջ: «Հայ դրազպեկանացներ» (համահեղինակ՝ Ա. Բաղդասարյան), Եր., Կոմիտաս, 2008 թ., (հայերեն, ուստիերեն, անգլերեն), էջեր 36-76, «Հայ ժողովրդական

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԺԴՅԱԿԱՆ ՖՈՂԿՈՐԱԳԻՒԹՈՒՅՆ

After centuries of being passed on by oral tradition, the Mekhitarist traditional chanting was transcribed by Fr. Ghevond Talyan in the middle of the XX century. With the seven volumes of this Sharaknoc (Hymnary), the greater part of canonic sharakans (Hymns) have reached us, as well as some newly composed sharakans, which are specific for the region. Nevertheless, in practice we see that sacred music, even after being transcribed, continues being passed on via oral tradition. In my paper, I present a comparison of the Sharaknoc materials and the contemporary performances of spiritual music.

ՆՈՒՆԵ ՌԱՄԵԿԻ ԱԹԱՆԱԶԱՆ

Արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail. nune.atanasyan@gmail.com

ՍԱՐԺԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի 50-ամյա հորելյանին զուգնքաց լույս տեսալ տողերիս հեղինակի մենագրությունը՝ նվիրված Ստեփան Դեմորյանի ստեղծագործությունը: Ուստումնասիրությունը երկարամյա աշխատանքի արդյունք է, որոնք սկսվեցին վաստակաշատ երաժշտական, ֆոլկլորագետ, Հայ երաժշտական ստեղծագործության կարինետի (հետազոտության վերանված Հայ երաժշտության ֆոլկլորագիտության ամբիոնի) հիմնադիր, պրոֆեսոր Մարգարիտ Բրուտյանի հանձնարարություն-առաջարկից: 1999 թ., հանձնելով ինձ Ս. Դեմորյանի ժողովրդական երգերի անտիպ ժողովածուն՝ Մարգու Արամովնան ասաց, որ այս նյութին չեղացրեց անդրադառնալ և խնդրեց հանձն առնել ժողովածուի ուսումնասիրնան, խմբագրական և երաժարակության պատրաստելու աշխատանքները: Աշխատանքները խիստ ոգևորիչ էին, հասկապես՝ ծանրությունը Ս. Դեմորյանի արխիվային նյութերին, որոնք գտնվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Արդյունքում, լույս տեսավ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի նախաձեռնած «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի IX հատորով երաժարակված՝ Ս. Դեմորյանի վերոհիշյալ անտիպ ժողովածուն (2013 թ.), մի շաբաթ հոդվածներ՝ նվիրված նրա գործունեության տարրեր բնագավառներին, ինչպես նաև ներկայացվող մենագրությունը՝ հիմնաված թեկնածուական ատենախոսության վրա:

Գիրքը երաժարակվել է ամբիոնի հավատարիմ բարեկամ «Ամրոց զրուա» երաժարակշուրջունում, որի հետ մեր համագործակցությունն արդեն տասնյակ տարիների փորձ ունի և որի արդյունքում երաժարակվել են «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի VIII/XIII հատորները (2013-2015 թթ., երկուական հատոր յուրաքանչյուր տարվա ընթացքում), ինչպես նաև Մարգարիտ Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» դասագրի նոր՝ չորրորդ երաժարակությունը (2014 թ.), Ալինա Փակիսանյանի «Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի խնդիրները» (2018 թ.), «Հայ երաժշտական ֆոլկլորի ուժամիկայի առանձնահատկությունները» (2014 թ.), Անահիտ Կիրակոսյանի «Մարգարիտ Բրուտյան» (2007 թ.), Անահիտ Բաղդասարյանի «Հայկական նոտագրության ձեռնարկ» (2010 թ.), Նունե Արանայանի «Ձեռնարկ հայ հոգևոր երաժշտության» (2017 թ.) և մի շաբաթ այլ ուսումնամեթոդական և գիտական երաժարակություններ:

Մեր երաժարակած մենագրությունը ներկայացնում է XIX դարավերջի և XX դարասկզբի նշանավոր գործիչ, երաժշտագետ, բանահավաք-ազգագրական, մանկավարժ, խմբագործ, կոմպոզիտոր, վաստակավոր ուսուցիչ Ստեփան Դեմորյանի կյանքն ու ստեղծագործությունը: Աշխատանքի հիմնական նպատակն է՝ դիտարկել նրա գործունեությունը հայ երաժշտական ֆոլկլորագիտության գարզացման համատեքստում:

Երաժշտական ֆոլկլորագիտության հիմքում ընկած ժողովրդական ստեղծագործության հավաքման, ուսումնասիրման գործընթացը սկիզբ առավ ԽIX դարի ուրատնական թվականներին և նոր թափ ստացավ XX դարում: Այդ ընագավառում մեծ գործունեություն են ծավալել՝ Քրիստովոր Կարա-Մուրզան, Գենարի և

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի
18.3.2021 թ. և ընդունվել տպագրության՝ 20.3.2021 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 10.3.2021 թ.

ՆՎԻՐԱՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՉՄԱԿԱՆ ՓՈԼԿՈՆՐԱԳԻՄՆԻՑՅԱՆ

Քարսեղ (Վասիլի) Ղորղանյանները, Նիկողայոս Տիգրանյանը, Մակար Եկմալյանը, Սահակ Ամատոնին, Արշակ Բրուտյանը, Սպիրիդոն Մելիքյանը: Առանձնահատուկ նշանակություն ունեցավ Կոմիտաս Վարդապետի մեջ վաստակը ժողովրդական երաժշտական նմուշների հավաքման, ուսումնասիրման ու մշակման գործում:

Այդ ժամանակաշրջանի գործիչների շարրում վաստահարար կարող ենք նշել նաև Ստեփան Դեմուրյանի անոնք, որը երկար տարիներ աշխատելով Անդրկովկասի հայարձակ տարրերու վայրերում որպես երաժշտության ուսուցիչ և խմբավար, կրթական և համերգային մեծ գործունեություն է ծավալել:

Ստեփան Դեմուրյանն ըստ էության Կոմիտասի ժամանակակիցն է, ծննդել է 1872 թ. Թիֆլիսում, ձկնորսի ընտանիքում: Մոր ջանքերով 1883 թվականին ընդունվել է Ներսիսյան դպրոց, 1892-ին մեկ տարի սովորել է Մակար Եկմալյանի դասարանում:

Այդ ժամանակաշրջանի համար Դեմուրյանը բավական լուրջ երաժշտական կրթություն է ստացել, քանի որ ուսումն շարունակել է Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայում, որտեղ մոտ երեք տարի երաժշտական տեսական առարկաներ և վոկալի դասեր է առել Ստանիսլավ Գաբելի դասարանում: Մասնավոր կարգով զրադակել է նաև կոմպոզիցիայով, ի դեպ, այդ դասերի ծախսը հոգացել է Ալեքսանդր Սպենդիարյանը:

Մակայն, ուսումը կիսատ թողնելով, Դեմուրյանը ստիպված վերադարձել է Թիֆլիս և սկսել իր բազմակողմանի գործունեությունը: Իրոք երգ-երաժշտության դասառու և խմբավար, Դեմուրյանը 1895 թվականից աշխատել է Թիֆլիսում, Շուշիի թեմական և Մարիամյան դպրոցներում, Ռուսաստանի, Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի զանազան քաղաքներում և վերջապես՝ Երևանի Արովյանի և Մյասնիկյանի անվան դպրոցներում (1926-ից մինչև իր վախճանը՝ 1934 թ.):

Մանկավարժական, համերգային և ստեղծագործական աշխատանքներին զուգահեռ Դեմուրյանը ծավալել է նաև բամահավաքական գործունեություն: Նա ժողովրդական երգեր գրառել է ամենուր բոլոր այն վայրերում, որ մեկնել է աշխատանքի բերումով: Այդ հավաքված նյութերն առավել արժեքավոր են այն իմաստով, որ XX դարասկզբին դեռևս հնարավոր էր լիարժեք պատկերացում կազմել Հայաստանի հեռավոր շրջաններում և զավառներում կենցաղավարող ժողովրդական երգերի մասին: Դեմուրյան-բանահավարի վաստակն առավել արժենորում է 1907 թ. հրատարակված «Քնար» ձայնագրյալ երգարանը, որը եվրոպական նոտաներով տպագրված առաջին ազգային երգերի ժողովածուներում:

Դեմուրյանի կյանքին ու գործունեությանն անդրադարձել է երաժշտագետ Ռուբեն Թերլեմեզյանը, ով 1934 թ. «Սովետական Արվեստ» պարբերականի առաջին համարում հանդես է եկել Դեմուրյանի հիշատակին նվիրված ծավալուն հոդվածով, որտեղ ներկայացրել է մեծ մանկավարժի և արվեստագետի կյանքն ու գործունեությունը:

Դեմուրյանի մասին հաջորդ և առաջնային տեղ գրադարձությունը 1969 թվականին գրել է

Մարգարիտ Բրուտյանը: Այդ գրքով կազմված է արխիվային նյութերի և, ինչն ավելի կարևոր է, ժամանակակիցների և հատկապես, Ստեփան Դեմուրյանի դրստեր՝ Թամարա Դեմուրյանի հողակիցների հիման վրա:

Հետազոտում, մասնություն համեմատող հողվածները հիմնվում են Թերլեմեզյանի և Բրուտյանի աշխատանքներում գետեղված տեղեկությունների վրա:

1999 թվականից սկսած մեր հետազոտություններն իրականացվել են Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպող Դեմուրյանի արխիվում և Հայաստանի ազգային արխիվում: Հետազոտության արդյունքում համոզվեցինք, որ Դեմուրյանի երաժշտագիտական, բանահավաքչական և ստեղծագործական գործունեությունը հանդիրավի մնացել է ստվերում՝ իրատարակված չիմեկու պատճառով: Ուստի հանձն առանք կատարել այս աշխատանքը և լայն հասարակությանը ներկայացնել այդ անխոնջ արվեստագետի գործունեության ամբողջ ծավալը, վերականգնել նրա դերն ու նշանակությունը, կշռն ու վաստակը հայ երաժշտական մշակույթի զարգացման գործում:

Դեմուրյանի գործունեությունը համակարգում է՝ հայ մշակույթի պահպանման և զարգացման իր պատկերացումներն ու ազգային մուածողության դիրքորոշումները, որոնք հիմնված են ժողովրդական երգը վրկելու, պահպանելու և տարածելու ազգանկեր զարափարների վրա:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել Ստեփան Դեմուրյանի գործունեության ամբողջական պատկերը՝ առավել ուշադրություն սևեռելով նրա բանահավաքչական աշխատանքներին: Մենագրություններ կազմելիս՝ կարևորել ենք հետևյալ խնդիրները.

• Ներկայացնել Դեմուրյանի գործունեությունը ժամանակի համատերսուում:

• Արխիվային նյութերի և իրատարակված աշխատանքների հիմնա վրա, դուրս բերելու ամրողացնելու հայ ժողովրդական երգերի տարրերականների մի շարք բնդիհանրություններ, առանձնահատկություններ, որոնք պարբերաբար հանդիպում ենք տարբեր տարածաշրջանների և ժամանակաշրջանների սահմաններում:

• Դիմնվելով արխիվային նյութերի վրա, գիտական շրջանառության մեջ դնել Դեմուրյանի հավաքած ժողովրդական երգերը, բազմաթիվ խաղիկները և երգերի տեքստերը, ներկայացնել դեռևս անհայտ, մեծ քանակության երաժշտական նյութը և բերել դրանց վերլուծությունը:

• Անդրադարձուակ Դեմուրյանի արխիվում պահպանված երաժշտագիտական հողվածների լուսաբանմանը՝ ներկայացնելով նրա աշխատանքների ամրողացնելու հավաքածուում:

Մենագրությունը կազմված է առաջարանից, չորս գլխից, եղակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Որպես հավելված ներկայացրել ենք 2013 թվականին մեր խմբագրությամբ և ծանոթագրությամբ հրատարակված Ստեփան Դեմուրյանի «Հայ

ա մ բ ի ն ն ի 50 - ա մ յ ա (2019 թ.) գ ո ր ծ ո ւ ն ե ռ ո ւ թ յ ա ն ը

ժողովրդական երգեր» և Արար Սարյանի կազմած «Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր» ժողովածուներից ընտրված մի քանի երգ, որոնք Ս. Դեմուրյանի աշխատանքի մասին ընթերցողին առավել պատկերավոր իմացություն կտան:

Առաջին գլխում ներկայացվում է XIX դարի ընթացքում ձևավորվող հետաքրքրությունը ժողովրդական ստեղծագործության հանդես, ինչը պայմանավորված էր ազգային ինքնազիտակցության վերելքով և հայ ժողովրդական երգի կարևորմամբ: Ներկայացված են պատմական Հայաստանի տարրեր վայրերում այդ բնագավառում կատարված բանահավաքչական և հրատարակական աշխատանքները:

Այդ ժամանակաշրջանում հանդես եկած երաժշտագետները նպատակատրված գործունեություն են ծավալել հայ ժողովրդական երաժշտական մշակույթի հարցերի ուսումնաիրման ասպարեզում: Այսպիսով, այս գլխում ներկայացված է այն ուղին, որ անցել է հայ երաժշտական ֆոլկորազիտությունն իր առաջին քայլերից մինչև համակարգված գիտություն ձևավորելու ժամանակաշրջանը:

Երկրորդ գլխում ներկայացված է Ստեփան Դեմուրյանի ստեղծագործական դիմանկարը: Կարևոր տեղ է հատկացվել նրա երաժշտագիտական հոդվածներին: Արխիվում պահպանված մեծ քանակությամբ հոդվածները և թարգմանությունները, վկայում են Դեմուրյանի մասին որպես նախանձախնդիր և հետևողական երաժիշտ-տեսաբանի: Նրա աշխատություններից նշենք հոդվածներ՝ ուսու և արևմտաելորպական կոմպոզիտորների մասին, արևելյան գործիքներին, պարսկական մուղամներին, հնդկական երաժշտությանը, հայ ժողովրդական և հոգևոր երգերին նվիրված: Հանդիպում ենք հոդվածներ՝ Նիկողայոս Թաշճանի, Տիգրան Չուխանյանի, Արիստակես Հովհաննեսյանի, Եղյա Տնտեսյանի, Քրիստովոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտաս Վարդապետի մասին: Այս հոդվածներն արժանի են ավելի հանգամանալից ուսումնասիրման, քանի որ XX դարակարգի՝ երաժշտագիտության և երաժշտական հրապարակախոսության բնագավառում կատարած առաջին փորձերից են: Այդ ժամանակաշրջանի երաժշտական պատմատեսական մտքի ամեն մի փորձ ունի իր ճամաչողական, պատմական արժեքը, իսկ որոշ դեպքում նաև հիմնարարային նշանակություն՝ հայկական կրթության հիմնահարցերի կանոնակարգման և համակարգման գործում:

Աշխատության երրորդ գլխում անդրադարձել ենք Դեմուրյանի բանահավաքչական գործունեությանը: Արխիվային նյութերին ծանոթանալով՝ վստահ կարող ենք ասել, որ ժողովրդական երգերը միշտ հետաքրքրել են նրան: ձեռագրերում ամենուր գետեղված են ժողովրդական երգերի գրառումներ՝ հայկական և ելորպական նոտագրությամբ, երգերի բանաստեղծական տեքստեր և մեծ բանակությամբ խաղիկներ: Դպրոցական ծրագրերում ներառված երաժշտական նյութը նույնպես կազմված է ժողովրդական երգերի նմուշներից, որոնք հատուկ ընտրվել են դասավանդման համար:

Այս բաժնում, անդրադարձել ենք եվրոպական նո-

տագրությամբ գրանցված և հրատարակված վերոնշյալ «Քնար» ժողովածուին: Ինչպես նշեցինք, դրանից առաջ, ժողովրդական երգերը հրատարակվում էին միայն բանաստեղծական տեքստով, կամ էլ հայկական ձայնանիշերով: Դրանցից, իհշենք Արշակ Բրուտյանի «Հայ ժողովրդական երգեր, պարեր և պարեղանակլներ» ժողովածուն (կազմվել է 1895 թ.), Սահակ Ամատունու «Ծողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածուն» (կազմվել է 1884 թ.) և Կոմիտասի «Ծար Ակնայ ժողովրդական երգեր» ժողովածուն, որը հրատարակվել է 1895 թ.: Նույնպես հայկական նոտագրությամբ:

Այս գլխում դիտարկել ենք նաև 2010 թ. Արար Սարյանի կազմած «Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր» ժողովածուն, որտեղ զետեղված երգերից 27-ի գրառումները պատկանում են Ստեփան Դեմուրյանին:

Վերջապես, անդրադարձել ենք 2013 թվականին մեր կողմից հրատարակված Ստեփան Դեմուրյանի երկրորդ «Հայ ժողովրդական երգեր» ժողովածուին, որը XIX դարակերջի և XX դարի սկզբի ժամանակաշրջանում կազմված մեր երաժշտության պատմության ամհայտ էջերից է: Մենք հայուրամյակ անց այս երգերը ոչ միայն չեն կորցրել իրենց հմայքը, այլև մեծ ճանաչողական ու գեղարվեստական արժեք են ներկայացնում: Դրանք հայ ժողովրդական երգերի գանձարանն անշուշտ, զգալիորեն կիարստացնեն հիանալի նորահայտ նմուշներով:

Չորրորդ գլխում ներկայացված է կատարված վերլուծական աշխատանքը, որտեղ համեմատվել և դիտարկվել են Ստեփան Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած այն ժողովրդական երգերը, որոնք տարրերակներ ունեն Կոմիտասի, Սահակ Ամատունու, Արշակ Բրուտյանի, Հակոբ Հարությունյանի, Սպիրիդոն Սելիքյանի, Ալինա Փակելսանյանի ձայնագրած ժողովրդական երգերի ժողովածուներում: Հետազոտման համար ընտրված ժողովածուները պայմանավորված են նրանով, որ ներկայացնում են XIX դարակերջի և XX դարի սկզբի ժողովրդական երաժշտական ավանդույթը: Իսկ մեր դիտարկումները կօգնեն առաջին հերթին ծանոթանալ ժողովրդական առաջական կայուն և հարատ տիպական երգատեսակներին: Այս գլխում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների եղանակը հիմնված է հայ երաժշտական ֆոլկորազիտության մեջ կիրառվող մեթոդարանության վրա:

Հայ ֆոլկորազիտության պատմության մեջ դեռևս կան անհայտ կամ թիվ ուսումնասիրված էջեր, որոնց բացահայտումը կարևոր է խաղում հայ երաժշտական մշակույթի համակողմանի ննկալման և զնահատման համար:

Դեմուրյանի՝ մինչ այժմ թերի ուսումնասիրված բանահավաքչական գործունեության դիտարկումները մեծապես նպաստում են հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության բնութագրի ամբողջականացմանը:

Ստեփան Դեմուրյանի վաստակն ըստ արժանվույն զնահատելով և բացահայտելով նրա ստեղծագործության ամբողջ ծավալը, վստահորեն կարող ենք ասել, որ նա իր ուրույն տեղին ունի հայ երաժշտական մշակույթի աշխատանկան երգերի գրառումներում ներառված երաժշտական նյութը:

Ն Ա Խ Ի Ռ Ա Վ Ո Ւ Մ Է Ե Պ Կ Հ Ա Յ Ե Ր Ա Ժ Չ Մ Ա Կ Ա Ա Ֆ Ո Լ Կ Լ Ո Ր Ա Գ Հ Ա Մ Ն Ի Բ Ա Յ Ա Ա

թի երախտավորների շարքում, իսկ նրա բանահավարչական գործունեությունը ներկայացնում է հայ երաժշտական ֆոլկորագիտուրյան պատմության արժեքավոր էջերից մեկը:

2020 թ. երատարակված մենագրությունն ընդգրկվելով Հայ երաժշտական ֆոլկորագիտուրյան ամրիննի հրատարակությունների շարքում, հնարավորություն կտա երաժշտներին, ինչպես նաև երաժշտասեր ինքնուրին՝ ծանոթանացու Ստեփան Դեմուրյանի գործունեությանն ու հատկապես նրա ֆոլկորագիտական աշխատանքներին, կօգնի անդրադառնալ ֆոլկորագիտուրյան խնդիրների ուսումնասիրմանը վերաբերող հետազ հարցերին:

Նախատեսվում են նաև հետազ ուսումնասիրություններ, որոնք կրկին հիմնվելով Դեմուրյանի արխիվային նյութերի վրա, կրացահայտեն այս երախտավորի երաժշտագիտական, ուսումնական, գիտական, թարգմանչական գործունեության ամրող ձևավար:

Քանայի-քառեր. ֆոլկորագիտուրյուն, ժողովրդական երգ, Ստեփան Դեմուրյան, Կոմիտաս Վարդապետ, Սարգսարիս Բրուտյան:

Ключевые слова: фольклористика, народная песня, Степан Демурян, Комитас Варданет, Маргарит Брутян.

Keywords: ethnomusicology, folk song, Stepan Demuryan, Komitas Vardapet, Margarit Brutyam.

Տեղեկություններ եղենակի մասին. Աթլանտական ԱՊՄՆԱՍՅԱՆ ՆՈՒԽՆԵ ՈՈՒՏԵՈՅՑԻ (1967 թ. թ. Երևան): Ավարտել է՝ 1990 թ. ԵՊԿ-ի երաժշտագիտուրյան բաժինը (դեկ.՝ պրոֆ. Մ. Գ. Հրատյանյան): 1993-ից առ այսօր աշխատում է ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկորագիտուրյան ամրիննում՝ դասախոսությունը և «Նոր հայկական նույնուրույնություն» դասընթացները նաև 2001-ից առ այսօր՝ ԵՊԿ երաժշտուրյան անստորական ամբիոնի դասախոսությունը և «Հրատապահություն» դասընթացները: 2000-ից «Հայաստանի պետական կանոնադրության երգախմբի անդամանություն» դասախոսությունը և «Նոր հայկական նույնուրույնություն» դասընթացները: 2008-ից «Հայ Ասպետ» հեռուստամասին երաժշտական փորձագուն և հանձնախմբի անդամ: Հեղմանակ է՝ գիտական հոդվածների «Ստեփան Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր» անտիպ ժողովածուն», //Երաժշտական Հայաստան, 1 (24) 2007 թ., «Ստեփան Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր» և լրբուրյան զարգացման գործունը», //Երաժշտական Հայաստան 4 (31) 2008-1 (32) 2009 թթ. էջ 75-77, Ստեփան Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր և նվազներ», ԵՊԿ, մատնաշար, պրակ 9, 2013 թ., Սահակ Ամաստոնի «Ժողովրդական երգեր և նվազներ», ԵՊԿ, մատնաշար, պրակ 11, 2014 թ.:

Сведения об авторе: АТАНАСЯН НУНЕ РОМЕОВНА (род.1967, Ереван). В 1990г. окончила музыковедческое отделение ЕГК им.Комитаса (класс проф. М. Г. Арутюнян). С 1993 по сей день работает на кафедре Армянской музыкальной фольклористики ЕГК преподавателем. Доцент (2017), заведующая кафедрой (с 1918-го года), ведет курсы дисциплин: "Армянское народное музыкальное творчество", "Армянская духовая музыка", "Новое армянское нотирование". Одновременно с 2000 г. по сей день преподает дисциплины: "Гармония", "Сольфеджио", "Западноевропейские музыкально-теоретические системы" на кафедре теории музыки ЕГК. С 2000 г. - артистка Государственного камерного хора. Автор научных статей: "Неизданный сборник Степана Демуряна "Народные армянские песни" (//Музыкальная Армения, # 1(24)2007), "Роль Степана Демуряна в армянской культуре и развитии образования" (//Музыкальная Армения, # 4(31)2008)1(32)2009, С. 75-77), "Степан Демурян" //Народные армянские песни и наигрыши" (ЕГК, серия изданий, Вып.9, 2013), "Саак Аматуни. Сборник нотированных народных песен", //Народные армянские песни и наигрыши" (ЕГК, серия изданий, Вып. 11, 2014).

Information about an author: ATANASYAN NUNE ROMEO (born in 1967, Yerevan). In 1990 she graduated from YSC Department of Musicology class of Professor Margarita Gabriel Harutyunyan). From 1993 works in YSC in the Department of Armenian Folk music, docent (2017), a Head of Department Since of Armenian Folk Music (2018). Armenian folk music and Armenian spiritual music courses and also from 2001 till today she is a lecturer of YSC's department of music theory she teaches courses of "Harmony", "Solfeggio" and "Western musical theoretical systems". From 2000 she is an Armenia Chamber Choir Artist. She is an author of scientific articles "Stepan Demouryan's "Armenian folk songs" unpublished collection" //Musical Armenia 1 (24) 2007, "Stepan Demouryan's role in the development of Armenian culture and education", //Musical Armenia 4 (31), 2008-1 (32) 2009 p. 75-77, Stepan Demuryan "Armenian folk songs", "Armenian folk songs and plays", YSC series 9, 2013, "Sahak Amatuni's "Folk songs recorded collection"" //Armenian folk songs and plays", YSC, series, 11, 2014.

Резюме

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК *Нуне Ромеовна Атанасян*. - «*Степан Демурян: у истоков армянской музыкальной фольклористики*». Публикации кафедры армянской музыкальной фольклористики.

В статье представлена вышедшая в свет в 2020 году монография, посвященная Степану Демуряну. Монография является результатом многолетней работы, проводимой на основе неизданных архивных материалов. В результате исследований выявлено наиболее полное описание творческой деятельности композитора, музыковеда-фольклориста, педагога, хормейстера, певца конца XIX-начала XX века Степана Демуряна. Публикация монографии посвящена 50-летию кафедры армянской музыкальной фольклористики и является логическим завершением исследования, начатого основателем кабинета Маргарит Брутян.

Summary

Musicologist, PhD Candidate, Docent of YSC *Nune Romeo Atanasyan*. - Publications of the chair of armenian music foklkoristics: "Stepan Demuryan: at the origins of armenian music folkloristics".

The article presents a monograph published in 2020 and dedicated to Stepan Demuryan. The book is a result of many years of work carried out on the basis of unpublished archival materials. As a result of the research, the most complete and laconic description of the creative activity of the composer, musicologist-folklorist, teacher, choir conductor, singer of the late 19th and early 20th centuries, Stepan Demuryan, was revealed. The publication of the monograph is dedicated to the 50th anniversary of the Department of Armenian Folk Music and is the logical conclusion of the research begun by the founder of the chair, Margarit Brutyam.

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ԲԱՂԴԱԾԱՐՅԱՆ**

Արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի դրցենու
E-mail: antbaghdasaryan@gmail.com

Երկխոսում են հեղինակը և ԱԼԻՆԱ ՓԱՇԼԵՎԱՆՅԱՆԸ

Կայ ժողովրդի բազմադարյան, հնավանդ, նաև մշտապես նորոգվող, զարգացող, հարստագոյն երաժշտական ստեղծագործությունն իր անեզր անդաստանի բազմապիսի անքիվ երևոյթներով հայ երաժշտագետների բոլոր սերունդների հետազոտման, ներշնչանքի և խանդավառության անսպաս աղբյուր է: Հայ երաժշտության ֆոլկուրագիտությունը հայտնի է նվիրական անուններով. Կոմիտաս, Ա. Մելիքյան, Ք. Քոչշարյան, Մ. Թումանյան, Մ. Մուրադյան, Ռ. Աքայան, Մ. Բրուտյան..., որոնց ֆոլկուրագիտական անդուր, եռանդուր գործունեության արժանի շարունակողներից է երաժշտագետ-ֆոլկուրագետ Ալինա Փահլեանյանը:

Հարգելի տիկին Ալինա Փահլեանյան ես առիթ եմ ունեցել մի քանի անգամ անդրադառնապու Ձեր կյանքին և գործունեությանը տարբեր հրապարակումներով: Այդ իսկ պատճառով, այս անգամ որոշեցի նաև զրոյցի ձևով ներկայացնել Ձեր բազմաշերտս և բեղուն գործունեությունը: Դուք ճնշել եք զյուրեցու ընտանիքում: Ես սերում եք Փահլեանյանների և Հակոբյանների գերդաստանից: Երաժշտասեր ճնողների՝ շնորհալի ինժեներ, զյուտարար հոր՝ Աշոտ Փահլեանյանի և բազմահնուս մանկավարժ, ֆիզիկոս մոր՝ Անժիկ Փահլեանյան-Հակոբյանի զավակներ:

Ձեր նախնիների մասին, առավել ուշագրավ ինչ կիշշատակեր.

Ա. Փահլեանյան - Նախնիներս Գյումրիում և այլուր ճանաչված են եղել որպես մտավորականներ: Բասենցի գաղթական ապուապակերս հիմնել են Մեծ Մանթաշ գյուղը՝ շիրակյան գեղատեսիլ, բարեկեցիկ, նաև երգող, նվազող, պարող շենք, որը միշտ զրավել է երաժշտական-ֆոլկուրագետների ուշադրությունը:

Ա. Բաղդասարյան - Այն, պատահական չէ Ձեր կոչումը:

Ա. Փահլեանյան - Մասնագիտական գործունեության առաջին իսկ քայլերից, հանգամանքների բերումով, թէ նախախնամության կամոք, զրադվեցի հայ ժողովրդական երաժշտությամբ, կարծում էի ժամանակավորապես, սակայն հետազոյւմ այն դարձավ կյանքիս անբաժան մասնագիտությունը:



Ալինա
Փահլեանյան

Ա. Բաղդասարյան - Գերազանցությամբ ավարտել եք Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային և երաժշտագիտական բաժինները, հետո ուսանել հայ երաժշտության երախտավորներ, պրոֆեսորներ՝ դաշնակահար Գեորգի Մարաջևին և երաժշտագետ Մարգարիտ Հարությունյանին:

Անմիջապես որոշեցիք Ձեր ուղին, որ այդ ճյուղով եք ընթանալու:

Ա. Փահլեանյան - Ո՛չ, տարիների երազանքն ու նպատակը՝ երաժշտական միջնադարագիտության դժվարին ասպարեզին առավել արդյունավետ նվիրվելն էր: Սակայն, այլ կերպ դասավորվեց, երևի, որ Փոլկուր մասուր էի գործել մանկուց:

Ա. Բաղդասարյան - Ֆոլկուրին նվիրվեցիք անմնացրող: Ժողովրդական երաժշտության «համն ու հոտն» առած Ձեր պապի՝ Բասենի ժողովրդական հնավանդ երգի կրող, կատարող, Ներսիսյան ճեմարանում Մ. Ելմալյանի սիրելի սան, մանթաշցի Տիգրան (Պարսան) Հակոբյանի և Գյումրու պատկերավոր բար ու բանի սիրահար տասի՝ Վարդանուշ Հակոբյան-Կունջովյանի ֆոլկուրով արդեն իսկ «վարակված»: Ֆոլկուրի նշանաւում ծավալվեց Փահլեանյանի՝ այսօր մեզանում և դրսում ծանաշված, հեղինակավոր, համբավավոր

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 15.4.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 21.4.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 5.4.2021 թ.

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՈՒԱԿԱՆ ՖՈՆԿԼՈՒՐԱԳԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ

երաժշտագիտ-ֆոլկորագետի շուրջ 60-ամյա բազմաթերությունը, որն ընդգրրկում է երաժշտական ֆոլկորագիտության բոլոր ոլորտները. ժողովրդական երաժշտության հավաքում, նուտագրում, երատարակում և հետազոտում: Անհրաժեշտ ենք համարում հատկապես նշել այս ոլորտների փոխադարձ կապը, սերտաճնան հանգամանքը Ա. Փահլևանյանի գործունեության մեջ: Նրա մանրագին գիտական հետազոտության առարկան են դարձնում մեծ մասամբ, իր իսկ «հայունարերած», նոտագրած, երատարակած ֆոլկորային նմուշները, որն, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր երաժշտագետ-ֆոլկորագետի գործունեության առավել բնականոն, արդյունավետ, հետանկարային ընթացքն է:

Ա. Փահլևանյան - Այն, տարիներ շարունակ Երևանում, Լենինականում, Էջմիածնի, Ապարանի, Հոկտեմբերյանի, Բաղրամյանի, Հրազդանի, Արթիկի շրջաններում են իրականացվել այդ աշխատանքները:

Ա. Բարդասարյան - Դուք ձայնագրել եք ժողովրդական երաժշտության շուրջ 2500 նմուշ, որոնք ներկայացնում են հայոց ազգագրական ամենատարբեր գոտիները՝ դրանց յուրահատուկ երաժշտական բարրաներով, երգային և նվազարանային ժանրերով:

Առանձնակի նշանակություն ունեն Ա. Փահլևանյանի կատարած նոտագրությունները: Ժողովրդական երաժշտության նոտագրումը, ինչպես հայտնի է, դժվարին ասպարեզ է: Սուր, նորազգաց երաժշտական լողության հետ մեկտեղ, նոտագրողից պահանջվում է նաև ազգային զգացողություն, նոտագրվող նյութի բազմակողմանի և խոր իմացություն, կապված այդ նյութի բարրառային, ժանրային և այլ հատկանիշների հետ: Հարկ է նշել, որ հայ ժողովրդական երաժշտության հնչյունարարձրության նրբին երանգների և կատարման յուրաձևության մի շարք յուրօրինակ առանձնահատկությունների առավել ճշգրիտ և մանրամասն գրանցման նպատակով. Ա. Փահլևանյանը երաժշտական ֆոլկորագիտության մեջ ընդունված պայմանական նշանների հետ մեկտեղ գործի է դնում նաև իր ստեղծած և ժամանակի բննությունն անցած հատուկ նշաններ, որոնք տարածվել և այժմ հաջողությամբ կիրառվում են հայ երաժշտագետ-ֆոլկորագետների կողմից: Նրա «փորձառու, հմտու, բազմագիտակ, տաղանդավոր նոտագրողի հայ ժողովրդական երգերի և նվազների մանրակրկիտն նուտագրությունները հնարավորին» համապատասխանում են բնօրինակին՝ արտացոլելով վերջինիս հնչյունարարձրության, ելեւջային, կշռությային, ձայնակարգային և այլ կարևորագույն առանձնահատկությունները:

Ա. Փահլևանյան - Այն: Դրանք լույս են տեսնում ձայնագրյալ ժողովածուներում, նպաստելով հայ ժողովրդական երաժշտության պահպանանանը, տարածմանը, պրոպագանիմանը, ընդգրկվում են գիտական շրջանառության մեջ, առաջ մղելով երաժշտաֆոլկորագիտական և, ընդհանուր առմանը, երաժշտագիտական միտքը, ոգեշնչում են կոմպոզիտորներին ազգային ոգով և ոճով երկերի երտունան համար:

Ա. Բարդասարյան - Ա. Փահլևանյանի նոտագրությունների զգայի մասն արդեն երատարակած է իր

իսկ կազմած և այլ ժողովածուներում, իսկ մի մասն էլ դեռ ձեռագիր վիճակում է: Դրանք հարյուրավոր արժեքավոր ձեռագրեր են, որոնք պահպանվում են Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբողջությամբ, Ա. Փահլևանյանի անձնական արխիվում՝ «սպասելով» երատարակման «երջանիկ» հնարավորության:

Հավաքական և նոտագրական գործունեությանը զուգընթաց Ա. Փահլևանյանը, ստեղծագործական նոյն եռանդով և ավյունով զբաղվում է ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների նախապատրաստությամբ և երատարակությամբ՝ դրանց մեջ ընդգրկելով նաև իր հավաքած և նոտագրած նմուշները: Նա կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբողջի կողմից երատարակվող «Հայ ժողովրդական երգեր և նվազներ» մատենաշարի գրլիսավոր խմբագիրն է: Արդեն լույս է տեսել 13 հատոր: Ինչ՝ կասեր այդ մասին:

Ա. Փահլևանյան - Դրանք նվիրված են ինչպես Հայաստանի տարբեր շրջանների, հատկապես Ապարանի, այնպես էլ Արևոտյան Հայաստանի՝ Վասպուրականի, Սովի, Սասունի հայ ժողովրդական երաժշտության հնագույն բնօրբանների և հարստագույն շտեմարանների երգ-երաժշտությանը, որն այլևայլ արհավիրքների՝ պատերազմների, հայոց ցեղասպանության, բռնազարդի հետևաներով, կտրված, զրկված լինելով իրեն ծնող, սնող «հող ու ջրից», բնական միջավայրից, ենթակա է եղել անդառնալի կորածի:

Ա. Բարդասարյան - Այս խմաստով, բացառիկ նշանակություն ունի մեզանում և դրսում հայտնի, նաև փնտրված, մատենագիտական հազվագյուտ նմուշ դարձած՝ Ձեր կազմած «Հայրենի երգեր»-ը, որը հայ իրականության մեջ մինչև վերջեւու եղակի էր, իրը մեկ երգասացից՝ Հայրիկ Մուրադյանից ձայնագրված նյութ պարունակող ժողովածու:

Ա. Փահլևանյան - Այժմ արդեն պատրաստ է տպագրության մեկ երգասացից ձայնագրված նյութերից մի նոր ժողովածու՝ «Թամակագին ավանդ» (ապարանցի նշանակություն երգասաց, մշեցի և ալաշկերտցի նախանիներից սերվող՝ Իշխան Կարապետյանի ձայնից): Զափազանց արժեքավոր է նաև «Թամին»-ն, իրքի Սուշ-Սասուն ազգագրական գոտին ներկայացնող ժողովածու:

Ա. Բարդասարյան - Ա. Փահլևանյանի կազմած ժողովածուները, ձայնագրված լինելով ծնունդով վանեցի, մշեցի, սասունցի զարդական, շնորհալի երգասացներից, նրանց սերունդներից, կոմիտասյան «Ակնա երգեր», Ա. Մելիքյանի և Գ. Գարդաշյանի «Վանի ժողովրդական երգեր», Մ. Թումանանի «Հայրենի երգ ու բան» դասական ձայնագրված ժողովածուների հետ մեկտեղ, և դրանց շարքում, արևմտահայոց երգ-երաժշտության առավել հավասարի աղբյուրներից են:

Հայ ժողովրդի երգաստեղծության փայլուն էջերից մեկի՝ վիպերգության հավասարի աղբյուրներից է «Սասուն ծոեր դիցագնավէտ»» խորագրով տպումնասիրության մաս կազմող՝ ազգային էպոսի երգվող հատվածների՝ Ա. Փահլևանյանի կազմած համահավաքը, որը մինչ այժմ հայտնի առավել լիակատար երս-

ամբիոնի 50-ամյա (2019 թ.) գործունեությանը

պարակված հավաքածուն է:

Ա. Փականացան - Այն բովանդակում է այդ երգվող հատվածների Կոմիտասի, Ս. Մելիքյանի, Ա. Քոչարյանի, Վ. Սամվելյանի...

Ա. Բաղդասարյան - Եվ նաև Ձեր խոր, ճախիմուտ իրատարակված, նաև անտիպ բազմաթիվ նոտագրությունները: Դրանցից են 20 երգվող դրվագ Էպոսից, այդ թվում «Սարա Մելիքի զրուալոչը», «Դավիթը կովի դաշտում», «Խորախոտ խօսսպէր», «Խազար ափսոս» և այլն, նաև էպոսի առանցքը հանդիսացող «Չողորմին»-երի թվով ուր մեղեդիական տարրերակներ:

Ա. Փականացան - Բացի վերոհիշյալ համահավաքից, գրքում առաջին անգամ իրատարակվեց «Սասնա ծոների» երգվող հատվածների՝ Կոմիտասի գրառումները, կատարված Էջմիածնի վանքի այգեփոր՝ մոլոցի Խապոյենց Զատիկից:

Ա. Բաղդասարյան - Այդ անգնահատելի նյութը (13 հատված), վերծանելով Կոմիտասի սևագրություններից և հակական նոտանիշերից փոխստրելով եվրոպականի, Ա. Փականացանը դրեց զիտական շրջանառության մեջ դեռևս 1996 թվականին:

Հետարքիր է «Կարոս խաչ» վիպական ասքի պատմությունը, որը մինչև վերջերս հայտնի էր միայն սկզբի ոչ մեծ հատվածի նոտագրմանը, որ ժամանակին կատարել էին Կոմիտասը և Ս. Մելիքյանը: XX դարի վերջերին, շնորհիվ Ա. Փականացանի հայտնաբերած՝ ամբողջական ասքի երեք տարրերակի մագնիտաֆոնային ձայնագրություններից նրա կատարած վերծանության, հնարավոր դարձավ ստանալ լիհականությունը, ուստի ուսումնասիրել դրանք և իրատարակել առանձին գրքով: Այսպիսով, Ա. Փականացանի նոտագրությունների միջոցով, հայ երաժշտության անգին գոհարներից մերը՝ Վասպուրականի «Կարոս խաչ» հոգևոր վիպերգը, առաջին անգամ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ ներկայանում է առավել ամբողջական, իր երաժշտարանաստեղծական բաղադրիչների ամբողջ համալիրով՝ նախերգ, երգ, ասերգ, արտասանություն, ավարտերգ:

Նրա նոտագրություններով և համահետինակությամբ լույս է տեսել «Հայենական պատերզմը հայ ժողովրդական և գուսանական երգերում»՝ նախկին Խորհրդային Սիուրյան տարածքում իր տեսակի մեջ եզակի ժողովածուն, որն արտացցում է հայ ժողովորի հովանելու ու մտքերն անցած պատերազմի մասին: Երգերի տեքստերի բանաստեղծական բարգմանությունները հայերենից ուստի կատարել է Ա. Փականացանը:

Հարկ է ավելացնել, որ հայ ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների իրատարակության ընթացքում ի հայտ եկավ նրա ստեղծագործական անհատականության մի շատ կարևոր երեսակ: Փականացանն այժմ հայ ժողովրդական երգերի բնագրային տեքստերի իր մրցակիցը չունեցող, հայտնի ուստի բարգմանիցն է մեզանում, որն ի գորու է լավագույնս պահպանել և արտացոլել ուստի բնաստեղծական բարգմանություններում բնօրինակի ամբողջ հմայքը, յուրահասությունը:

Նշելի է նաև նրա կազմած «Երգել բլրուս» ձայ-

նագրյալ ժողովածուն (Երևան, 2019 թ.):

Ա. Փականացան - Այն հասցեագրված է մանկապատանեկան հասակի երեխաներին: Բաղկացած է նրանց տարիքային հոգեբանությանը և պատկերացումներին բովանդակությամբ, զաղափարապես և մեղեղիապես հասու, հասկանալի և համապատասխան երգերից (թվով 50): Դրանք իմբնականում բաղված են հայ երաժշտական ֆոլկլորագիտության դասականների՝ Կոմիտաս վարդապետի և նրա սաների՝ Ս. Մելիքյանի և Ս. Թումանանի հայտնի, իրատարակված ժողովածուներից, նաև դասական երգասաց Հ. Մուրադյանի բազմահարուստ երգացանելից:

Ա. Բաղդասարյան - Միաժամանակ, ժողովածուում ընդգրկված են հայոց կենցաղում մի շարք սիրված և տարածված երգերի՝ կազմողի ձեռքով պատանեկան տարիքին հարիր վերատեսասավորված տարրերակներ, որոնց բառերը Փականացանը փոխարել է Մ. Արենյանի հանրահայտ խաղիկներից:

Ժողովածուի իմբնական նյութը շարադրված է հայ ժողովրդական երգեցողության ավանդական՝ միաձայն ձևով: Դրանց կողքին, իրքին հավելված, հեղինակը ներկայացնում է իր կողմից ստեղծված երկանյան 5 նմուշ՝ ժողովրդական երգի մեղեղում կցելով իր խոր մեղեղային տարրերակը կամ երգի համար հորինելով ժողովրդական ոճով նոր ներածայն մեղեղի:

Ժողովածուն կարևոր նշանակություն ունի նախ իր եղակիությամբ. հայ ժողովրդական ծայնագրյալ ժողովածուների բազմաբանակ շարքում, պատանեկությանն ուրիշված օրինակները խիստ սակավարիվ են:

Ա. Փականացան - Ժողովածուն, միաժամանակ հնարավորություն է տալիս նատաղ սերնդին՝ ներկա խարսիխուն, օտարութի ազդեցությունների պայմաններում ժողովրդական երաժշտության զոհարների միջոցով «դարձի զալ» ազգային ակունքներին, նաև առնչվել հայոց մեծերի հայրենանվեր գործունեությանը, հայեցի երաժշտության միջոցով ծանոթանալ բազմաձայնությանը: Ժողովածուն կիրառելի է մանկական թե՛ ոչ նաև նաև ազգիտական և թե՛ ոչ առանձական հաստատություններում: Երկացանկի ընտրությամբ և վերջինիս դասակարգման սկզբունքով այն օրինակելի է նմանատիպ այլ ժողովածուների ստեղծման համար:

Ա. Բաղդասարյան - Ժողովրդական երաժշտության հետազոտություններ Ա. Փականացանի երաժշտա-ֆոլկլորագիտական գործունեության անբաժանելի մասն է: Նա անդրադասնում է խնդրո հետ կապված առավել հիմնային, և համեմատարար թիզ լուսարանված դորսերին, մեծ մասամբ դիտարկելով իր «նախասիրած» ազգագրական գոտիների՝ Վասպուրականի նահանգի, Մուշի, Սասունի երգ ու նվազը:

Այսպես, ժողովրդական երաժշտության նոտագրությամբ Ա. Փականացանն զրավլում է ոչ միայն գործնականություն: Երաժշտական ֆոլկլորագիտական այս կարևորագույն, առաջնային, խնդրիներով լեցուն ուրութի տեսությանն է նվիրված նրա «Ժողովրդական երաժշտության նոտագրման սկզբունքները ֆոլկլորագիտության զարգացման արդի փուլում» (թաղինի շրջանի երգերի օրինակով), թեկնածուական ատենախոսու-

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՈՒԱԿԱՆ ՖՈՆԿԱՆՈՐԱԳԻՄՆԻՔԱՆ

րյում (Թրիլիսի, 1989թ.), որմ իր թեմայով առաջին, և այժմ միակ ուսումնասիրությունն է մեզանում: Ձեր ատենախոսությունն ի մի է բերել ուրատի վերաբերյալ Ձեր երկարամյա և բեղուն գործունեության ընթացքում ձեւավորված, մշակված տեսակետները, սկզբունքները, որոնք զայիս են հարստացնելու ժողովրդական երաժշտության նոտագրության թե՛ գործընթացը, թե՛ տեսությունը: Դուք անդրադառներ եք նաև երաժշտական ֆոլկորագիտության «անլյունաքարերից» մեկին՝ երաժշտական բարբառագիտությանը:

Ա. Փակելանյան - Պետք է նշել, որ հայոց բազմաթիվ և բազմապիսի երաժշտական բարբառներն այժմ դեռևս կարուտ են բազում հետազոտությունների, որ հատկապես կարևորվում, առանձնակի, և ավելին, երաժտապատճեն նշանակություն է ստանում արևմտահայոց երաժշտական բարբառների աղճատման, տարրալուծման, մոռացության վտանգի ներքո գտնվելու պայմաններում:

Ա. Բաղդասարյան - Ձեր հետազոտություններն ուղղված են այս խնդրին: Սովորաբար ընդհանրական ազգագրական գոտու երաժշտաբարբառային դիմագիծը դիտարկելիս՝ ի հայտ են բերվել և ուսումնասիրվել տարածքի ժողովրդական երաժշտությանը հատուկ երգային տեսակները, ելեկցային դարձվածքները, կշռույթային կառույցները, ձևակառուցողական սկզբունքները, որոնք միաժամանակ համեմատվել են Վասպորականի ժողովրդական երաժշտության երաժշտաբարբառային նոյն երևույթների հետ:

Ա. Փակելանյան - Հետազոտության արդյունքում հայտնաբերվել է նաև յուրահատուկ հնչողություն ունեցող ձայնակարգ, առաջարկել եմ անվանել «տարոնական»:

Ա. Բաղդասարյան - Ա. Փակելանյանի հետազոտական հետաքրքրություններն ուղղված են նաև հայ ժողովրդի էպիկական երգաստեղծությանը: Նկատի ունեմք «Կարոս խաչ» վիպական ասքի տարբերակների երաժշտա-բանաստեղծական տերստերի համեմատական վերլուծությունը, «Սասնա ծոեր» դյուցազնավելափերագային հատվածների դիտարկումը:

Ա. Փակելանյան - Նշված բոլոր օրինակներում մեղադիմակին մտածողության յուրահատկությունը բնորոշվում է իրքի վիպական ասացման երգային կերպ, այլ ոչ թե՝ ժարգոնով: Դրանով է պայմանավորված երգվող հատվածների հայտնի միակերպությունը:

Ա. Բաղդասարյան - Երաժշտագետ-ֆոլկորագետի Ձեր ամրող հմտությունը, հարուստ, բազմառվասնդակ փորձը Դուք անմենացորդ, անշահախնդրորեն ու շարությունը վիտսանցում եք երիտասարդությանը: Դուք, կոնսերվատորիայի ամենասիրված, ճանաչված, հեղինակավոր դասականությունը եք, մեծագոյն սիրով, նվիրվածությամբ ու համբերությամբ կրթում, դաստիարակում եք ապագա երաժշտագետ-ֆոլկորիստների:

Ա. Փակելանյան - Իմ մասնագիտական դասարանն ավարտել են 40 ուսանող, զրեք բոլորը գերազանցությամբ: Նրանք «գործը լավ իմացող», անսահմանություն սիրող մասնագետներ են՝ երաժշտական ֆոլկորի հավաքողներ, նոտագրողներ, դասակարգողներ, հետազո-

տողներ, որոնք ի գորու են գործելու հայ ժողովրդական, նաև գուսանական և աշուղական երաժշտության բոլոր ասպարեզներում:

Ա. Բաղդասարյան - Ձեր «Հայ երաժշտական ֆոլկորի ուժմիկայի առանձնահատկությունները» աշխատության մեջ (Երևան, 2014թ.), որը դարձավ դասագիրքը կոնսերվատորիայի համար, առաջնորդվելով Կոմիտաս վարդապետի դիտարկումներով և զարգացնելով նրա առաջադրած դրույթները, ներկայացնում և մանրամասն վերլուծում եք հայ ժողովրդական, հատկապես երգային ստեղծագործության կարևորագոյն բաղադրիչներից մեկի՝ ուժմի ժամանակաշափական (կանոնադրական) հիմնված երկար և կարծ վաճկերի համարդրության վրա) էտյուններ:

Ա. Փակելանյան - Աշխատության նպատակն է հնարավորին ճշգրտել, հարստացնել և լրացնել ուսանողների գիտելիքները հայ ժողովրդական երաժշտության ասպարեզնում:

Ա. Բաղդասարյան - Հարկ է նշել, որ այդ աշխատությունը հայ երաժշտական ֆոլկորագիտության վերջին տարիների առավել արժեքավոր ննուշներից է:

Ապագա երաժշտներին, սակայն այս անգամ կոնսերվատորիայի մագիստրոսական կրթության ուսանողության է ուղղված Փակելանյանի «Հայ երաժշտական ֆոլկորագիտության արդի խնդիրները» աշխատությունը (Երևան, 2018 թ.), որը մագիստրոսական ծրագրում նորամուտ, նոյնանուն առարկայի համար է նախատեսված և արդեն իսկ հաջողությամբ և արդյունավետ կիրառվում է գործնականում:

Ա. Փակելանյան - Առարկայի սահմաններում ֆոլկորը դիտարկվում է ոչ միայն գեղագիտական տեսանկյունից՝ իրքի ժողովրդական արվեստի տեսակ, այլ նաև իրքի սոցիալական երևույթ, որը պահանջում է բազմակողմանի ուսումնասիրություն՝ անշվելով մի շարք հումանիտար գիտությունների հետ, ինչպիսիք են ազգա-գրությունը, բանահյուսությունը, բարբառագիտությունը, պատմությունը, աշխարհագրությունը, հոգեբանությունը և այլն:

Ա. Բաղդասարյան - Նշված աշխատությունը հետինակի՝ փորձառու, հմուտ, նշանավոր երաժշտագետ-ֆոլկորագետի բազում տարիների դիտարկումների, մտորումների արգասիքն է և, անկասկած, հայ երաժշտական ֆոլկորագիտության հետազու ընթացքի համար խրան կիանիխանա:

Անդրադառնալով Փակելանյանի ուսումնամեթոդական գործունեությանը՝ ավելացնենք նաև, որ նա Խ. Արովյանի անվ. Հայկական մանկավարժական պետական համականության պարբեստը Յ. Վ. Յուզբաշյանի համարդինակությամբ, ստեղծելով է հանրական կամաց կազմությունը՝ առաջարկությունը և առաջարկությունը մերժական դադուների հետույթությունը՝ առաջարկությունը և առաջարկությունը մերժական դադուների հետույթությունը:

Վերջերս լույս տեսավ նաև Ձեր կենսամատենագիտությունը. («Ալինա Փակելանյանի կենսամատենագիտություն», Երևան, 2020 թ.): Այն բաղկացած է տարբեր բովանդակություն ունեցող, սակայն մեկմեկու լրացնող, փոփոխական վարդիներից: Դրամը եմ՝ «Ալինա

Աշոտի Փակելսամյամ» խորագրով առաջարան-ակնարկը (հեղինակ՝ Ա. Հ. Բաղդասարյան), որի միջոցով փորձ է արվել հճարավորին մանրամասն ներկայացնել անվանի երաժշտագետի կյանքի ուղին և երկարամյա բազմառորտ ու բազմաբեղուն գործունեությունը: Առաջարանին հաջորդում են Փակելսամյամի «Կյանքի և գործունեության հիմնական տարերվերը» և, ապա նրա աշխատությունների ծավալուն մատենագիտությունը. մենագրություններ, ժողովրդական երաժշտության ժողովածուներ, դասագրքեր, ուսումնամեթոդական ծրագրեր, հոդվածներ գիտական ժողովածուներում, ամսագրերում, թերթերում, հանրագիտարաններում՝ այդ թվում *Lindgren* «New Grove»՝ երաժշտության և երաժշտների մասին հայտնի հանրագիտարանում («Հայականական երաժշտություն», «Զիվան Գասպարյան», «Սողոմոն Սեյրանյան», «Օքելլս Համբարձումյան», «Սաշա Օգանեզաշվիլի», «Անժելա Աբարեկյան») և այլն:

Ա. Փակելսամյան - Կենսամատենագիտության մեջ առանձին բաժիններով ներկայացված է իմ ոչ միայն մանկավարժական և բանահավաքչական գործունեությունը, այլև դեռևս աշակերտական տարիների իմ հորինած դաշնամուրային մանրանվագների շարքը («Մտորում», «Չրուց», «Երգ առանց խոսքի», «Օրոր», «Պար», տես՝ «Դաշնամուրային մանրանվագներ», Երևան, 2020 թ.): Այն ժամանակին արժանացավ ուսուցչու, հայ դաշնամուրային դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Գ. Վ. Սարաջևի գիտունակությանը, և նախատեսված է երաժշտական և արվեստի դպրոցների դաշնամուրային բաժինների սկսնակ աշակերտների համար:

Ա. Բաղդասարյան - Կենսամատենագիտությունն իր բոլոր բաժիններով կազմված է երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն, ինչը զգալիորեն լայնացնում է այս արժեքավոր աշխատության գիտական շրջանառության հճարավորությունները, հասու լինելով ոչ միայն հայ, այլև օստարազգի ընթերցողի համար: Կարծում ենք, ցանկալի կիրար խնդրո կենսամատենագիտության անգլալեզու տարրերակի ստեղծումը ևս:

Ա. Փակելսամյան - Այս կենսամատենագիտությունը գալիս է լրացնելու և հարստացնելու ազգային երաժշտական մատենագիտական դեռևս ոչ այնքան ստվար, սակայն խիստ պահանջված գրականությունը՝ միաժամանակ լինելով տեղեկատվական կարևոր աղբյուր և ուղեցույց հայ (և ոչ միայն հայ) երաժշտագետների ներ-

կա և ապագա սերունդների համար:

Ա. Բաղդասարյան - 26 տարիների ընթացքում Ալինա Փակելսամյանը դեկավարել է ԵՊԿ Հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբիոնը: Այն, իր բազմակողմանի գործունեությամբ (ամբիոնում դասավանդվում և ուսումնասիրվում են հայ ավանդական երաժշտության բոլոր ճյուղերը՝ ժողովրդական, գուսանական աշուղական, միջնադարյան հոգևոր և աշխարհիկ), փաստորեն երաժշտական հայագիտության ուսումնական և գիտական կենտրոն է հայ իրականության մեջ:

Ա. Փակելսամյան - Ամբիոնը «Ժառանգեցի»՝ որպես «լի, շեն տուն», բազմավաստակ պրոֆեսոր Մարգոն Արամի Բրուտյանից, կոնսերվատորիայի Ժողովրդական երաժշտական ստեղծագործության կարինետի հիմնադրից և երկարամյա դեկավարից: Կարինետն ստեղծվեց Մ. Ա. Բրուտյանի նախաձեռնությամբ 1969 թվականին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ, վերջինիս հիմքով 1988-ին բացվեց հայ երաժշտական ֆոլկորագիտության ամբիոնը, որի առաջին վարիչը եղավ հենց ինքը՝ Մ. Բրուտյանը:

Ա. Բաղդասարյան - Փակելսամյանը ժառանգեց և սրբությամբ պահեց, պահպանեց այստեղ հիմնավորված, տարիների ընթացում կայունացած, հաստատված մասնագիտական ավանդություններն ու բարոյական բարձր չափանիշները: Նրա դեկավարությամբ գրեթե երեք տասնամյակ գործում էր և այսօր էլ շարունակում է հաջողությամբ գործել կոնսերվատորիայում իր անհանգ, անդրդպիկի սկզբունքայնությամբ հայտնի հայ երաժշտության նվիրյալների (Մ. Ա. Բրուտյանի խորով՝ «խենթերի») համերաշխ կողեկտիվը, որի ավագ և կրտսեր անդամները փորձառու մանկավարժներ են, Հայաստանում և դրամ հայտնի գիտնականներ:

Ալինա Փակելսամյանի բազմազբաղ մասնագիտական գործունեությունը ներդաշնակորեն միահյուսվել է նրա ընտանեկան կյանքի հետ: Ամուսնու՝ անվանի երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, երգանկահիշատակ Գևորգ Գյորգալյանի «թևն ու թիկունքն էր», «պահապան հրեշտակը», շնորհալի զավակների պաշտելի մայրն է, տատիկը, հայկական շենի հյուրասեր տան տիրուիմ:

Ասում են, տանը մեկ լուսատու կիրար (հայոց մեջ սովորաբար նկատի ունեն տան տղամարդուն): Գյորգակյան-Փակելսամյան գեղարդաստանում լուսատուները երկուսն են...

Բանալի-բառեր. Ֆոլկորագիտություն, ժողովրդական երգ, դասագիրք, կենսամատենագիտություն, Մարգարիտ Բրուտյան:

Ключевые слова: фольклористика, народная песня, гучебник, учебно-исследовательский, Маргарит Брутян.

Keywords: ethnomusicology, folk song, textbook, bibliography, Margarit Brutyan.

Տեղեկություններ հեղինակի մասին. ԲԱԴՐԱՄԱՍԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՐԱԺՇՏՈՎԱԳԵՏ, արվեստագիտության թեկնածու, դոկտոր, [թ. 1947 թ. թ. Լեճինական (այժմ՝ Գյումրի): Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտական բաժինը 1973 թ.: Մասնագիտացել է պոլիֆինիայի բնագավառում. Գ. Շերտուարյանի դասարանում: Արվեստագիտության թեկնածու՝ «Նմանակումային կատարությունները» բնուր. Մոսկվա (1990 թ., գիտ. դեկ.՝ Կ. Է. Խուդաբաշյան-Մարգարյան): Երաժշտաստեսական և առարկանական առարյանի անդ. 7-ամյա, Պ. Զայկովսկու անվ. ՄՍԵԴ-Դպրոցներում, դասախոսել է Ռ. Սելիբրյանի անդ. Երաժշտագիտական ուսումնարանուն. Խ. Արովյանի անդ. ՀՊՄԵԴ ՀՊՄԵԴ (այժմ՝ ՀՊՄՀ), այժմ՝ ԵՊԿ, Հայ երաժշտագիտական ֆոլկորագիտության ամբիոնում: «Հայ հոգևոր երաժշտություն» և «Հայկական նոտագրություն» դասարացները: Մարմանանակ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ափամ գիտաշխատություն է: Բ. գիտահետազոտական գործունեությունը կապված է հայկական ավանդական (մոնողիկ) երազրեսության հետ: Հեղինակ է՝ գիտական հոգևոր կառավագետ հայկական գիտականության մասին: Նրա գրչին են պատկանում նաև Կ. Խուդաբաշյանի կենսամատենագիտությունը, //«Հայ նշանավոր կին գիտնականներ», N1, Երևան, ՀՀ ԳԱԱ գիտություններ, 1999 թ., «Հայկական ժողովրդական նվազագույն» գիրքը (հայ., ռուս., անգլ. լեզուներով), համահեղինակ՝ Ա. Կիրակոսյան, Երևան, Կոմիտաս, 2008 թ.): «Հայկական նոտագրության ձեռնարկ» Երևան, Արևոր Գրուպ, 2010 թ.: Բ. գրալիում է և խմբագրական աշխատանքով: Հայկական ավանդական և կոմպոզիտորական երաժշտության մասին գեկուցումներով Բ. մասնակցել է հան-

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԺԴՅԱԿԱՆ ՖՈՂԵԼՈՐՈՎԻՆԹՐԵՑԻ

րասպեուական և միջազգային գլուխութրովներին: Հայ երաժշտմերի մասին և այլ բնույթի հրապարակախոսական հոդվածներով համեստ է եղել համբավնական մամլութ (//Սովորական Հայաստան, //Երեկոյան Երևան, //Ավանցարդ, //Կոմմունիստ, //Հայաստանի Համբավնություն, //Գոլոս Արմենի, //Նոր Վրեմյա և այլ թերթերում, //Սովորական արվեստ, //Երաժշտական Հայաստան ամսագլութում և այլն):

Сведения об авторе: БАГДАСАРЯН АНАИТ ОГАНЕСОВНА (род. в 1947г., г. Ленинакан, ныне Гюмри, РА) - музыковед, кандидат искусствоведения, доцент. Окончила ЕГК им. Комитаса (1973), специализация "Полифония", дипл. раб. "Фуга в сонатно-симфонических циклах Бетховена" (класс Г. М. Чеботарян). Канд. дисс. "Имитационные структуры в произведениях Комитаса" М., 1990. (научн. рук. К. Э. Худабашян-Саркисян). Преподавала в музыкальных школах им. Кушнaryan, СМСШ им. П. Чайковского, муз. училище им. Р. Меликяна, в Армгоспединст. им. Х. Абовяна. Преподает на кафедре армянской музыкальной фольклористики ЕГК: "Армянская духовная музыка", "Армянская нотопись". Старший научный сотрудник ИИ НАН РА. Научно-исследовательская деятельность Багдасарян связана с армянской традиционной (монодической) музыкой: "Попеременное пение в армянских крестьянских песнях" (/ Традиции и современность, кн. 2, Ер.: НАН РА Гимутюн, 1996, С. 200-208); "О некоторых музыкально-поэтических особенностях народных песен о геноциде армян" (на арм. яз.) Ер.: НАН РА Институт музея геноцида армян, 2002; "Арам Kocharyan и армянская ашугская музыка". (на арм. яз.), Ер.: НАН РА Гимутюн, 2004; "Армянская ашугская национально-патриотическая песня в Александровополе" (на арм. яз.), Ер.: НАН РА Гимутюн, 2009); "Духовная песня "Утро-свет" ("Аравот Лусо") с точки зрения типологии армянской духовной музыки" (на арм. яз.), Сб. Эчмиадзин, 2000; "Айтнян-Бем, Песнопения св. Патарага" (на арм. яз.), Вена-Ереван: Издательство Мхитаристов, 2012; и т.д. Перу Б. принадлежат также: Биобиблиография К. Э. Худабашян (на арм. и рус. яз.), / / "Армянские выдающиеся женщины-ученые" # 1, Ер.: НАН РА Гимутюн, 1999; Армянские народные инструменты (на арм., англ., рус. яз., соавтор А. Киракосян), Ер.: Комитас, 2008; Пособие по армянской нотописи Ер.: Амроц Груп, 2010. Б. отредактированы два сборника духовных песнопений - "Избранные армянские духовные песни", Ер.: Занек 97, 2010, "Записанные песнопения св. Патарага", Ер.: Амроц Груп, 2012; "Ашугские любовные сказы", Ер.: Амроц Груп, 2014. Участвует в республиканских и международных научных конференциях, в радио и телепередачах, сотрудничала с республиканской прессой (// Коммунист, // Голос Армении, // Новое Время и т.д.).

Information about the author: BAGHDASARYAN ANAHIT HOVHANNES - (b. in Leninakan (Gyumri) in 1947), musicologist, Ph.D. in Arts, Docent. In 1973 she graduated from YSC with a specialization in Polyphony (G. Chebotaryan's class), with graduation work on The Genre of Fugue in Beethoven's Sonata Symphonic Cycles. In 1990 she completed her postgraduate studies under the guidance of K. Khudabashyan-Sarkissyan with thesis on The Imitation Structures in Komitas' Works. A. Baghdasaryan has been teaching at Kushnaryan Music School, Tchaikovsky Special Music School, R. Melikyan Music College, and Kh. Abovyan State Pedagogical University. Presently she is a lecturer on Armenian Sacred Music and Armenian Music Notation at the Department of Folk Music at YSC. She is a Senior Researcher at the Institute of Arts of the NAS of RA. Her field of research is Armenian traditional monodic music, in which she has numerous publications, such as Alternate Singing in Armenian Peasant Songs (Tradicioi i Sovremennost, Book 2, Yerevan, 1996); Some Musical Poetical Features of Folk Songs about Armenian Genocide (in Armenian), Yerevan, 2002; Aram Kocharyan and Armenian Ashugh Music (in Armenian), Yerevan, 2004; Armenian Ashugh National-patriotic Songs in Alexandropol (in Armenian) Yerevan, 2009; The Aravot Luso Chant in Terms of Typology of Armenian Sacred Music (in Armenian), St. Etchmiadzin, 2002; Aydrian - Bohm: the Hymns of the Holy Patarag (in Armenian), Vienna-Yerevan, 2012; and many others. A. Baghdasaryan also wrote Bio-bibliography of K. Khudabashyan / /Prominent Armenian Women Scientists, N1, Yerevan, 1999; Armenian Folk Music Instruments (co-authored with A. Kirakosyan), Yerevan, 2008; A Guidebook on Armenian Music Notation, Yerevan, 2010. Baghdasaryan is an editor of two collections of Armenian hymnography - Selected Armenian Sacred Chants, Yerevan, 2010 and The Recorded Hymns of the Holy Patarag, Yerevan, 2012, as well as of the Ashugh Lyrical Tales, Yerevan, 2014. Anahit Baghdasaryan is a participant in international research conferences; she takes part in television and radio broadcasts and co-operates with local newspapers (Kommunist, Golos Armenii, Novoye Vremya, etc.).

Резюме

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК Анаит Оганесовна Багдасарян.- "Беседуют Анаид Багдасарян и Алина Пахлевянян".

Интервью посвящено жизненному пути и творческой деятельности Алины Ашотовны Пахлевянян – известного в Армении и за ее пределами музыканца-фольклориста, носящего традиций армянской фольклористической школы. А.Пахлевянян – достойный преемник Саака Аматуни, Комитаса, Аршака Брутяна, Спиридона Меликяна, Арама Kocharyan, Миграна Тумаджана, Маргарит Брутян, собиратель народной музыки, участник и руководитель многочисленных фольклорных экспедиций почти во все районы Армении. Многоопытный нотировщик армянского музыкального фольклора, выработавший собственную систему фиксации мелизматических, метроритмических особенностей и нетемперированного строя армянской народной музыки. Исследователь-теоретик различных проблем в данной области (см. "Вопросы музыкальной фольклористики", Ер., 2005). Многолетний заведующий кафедрой "Армянской музыкальной фольклористики" ЕГК им. Комитаса, воспитавший поколения музыканцев-фольклористов и создавший свою фольклорную школу. Алина Пахлевянян - музыковед, пользующаяся огромным заслуженным авторитетом профессионала "высокой пробы", любимая, почитаемая студентами педагог, профессор консерватории.

Summary

Musicologist, PhD candidate, Docent of YSC *Anahit Hovhannes Baghdasaryan*. - "Talking Anahid Baghdasaryan and Alina Pahlevanyan".

Դեռևս անցյալ դարի 70-80-ականներին տարեցներից շատերը բարի անունով և օրինանքով հիշում էին Արշակ Բրուտյանի հորը՝ Հովհաննեսին, ասում էին որ «Այս Հովհաննեսի շնորհիվ են մեր զյուղացիք այսօր հաց ուսում»*: Նրա անվան հետ է կապված զյուղի հողերի սահմանների զծագրման ու դրանց ծշտման հարցը, ջրային խնդիրների լուծումը և այլն: Հովհաննես Բրուտյանը մեծ հարզանք է վայելել համազյուղացիների շրջանում, հատկապես դեպի զիտությունն ու լուսն ունեցած իր վերաբերմունքով, ով ազգի բարօրությունը միայն կրթության մնչ է տեսել: Պատահական չէ, որ որդիներից Տիգրանին տվել է գրաշարության, իսկ Արշակին՝ ուսման:

Ա. Բրուտյանը ծնվել է Տաշղալայում՝ 1864-ի սեպտեմբերի 21-ին: Արշակը յոթ տարեկան էր, երբ հայրը նրան տարավ Ղվչախ (այժմ՝ Հարիճ զյուղ), Հարիճավանի ժառանգավորաց դպրոցը: Տղայի ուսման մեջ առաջադիմությունն օրինակելի էր, իսկ ավարտական քննությունների արդյունքները փայլուն: Քննությանը ներկա գտնվող զավարապետը «Հարիճ» ընկերության նախագահին առաջարկում է նոյնիսկ իրու խրախուսակ՝ իր հաշվին բանկագին կտորից հագուստ պատրաստել սովորողների մեջ ամենափոքրիկի՝ Արշակի համար: Հատկապես տպավորիչ էր հայկական ձայնագրություն առարկայից ավարտական քննությունը, որն Արշակը ուսուցանել էր Գյուրգյան Ճեմարանն ավար-

* Անձնական գրույցից:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորիրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլինի Ծագոյանի՝ 12.4.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 25.4.2021 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 8.3.2021 թ.

տած և հայրենի օջախ՝ Հատիճավանք դասավանդելու վերադարձած Հովհաննես Արքարյանի մոտ: «Հատիճ» ընկերության նախագահ Հովսեփ Կոստանյանցը* «ինչպես նաև դպրոցի հոգեբարձության խորհուրդը, տեսնելով Արշակի արտակարգ ընդունակությունները և հաշվի առնելով նրա լավ ձայն ունենալու հանգամանքը» իրքի դպրոցի պարծանք, հասող գրությամբ նրան ուղարկում են Էջմիածին՝ այդ առարկայից Գևորգ Դ-ի ներկայությամբ քննություն հանձնելու (5. էջ 30):

Կատարելագործվելով հայկական ձայնագրության արվեստի մեջ, ինչպես նաև ձեռք բերելով ընդհանուր աստվածաբանական առարկաների խորը գիտելիքներ, 1882 թ. Արշակ Բրուտյանն ավարտում է ձեմարանը: Ավարտական վկայականը նաև վերցրել է տարիներ անց. Արինիկում պահվող N 250 վկայականը, որի վրա ամսաթիվը նշված է՝ 1904-ի սեպտեմբերի 25, գրված է Կոմիտասի ձեռքով և վավերագրված է նրա ստորագրությամբ:

Ճեմարանավարտ Ա. Բրուտյանը 1882-ին վերադարձում է Հատիճ, գրադիմում ուսուցչությամբ, սակայն մեկ տարի անց տեղափոխվում է Ալեքսանդրապոլ: Հայրենի գյուղից հեռանալու պատճառի մասին գրել է Կարո Դուրգարյանը, Ա. Բրուտյանին նվիրված իր հողվածում. «...պատասխու համար գյուղի շրջանակները շատ են էին. ստեղծագործելու համար ոչ հնարավորություն կար, ոչ էլ ժամանակ» (6.): Ընդմիշտ հաստատվելով Ալեքսանդրապոլում, նա մշտական կապ է պահպանում իր ծննդավայր Տաշլապայի հետ. հաճախ այցելում հայրենի գյուղ՝ մտահոգված համազուղացիների և նրանց երեխաների մտավոր առաջադիմությամբ: Աղպես, օրինակ՝ 1887-1888 ուսումնական տարում, իրքի պակագ ուսուցիչ, նա հրավիրվեց Հատիճ, համատեղելով իր աշխատանքը Ալեքսանդրապոլի Ս. Փրկչի վիճակային դպրոցում դասավանդելու հետ: Երբեմն չզրադիւ հողագործությամբ Ա. Բրուտյանը միշտ մասնակցություն է ունեցել գյուղի ցալուս հացերի լուծման՝ հողային և ջրային խնդիրներին, հնարավորության սահմաններում պաշտպանելով գյուղացիներին**: Ի նշան երախտագիտության, համազուղացիներն Ա. Բրուտյանին նվիրել են հողամաս, որը մինչև XX դարի 70-ականները գյուղի տարեցները հիշում էին որպես «Արշակի արտ» անունով: Իր «արտի» բարիքները Ա. Բրուտյանը թողնում էր գյուղացիներին, աշխատելով թերթացնել նրանց տնտեսական կյանքի անբարեկեցիկ վիճակը, թեպետու ինքն ամրող կյանքում նյութական ծանր կարիքի մեջ է ապրել:

Արշակ Բրուտյանը հայ գործիչներից շատերի պես, մեծ հայրենասեր էր: Նա աշխատել է իր բաժինն ունենալ հարազատ ժողովրդին կրթելու, նրան տղիտության խավարից դրւու բերելու ու հասարակական կյանքի մասնակից դարձնելու գործում: Դա ժամանակի ողին

* Հ. Կոստանյանցը անվանի հայագետ Կարապետ Կոստանյանցի հայրն էր:

** Ե. Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Ա. Բրուտյանի ֆոնդ, Լենինականի Լուսաշնորհմիության նախագահ՝ Հարություն Հայլազունուն ուղղած «Դիմում»:

էր, առաջադեմ հայրենասերների գիտակցության մեջ իշխող մտայնությունը: 1873 թ. Ալեքսանդրապոլում, Դ. Աղայանի և Ս. Բեգնազարյանի շանքերով, ինչպես և հասարակության շերմ օժանդակությամբ, Սուրբ Նշան եկեղեցու հարևանությամբ, որը և չքավոր մասնությունը համար բացվեց Սահականուշյան հզական դպրոցը, որտեղ անվճար դասավանդող ուսուցիչների թվում էր նաև Ա. Բրուտյանը (7. էջ 54): Ամբողջ կյանքում ճաշակելով նյութական կարիք և զրկանք, որիշի նեղության նկատմամբ նա չէր կարող անտարբեր լինել: 1892-ին, ոտս սովորական օգախն, Ա. Բրուտյանը կազմակերպեց հայ ժողովրդական երգի համերգներ, իսկ երբ թուրքական յարադանից փրկված հայ զաղթականների մի մասը, որ Ալեքսանդրապոլում էր պատապարված, կոտորվում էր տիֆի համաճարակից և սովոր, նա զուղեցոյուղ ընկած, հանգանակություն էր հավարություն չքավոր և անօթևան մնացած աշակերտների համար

(8.): Շուրջ կես դար Ա. Բրուտյանը դասավանդել է Ալեքսանդրապոլի գրեթե բոլոր դպրոցներում, դասավանդելու մի շարք առարկաներ՝ հայկական ձայնագրություն, երգեցողություն, նկարչություն, գծագրություն, հայոց լեզու, հայ գրականություն, վայելչագրություն, հայրենացիտություն, համարհագրություն, պատմություն, կրոն, նպաստելով մի ամբողջ գավառի գրագիտությանը*: Սակայն օրեցօր աճող ազգային զաղթականները ցարական իշխանավորներին մտածելու և անհանգստանալու տեղիք էին տալիս, որի արդյունքում փակվեցին մի շարք դպրոցներ և կրթական հաստատությունները: Դպրոցներում, մանուկում, գրականության մեջ արգելված էր «հեղափոխություն», «ազգայնություն», «ազատություն» բառերը: Բոլ քաղաքական հայացքներով Ա. Բրուտյանը հարում էր հայականներին**: ամդամազրվելով այդ կուսակցությանը նա իր բողոքի ձայնում էր բարձրացնում հասարակության մեջ տեղ գտնած անհավասարության, անարդարության, աշխատավորներին շահագործելու և այլ արատավոր երևույնների դեմ: 1903-ի դեկտեմբերին ժամանակամիջին վարչության կարգադրությամբ Ա. Բրուտյանի բնակարանը ենթարկվեց խուզարկության, իսկ ինքը ձերբակալվեց և հայտնվեց Ալեքսանդրապոլի բանուում, որտեղ մնաց շորջ երկու ամիս***: Երկրորդ անգամ նրա բնակարանը խուզարկության ենթարկվեց 1920-ին, այս անգամ արդեն դաշնակցական կառավարության ներկայացուցիչների կողմից: Նրա երկրորդ

* Ա. Բրուտյանի դասավանդած առարկաների քանակից կարելի է պատկերացնում կազմել, թե ինչպիսի լայն մտահորիցն է ունեցել, և որրան բազմակողմանի ու խորը գիտելիքների առ անձնավորություն է եղել:

** Հնչական կուսակցությունը իմանադրվել է Ժնևում, 1887-ին, մի խում կովկասահայ ուսանողների կողմից, որի իմանադրեներն էին Ավետիսի Նազարելիանը (Նազարելի), Մարիամ Վարդանյանը՝ հետազայտման նրա կինը (Մարի Նազարելի), Ռուբեն Խանազայտանը (Խանազայտ): Կոչվել են իրենց հրատարակած «Հնչակ» թերթի անունով (9. էջ 325):

*** Ա. Բրուտյանի բնակարանում էին պատրաստվում հեղափոխական կյանքը և կարգախոսելով դրոշակներն ու ցուցապատճենները:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԾՉՄԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՄՆԻՑ Ա

ձերբակալումը փաստացի կանխեց վրա հասած Խորհրդային իշխանությունը, որի հաստատումը Հայաստանում Ա. Բրուտյանը մնեց խանդավառությամբ ընդունեց: Աշխատանքային եռանդով իի՞ն ան կամենում էր իր ողջ ուժերը նվիրաբերել վերածնված հայ ժողովրդին, նրա լուսավոր ապագան կապելով նորաստեղծ Հայ Խորհրդային հանրապետության հետ:

Ա. Բրուտյանի հանդեպ խորին հարզանք էր տածում Ռումանու Մելիքյանը: Նրանց առաջին հանդիպումը տեղի ունեցավ 1922-ի ամռանը Ալեքսանդրապոլում, երբ նորարաց կոնսերվատորիայի առաջին ռեկտորը եկել էր դասախոսության: Ռ. Մելիքյանը բարձր է զնահատել նրա երաժշտական գործունեությունը, գիտելիքները, մշտապես աշխատել է օգնել նրան: Հատկապես մոռհոգված է եղել նրա առողջական և նյութական ծանր վիճակով և անձամբ բարեխոսել Լուսժողկոմի առաջ Բրուտյանին կենսարոշակ նշանակելու մասին՝ ձգտելով ստեղծել տարեց արվեստագետի համար աշխատանքային բարենպաստ պայմաններ*: Հատկապես բարձր զնահատելով Բրուտյանի՝ տեսարանի, մանկավարժի, երաժշտ-ֆոլկլորագետի, հասարակական գործչի գործունեությունը՝ Ռ. Մելիքյանը նրան ճանաչել է որպես «Մեր հոգևոր մշակույթի վետերաններից մեկը» (10. էջ 187-188), նամակներում դիմելով Բրուտյանին «շատ հարգելի վարպետ», «սիրելի վարպետ», «խորհրդագոր վարպետ» մեծարող արտահայտություններով:

Դեռևս Գևորգյան Ճեմարանում սովորելու տարիներին (1876-1882 թթ.), տասներեքամյա Արշակը Ռուսաստանից, Թուրքիայից, Պարսկաստանից և այլ վայրերից ճեմարան ժամանած ուսանողներից սկսել էր ձայնագրել ազգային պազարող փաստաթղթերի համաձայն՝ ժողովրդական երգեր: Արշակ Բրուտյանի արխիվում պահպան փաստաթղթերի համաձայն՝ ժողովրդական երգեր նա սկսել է գրի առնել 1878-ից (11. էջ 4):

Գեղջական և աշուղական երգերի հավաքագրման գործնքացը Ա. Բրուտյանը շարունակեց նաև ճեմարանն ավարտելուց հետո՝ հրատարակման պատրաստելով իր հետագա տարիների կատարած աշխատանքի արդյունքը՝ «Ռամկական մրմունշներ» ժողովածուն: Նա այդ խիստ արժեքավոր ուսումնահրաժրությունը համձնեց Էջմիածնի տպարան. «...Վորքան է լինում նրա զարմանքը, յերբ Սինօդը արգելում է այդ յերգերը տպագրել, պատճառաբանելով որ նման զյուղացիական բաներ այդտեղ տպագրել չի կարելի» (12. էջ 8):

Այդ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում ժողովրդական երգեր հավարողները խիստ սակավաբիլ էին, որոնց թվում էր Ալեքսանդր Մխիթարյանը: Նա ուշագրավ հուշեր է բոլոր Ա. Բրուտյանի մասին. «Թեպետ ամեն ճիգ ու ջանք գործ էի դնում նիւթեր ժողովելու, բայց մինչև այսօր էլ ինձ մի աշքի ընկնող բան պակասում է. այս է՝ ձայնագրութիւնը, որովհետև զգում էի, որ առանց եղանակի, միայն յերգեր ժողովելը մասամբ անխորհուրդ բան էր. ...Թե բանի-բանի անգամ մեր քա-

* 1925 թ-ից ՀՍՍՀ ժողովությունի որոշումով հաջողվում է սոցապի նշանակած 30 տորի կենսարոշակին ավելացնել նաև անհատական թոշակ՝ 20 ո. չափով:

լարում գտնված հարգելի ձայնագրագետներին խրնորել, թախանձել եմ, որ յեղանակները չկորչելու, չաղավաղվելու համար ասածներս ձայնագրեն, բայց նրանք խոստացել են, խոստումները չեն կատարել, բայց Արշակ Բրուտյանից, որ յանդիրս հարգելով՝ բավականին եղանակներ ձայնագրեց, այն էլ տեսնենք նրբ լույս կտևնի» (13. էջ 3): Ինչպես Ա. Մխիթարյանցը, այնպիսի էլ Ա. Բրուտյանը, կանգնած էին մեծ խմբի առջև՝ ձայնագրած երգերը հրապարակել, որը ցավոր, դժվար հաղթահարելի բարդույթ էր*:

Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունշներ»-ը (միայն երգերի բանաստեղծական տեքստերը) հետագայում լույս տեսավ Ալեքսանդրապոլում և իսկույն սպառվեց (14.): Երաժշտական հասարակության պահանջարկն այնքան մեծ էր, որ ժողովածուն և երեք անգամ վերահստարակվեց**: Յավոր, հեղինակին այդպիս էլ չհաջողվեց իր կյանքի օրոր տեսնել այդ արժեքավոր ժողովածուի ձայնագրյալ տարրերակը, և միայն մեկ դար անց, Արշակ Բրուտյանի թոռնութեան անվանի երաժշտագետն և ֆոլկլորագետն Մարգարիտ Բրուտյանի մեծ ջանքերի շնորհիվ, հնարավոր եղավ ի կատար ածել անվանի բանահավաքի երազանքը և իրավանացնել «Ռամկական մրմունշներ»-ի նոտային հրատարակությունը, որը մեծ ախտանիք պահանջեց ժողովածուի տարրեր ճեռագրերի համեմատության, հայկական ձայնանշներից եվրոպական նոտագրության փոխադրման, երգերի ծանրության, բարբառային և օսար բառերի հեղինակային բառարանը լրացնելու և ընդարձակելու ուղղությամբ (15.): Բայց գեղջակական երգերից Ա. Բրուտյանը հավաքել և ձայնագրել է հոգևոր և զուսանաշուղական երգարվեստի լավագույն նմուշներ՝ կորատից փրկելով Զիվանու, Շերամի, Շիրինի, Խայտիի, Ղետրոս Ղափանցու և այլ ճանաչված աշուղների երգերը, որոնք հետազայում ամփոփվեցին նրա «Ռամկական մրմունշներ»-ի երկրորդ հատորում (16.): Ա. Բրուտյանի ստեղծագործական կյանքում առանձին բնագավառ է կազմում համերգային-խմբավարական գործունեությունը: Նրա անվան հետ է կապված Ալեքսանդրապոլում ժողովրդական հրապարակային համերգների սկզբնադրումը, բազմաթիվ երգեցիկ խմբերի ստեղծումն ու համերգային ծրագրերի պատրաստումը: Նրանք իրենց ելույթներով աշխուժացրել են տեղական դպրոցների գեղարվեստական կյանքը, տարրեր բնույթի տոնախմբություններին հանդիսավոր փոխանցել և խորապես նպաստել Շիրակի երաժշտական կյանքի զարգացմանը: Գեղեցիկ և հնչելի ձայներ ունեցող սիրողներից կազմած Ա. Բրուտյանի երկսեռ երգչախմբերի մասնակիցներն առաջինն էին, ովքեր բեմ բարձրացան ազգային տարագրեներով: Անսպաս եռանդի տեր խմբավարը սերմանել ու տարածել է բազմաձայնություն և մեծարակ նպաստել բառաձայն երգեցողության

* Բանահավաք և բանասեր Ա. Մխիթարյանցի «Տաղեր և խաղեր» ժողովածուն (1901), բայց ժողովրդական երգերից ու պարեղանակներից տեղ են զտել շարականներ, աշուղական և ազգային այլ երգեր:

** Երգարանի երկրորդ հրատարակություն՝ 1898-ին, երրորդը՝ 1901-ին և չորրորդը՝ 1904-ին:

ա մ բ ի ն ն ի 5 0 - ա մ յ ա (2 0 1 9 թ .) գ ո ր ծ ո ւ ն ե ռ ո ւ թ յ ա ն ը

տարածմանը: Իր ստեղծած այդ երգեցիկ խմբերը Բրուտյանը նույնիսկ տրամադրել է Ալեքսանդրապոլ համեմունքներով ժամանած Ք. Կարա-Մուրզային և Կոմիտասին:

Ա. Բրուտյանը հայտնի է նաև որպես երաժշտ-տեսարան և հեղինակ, տպագիր և անտիպ աշխատությունների՝ «Համենատական դասագիրը հայկական և եվրոպական ձայնագրության»*, «Դասագիրը հայկական երաժշտության», «Շարականների ցանկը ըստ օրերի», «Դասագիրը հայկական եկեղեցական ձայնագրության»: Բազմակողմանի օժտված անձնավորություն լինելով Ա. Բրուտյանը զրադշում էր նաև նկարչությամբ: Ազատ ունկնդրի իրավունքով 1903-ին նա կատարելագործվել է Ս. Պետերպուրգի Գեղարվեստի Ակադեմիայում: Նրա վրձնին են պատկանում վերը նշշված բանասեր և բանահավաք Ալեքսանդր Միհրարյանցի, գրականագետ և մատենագետ Գարեգի Լևոնյանի, Ալեքսանդրապոլի Սր. Փրկիչ եկեղեցին կառուցող հայ որմնադիր և բանակազմարդող վարպետ՝ Թաղևոս Անտիկյանի և այլ անվանի համարադարձների դիմանկարները: Այսօր, Ա. Բրուտյանի նկարների մի մասը գտնվում է Գյումրու Պատկերասրահում, մի մասն էլ՝ անհատական հավաքածուներում: Ցավոր, մեր օրեր չի հասել նրա ամենահայտնի աշխատանքներից մեկը՝ քաղաքի Սր. Աստվածածին եկեղեցու բնի առջևի 12 առարյալների պատկերները**: Ա. Բրուտյանի վրձնին են պատկանում նաև հունաց ուղղափառ եկեղեցու համար արված սրբապատկերները (17. էջ 580): Նա ամբողջ սրտով կամնենում էր իր աշխատանքային եռանդը, ուժերն ու կյանքը նվիրաբերել վերածնված հայ ժողովրդին, սակայն նա վատառողջ էր: Զգացնել էր տալիս անցած տարիներին կուտակած խնդիրները. զիշերօրիկ դարցի խիստ օրակարգը, Էջմիածնի տենդությանական պայմանները, որին ավելանում է նոր փորձանք՝ աստիճաններից վայր ընկնելն ու կոտրվածքը: Դեպքից մի փորք անց, Ա. Բրուտյանը կարված է ստանում և վերջնականապես հօդս են ցնդում ապարինվելու հոլուսերը: Անդամարդության ամենայն հոգատարությամբ խնամեց նրա երկրորդ կինը՝ Արեգականը***: Արեգականը գյուղից եկած անզրագետ կին էր, սակայն բարեհոգի, լայնասրտ, նրբանկատ և արժանապատիվ մի անձնավորություն, ով հասկանում և գնահատում էր ամուսնու՝ զրբին և արվեստին նվիրված լինելը: Յոթ ծանր տարիներ նաև առանց տրտունջի

* Նշված ուսումնասիրություններից «Դասագիրը հայկական եկեղեցական ձայնագրության» աշխատությունը միակն է, որը լույս տեսավ Վաղարշապատում (1890 թ.) և մինչև օրս գործնականորեն պիտանի է հայկական ձայնագրության արվեստն ուսումնասիրուների համար:

** Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ ժողովրդի մեջ հայտնի նաև Սուրբ Յոթ Վերք անվամբ, 1988-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժից քիչ է տուժել, սակայն պոկված երկու գմբեթները վնասել են բեմը և Ա. Բրուտյանի հեղինակած սրբապատկերները: Այսօր այդ գմբեթները դրված են եկեղեցու բակում:

*** Ա. Բրուտյանի առաջին կինը՝ Փեփրունեն, որն իր երեխաների մայրն էր և գիտեցողների հիշողության մեջ մնացել էր ինչպես ալեքսանդրապոլցիներն են ասում՝ իրքի մի խանում կին, վաղուց մահացել էր:

յնամենց հիվանդին, շոյվելով իրեն ուղղված «ներիդ, Արեգնազ» ամուսնու խոսքերից, հիվանդության անհարմարությունների համար նրա ունեցած ապրումներից, ամրող գերդաստանի համակրանքից ու սիրուց, խոր հարգանքից, որը նա վայելեց մինչև իր իսկ կյանքի վերջին օրը: Արշակ Բրուտյանն իր մահկանացուն կնքեց 1936 թ-ի օգոստոսի 25-ին: Սպում էր ողջ Լենինականը: Արվեստի և գրականության մի շարք գործիքները (Մ. Աղայան, Ս. Գասպարյան, Թ. Ալբունյան, Մ. Միհրանյան, Ա. Քոչարյան, Ռ. Թերլեմեզյան և որիշներ) տպագրեցին դամբանականը, որտեղ Բրուտյանի բազմակողմանի գործունեությանը տվեցին բարձր գնահատականները. «Ծնորիկի Արշակ Բրուտյանի ժրաշան աշխատանքի, կորածից փրկված են Լենինականի շրջանին պատկանող հարյուրավոր ժորվլորդական երգեր և բազմաթիվ պարերգեր ու պարեղանակներ: Նա հավաքել և ձայնագրել է նաև քրդական, թորքական ժողովրդական երգեր ու պարեղանակներ, որոնք նույնպես հետաքրքիր նյութեր են հետագա ուսումնասիրությունների համար: Այս լույս ու մունջ աշխատանքը նա կատարել է համեստ կերպով, լույս ու մունջ, առանց ավելորդ թմրկահարությունների, իրեն հասուլ կուանդուղությամբ»:

Ծանոթանալով Ա. Բրուտյանի գործունեությանը կարելի է զայ հետևողաբան, որ արվեստի և գիտության բոլոր բնագավառներում գործող հայ առաջադիմ մտավորականների նման՝ նա ասպարեզ է եկել կյանքի պահանջով, որը հայ իրականության մեջ նշանավորվեց իրքի ազգային զարդումի շրջան, ուստի անհնար է ուսումնասիրել նրա արվեստը հայ իրականության մեջ XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում տեղի ունեցած քաղաքական և հասարակական իրադարձություններից ու դրանց ծշմարտացի արտացոլումը հանդիսացող արվեստի պատմությունից անկախ: Հայ արվեստի երախտավորներից շատերի նման, Արշակ Բրուտյանն իր ուսերի վրա կրեց մշակութային կյանքի առաջնադաշտման ծանրությունը, ստեղծելով նոր ավանդույթներ, հիմքեր, որոնց հարստացումն ու զարգացումը հետագա տարիներում ապահովեց ազգային արվեստի վերելքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Պարսամյան Վ., Ա. Գրիբուելովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1947 թ.: էջ 27: *Parsamyan V. A., A. Griboedov' ev hay-rusakan haraberutyunyev'*, Yer., HSSH GA, 1947 th.
2. Փածեև Ա., Ռուսիա և արևոտական կրաքարտը 20-ական տարիների մասին, Մ.: անդամություն, 1958, գլ. 5. *Fadeev A., Rossiya i vostochnyj krizis 20-tykh godov XIX veka.*, M.: izd. AN SSSR, 1958, gl.5.
3. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1969 թ.: էջ 213: *Ghanalanyan A., Avandapatum*, Yer., HSSH GA, 1969 th.
4. Հայկական ՍՍՀ վարչատերիստորիալ բաժանումը, (կազմ.՝ Ն. Ադամյան), Եր., Հայաստան, 1971 թ.: *Haykakan SSH varchateritorial bazhanum'*, (kazm.: N. Adamyan), Եր.: Hayastan, 1971 th.
5. //Արարատ ամսագիր, Էջմիածին, 1876 թ., N 1: //Ararat

Ն Ա Խ Ի Ր Վ Ո Ւ Մ Է Ե Պ Կ Հ Ե Ֆ ա մ ր ի ն ն ի 5 0 -ա մ յ ա կ ի ն (2 0 1 9 թ .)

- amsagir, Ejmiatsin, 1876 th., N 1.
6. Դուրգարյան Կ., Արշակ Բրուտյան, //Բանվոր, Լինինական, 1971թ., N 159, - 8.VII: *Durgaryan K., Arshak Brutyan*, //Bavor, Leninakan, 1971 th., N 159, - 8.VII:
7. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար, Ե., ՀՀ ԳԱԱ, 1971 թ.: էջ 54 :
8. ԳԱԹ, Ա. Բրուտյանի ֆոնդ, N 8 աֆիշ: GATH, A. Brutyan fond, N 8 afish.
9. Պարսամյան Վ., Հայ ժողովոյի պատմություն, h. 3, Եր., Լուս, 1967 թ.: *Parsamyan V.*, Hay zhoghovrdi patmuthyun, h 3, Yer., Luys, 1967 th.
10. //Բաներեր Հայաստանի արխիվների, Եր., 1967 թ., N 2: //Banber Hayastani arkhivneri, Yer., 1967 th, N 2.
11. Յերածովական Արշակ Բրուտյանի արխիվը, //Խորհրդային Հայաստան, Եր., 1936 թ., N 213, - 15.9: *Yerazhshtaget Arshak Brutyan arkhiv'*, //Khorhrdayin Hayastan, Yer., 1936 th., N 213, -15.9,
12. Աղայան Մ., Արշակ Բրուտյան. Ծննդյան 70-ամյակի առթիվ, //Խորհրդային արվեստ, 1935, Եր., N 1: *Aghayan M.*, Arshak Brutyan. Tsnnndyan 70-amayaki arthiv, //Khorhrdayin arvest, 1935, Yer., N 1.
13. Դուրգարյան Կ., Արժեքավոր ներդրում հայ երգարվեստի մեջ. Արշակ Բրուտյանի «Ուամկական մրմունչներ» հրա-

- տարակության առթիվ, //Բանվոր, 1986 թ., Լենինական, N 26, -31.1: *Durgaryan K.*, Arzheqavor nerdrum hay ergarveti mej. Arshak Brutyan "Ramkakan mrmunjner" hratarakuthyan arthiv, //Bavor, 1986 th., Leninakan, N 26, - 31.1:
14. Բրուտյան Ա., Ուամկական մրմունչներ, Ալեքսանդրապոլ, 1895: *Parsamyan V.*, Hay zhoghovrdi patmuthyun, h 3, Yer., Luys, 1967 th.
15. Բրուտյան Ա., Ուամկական մրմունչներ, h.1, Եր., Սովետական գրող, 1985 թ., - 239 էջ: *Brutyan A.*, Ramkakan mrmunjner, h. 1, Yer., Sovetakan grogh, 1985 th., - 239 ejj.
16. Բրուտյան Ա., Ուամկական մրմունչներ, h. 2, Եր., Անրոց գրուած, 2002 թ., - 223 էջ: *Brutyan A.*, Ramkakan mrmunjner, h. 2, Yer., Amrotz grup, 2002 th., - 223 ejj.
17. Բրուտյան Ա. Ա., Բրուտյան Արշակ (իր մասին), ՀՍՀ, h.2, Ե., ՀՍՍՀ ԳԱ, 1976 թ.: *Brumyan M. A.*, Brumyan Arshak (ir masin), HSH, h. 2, Yer., HSSH GA, 1976 th.
18. //Խորհրդային Հայաստան, երկարաբարերթ, Եր., 1936 թ., N 15-16: //Khorhrdayin Hayastan, yerkshabatherth, Yer., 1936 th. N15-16.

Բանային-բառեր: Ալեքսանդրապոլ-Լենինական, Տաշհալա (Քարաբերդ), Հաշդական, Ճաղավանք, Գևորգյան ճեմարան, Սրբական մրմունչներ, Հայոց պատկանական ժողովածություն, «Ուամկական մրմունչներ» ժողովածու, խմբավար, ձայնագրյալ ժողովածու:

Ключевые слова: Александрополь-Ленинакан, Ташхала (Караберд), Аричаванк, Семинария Геворгия, церковь Св.Богородицы (церковь Семь Святых Ран), Романос Меликян, народная песня, этнография, сборник "Крестьянские напевы", хормейстер, собиратель песен.

Key words: *Alexandrapol-Leninakan, Tashghala (Qaraberd), Haritchavank, Gevorgyan Seminary, St. Astvatsatsin Church (St Yot Verq), Romanos Melikyan, popular folk song, folk collection, "Peasant Chants", choir conductor, recorded collection.*

Տեղեկություններ հեղինակի մասին: ԷԼՈՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՈՎԻ (ծնվ. 1946), ԵՊԿ-ի ֆոլկուրագիտուրյան ամբիոնի ղոցենան (1989): Մասնակցել և ղեկավարել է բազմաթիվ գիտարշավներ, հեղինակել է միշարք գիտական հոդվածներ, համահեղինակ է «Հայ մոնղոլի երաժշտություն» (1991) մատենաշարի:

Сведения об авторе: ЭЛОЯН АСМИК ВАРДАНОВНА (род. 1946г.), доцент кафедры музыкальной фольклористики ЕГК (1989г.), участник и организатор многих фольклорных экспедиций, автор научных статей, соавтор библиографического труда "Армянская монодическая музыка" (1991).

Information about the author: ELOYAN HASMIK VARDAN (b. 1946). Associate Professor, Department of Folk Music Studies, Yerevan State Conservatory (1989); participant and head of expeditions, author of a number of research articles, co-author of the series "Armenian Monodic Music" (1991).

Резюме

Музыковед, доцент ЕГК Асмик Вардановна Элоян.-
«Arshak Brutyan (1864-1936)».

Один из образованнейших людей своего времени, музыковед-фольклорист, заслуженный педагог, хормейстер, художник, музыкально-общественный деятель- Аршак Брутян жил и творил в конце XIX- начале XX века. Его творчество послужило процветанию армянского народного музыкального искусства. Больше полувека он преподавал почти во всех учебных заведениях родного Александраполя (Ленинакан). Человек неуемной энергии, он сумел организовать хоровые коллективы и выступая с концертами пропагандировал армянскую народную музыку и способствовал развитию хорового искусства в Ширакской области. А.Брутян одним из первых смог оценить важность и значение народного песенного искусства, сумев записать и собрать около 500 крестьянских, гусано-ашугских и духовных песен. Венцом его этнографической деятельности стали два сборника народных и гусано-ашугских песен "Крестьянских напевы", которые по сей день являются одними из лучших сборников народного песнетворчества.

Summary

Musicologist, Docent of YSU Hasmik Vartan Eloyan.-
"Arshak Brutyan (1864-1936)".

Arshak Brutyan, one of the most educated people of his time, a musicologist and ethnographer, a renowned pedagogue, a horn player, and a pianist, lived and worked in the late 19th and early 20th centuries. His work greatly contributed to the study of Armenian folk music. For more than half a century he taught at almost every school in his native Alexandropol (Gyumri). A man of immense energy, he organized choir groups to promote Armenian folk music and develop choir singing traditions in the Shirak region. He was one of the first to value the importance and significance of folk singing and recorded and compiled about 500 samples of peasant, gusan and ashugh, and sacred songs. The culmination of his ethnographic work was his collection of folk and gusan-ashugh songs, The Peasant Melodies, which to this day is one of the finest collections of folk songs.

Կ ո մ ի տ ա ս ա զ ի տ ո ւ թ յ ո ւ ն

ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

**Արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
Գիտական գծով պրոռեկտոր
E-mail: tsmovsisyam@yahoo.com**

ԵՐԱԺԾՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ-ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Կոմիտասի բանգարան-ինստիտուտի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի Մեծն Կոմիտասի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 26-ին մեկնարկում է միջազգային փառատոն-գիտաժողովը: Այս տարին բացառություն չեր, սակայն Երկիր մոլորակին պատուհասած COVID 19 թագավարակն իր խնդրագրումները պարտադրեց փառատոնի անցկացման ձևաչափում: Փառատոնի շրջանակներում նախատեսվող հիմնական միջոցառումներն իրականացվեցին հեռուստատեսային տարրերակով, կենդանի համերգային ծրագրերը փոխարինվեցին տեսազրկած ելույթների կամ տեսահոլովակների ցուցադրումներով, միջազգային գիտաժողովներով (նաև արտազնա)՝ հանդիպում-քննարկումներով: Այդուհանդեռձ, փառատոն-գիտաժողովի բացման օրվա ավանդույթ դարձած արարողությունն այս տարի նույնպես իրականացավ Պամիրնում Վարդապետի հիշատակը հավերժացնող հոգեհանգստյան արարողակարգով, աղոթքով, խճկարկումով և ծաղկեասակների ու ծաղկեինքների խոնարհումով նրա շիրմին: Փառատոնը եզրափակող միջոցառումների անցկացման վայրք ընտրվեց Հատիճի վանական համալիրը, որտեղ Հայաստանի պետական կամերային երգչախմբի արական կազմի կատարմամբ հենց և տեսազրկեց Կոմիտասի Պատարագը (Խմբավար՝ Ռոբերտ Մլքեանի ղեկավարությամբ), իսկ երաժշտագիտական նախաջրան-քննարկումն անցկացվեց Հատիճի վանքի դպրատան հոգևոր լիցերով հարուստ, տրամադրող և խորհրդավոր սրահում, ինչի շնորհիվ երաժշտագիտական քննարկումներն անցան միանգամայն անկեղծ, ինքնարուխ և ջերմ մթնոլորտում: Նրատաշրջան-քննարկումներից առաջինը նվիրված էր հայ երաժշտագիտության արդի հիմնախնդիրներին: Առաջին քննարկման զյլիսավոր բանախոսն էր արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մհեր Նավոյանը: Երկրորդ քննարկման թեման նվիրված էր հայ երաժշտագիտության մեծ երախտավորներից մեկի, անվանի կոմիտասագետ, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի բազմավաստակ պրոֆեսոր Ռոբերտ Աբայանը:

Եթի ծննդյան 105-ամյակին: Ճանաչված երաժշտագետի կյանքն ու գործը ներկայացնող ծավալուն զեկույցով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ երաժշտության պատության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյանը: Հայ երաժշտագիտական մտքի մեծ երախտավորի մասին ուշագրավ ելույթներով, հաղորդումներով և պարզապես ջերմ հուշերով ներկայացան պրոֆեսորներ Արմեն Բուղալյանը, Լիլիթ Երնջակյանը, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն, արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հարությունյանը և որիշներ: Գիտաժողովը քննարկումների մասնակիցները համակարծիք էին, որ նման հանդիպումները ոչ միայն հետարքիր են իրենց բովանդակությամբ, անցկացման ոչ սովորական ձևաչափով, այլև շատ արդյունավետ, հատկապես համապարակի և արտակարգ դրույթան իրավիճակով թելադրված երկարատև մեկուսացումից հետո՝ համախմբելով ներկամերին կենդանի շփման և մտքերի փոխանակման բացառիկ հնարավորությամբ:

Հներեցողին ենք ներկայացնում գիտաժողովը քննարկման առիթով ծննդական տարրերով որոշ մտորումներ արդի հայ երաժշտագիտական մտքի հիմնախնդիրների շուրջ:

Կոմիտասի անձի և գործի հանդեպ մեր նվիրումն ու խոնարհումը միայն հորելյանական տարեթվերով չէ, որ պիտի արտահայտվի: Այս մեզ համար՝ Կոմիտասի անունը կրող բուհի համար, հանապաօքրյա կենսակերպ պիտի լինի, և դրանում առաջնային դերակատարում պետք է ունենան Հայրապետի գործի արժեվորությերն ու շարունակողները՝ երաժշտագետները: Երաժշտարկեստի որ բնազավառում էլ ծավալվեն մեր տուննասիրությունները, առաջին հերթին դրանք պետք է լինեն մեր մեծ գործակությունները, առաջին հերթին դրանք պետք է լինեն անկեղծ սիրով ու նվիրվածությամբ լեցուն մեր բնարած մասնագիտության հանդեպ: Այսքանով թերևս հակիրճ մեր պատկերացումն այսօրվա հայ երաժշտագետի կերպարի մասին:

Ինչ վերաբերում է հայ երաժշտագիտության արդի

հիմնախնդիրներին, որոնք պետք է ընթանան մի կողմից հայ երաժշտագիտական մտքի անցած ուղին, մեր մեծերի, ուսուցիչների գիտական ժառանգությունը, պահելու, պահպանելու, ուսումնասիրելու, արժանվույնս զնահատելու, նրանց վաստակը, նրանց թողած արխիվները հանրայնացնելու, նոր հրապարակումներով հավերժացնելու ողղությամբ: Մյուս կողմից՝ այդ հսկայական ինտելեկտուալ հարստությունն անհրաժեշտ է զարգացնել ու բազմապատկել՝ այդ ամենին ավելացներով այսօրվա՝ XXI հարյուրամյակի տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունները, հարակից մասնագիտությունների նորարարական ձեռքբերումները, համացանցի ընձեռած անսպառ տեղեկատվական նյութը:

Անշուշտ, երաժշտագիտության նյութը ինքը երաժշտությունն է՝ համաշխարհային կոմպոզիտորական արվեստն՝ իր հարուստ պատմական անցյալով, բազմաժամկետ ու բազմառ գրություններով, և իհարկե, արդի իրականության իրարամերժ, հասկանալի և անհասկանալի, պարզունակ կամ աներևակայելի խրին ստեղծագործական փորձարկումներով, որոնց պատմատեսական, գեղագիտական ու վերլուծական մեկնությունը պարտավոր է իրականացնել արդի երաժշտագիտությունը՝ մնալով անշատ, օրյեկտիվ, համարձակ ու ազնիվ իր զնահատականներում:

Համաշխարհային երաժշտական մշակույթի այս արդի համատեքստում հայ երաժշտարվեստի համակողմանի ուսումնասիրությունն ու զնահատումն արդի հայ երաժշտագիտության կարևոր հիմնադրույթներից մենքն է: Ընդ որում ուսումնասիրության նյութը, քննության առարկան կարող է վերաբերել թե՛ հնագույն պատմական անցյալի՝ միջնադարագիտության, հոգեվոր երգարվեստի ասպարեզին, թե՛ ժողովրդական, նոր ու նորագոյն շրջանի, XIX - XX դարերի պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի անցած ուղղությունը, անհամանային ուսումնասիրմանն ու վերագնահատմանը, թե՛ արդի կոմպոզիցիոն տեխնիկաներով և տեխնոլոգիաներով բազմադեմ մտահղացումների դրսորումների վավերացմանը: Ո՞վ, եթե ոչ հայ երաժշտագետը, պիտի զրադիլի մեր երաժշտական մշակույթի խնդիրներով, ո՞վ ավելի լավ կարող է հասկանալ հայ կոմպոզիտորի լեզուն, հոգերանությունը, գենետիկ ինքնությունը, ո՞վ ավելի լավ կարող է ընկալել այսօրվա իրականության մեջ, մեր կողրին ապրող ու արարող կոմպոզիտորի հուշական աշխարհը... Միանշանալի, հայ երաժշտագետը: Սակայն, ճշմարիտն ասած, ժամանակակից արվեստագետի՝ այսօր, թիւ առաջ ստեղծված գործերի մասին զնական տարրես ամենանշանական է առաջարկությունը՝ ամենախիստ դատավորի՝ ժամանակի փորձությունն անցած արվեստի գործերի դեպքում: Սակայն, վավերացնելով նոր գործերի ստեղծման փաստն իսկ, կարող ենք խթանել կոմպոզիտորական արվեստի հարատևման, շարունակականության զաղափարին:

Քնն ուղղություններով կարող են ծավալվել արդի հայ երաժշտագիտության հիմնախնդիրները: Այս հար-

ցարումը Երևանի Կոմիտասի անվան կոմներվասորի-այում առարկայական տեսք ստացավ այն բանից հետո, եթե մեկ տարի առաջ միջազգային հավատարմագրման փորձագետներն իրենց առաջարկներում նշեցին նաև ԵՊԿ-ի գիտական ուսումնասիրությունների առաջնային նշանակություն ունեցող թեմաների ցանկի անհրաժեշտությունը: Կարծ ժամանակում մեր երաժշտագիտական ամբիոնների կողմից ներկայացվեցին այդ առաջարկները, որոնց հիմնա վրա կազմվեց հիմնավոր մի փաստաթուղթը: Ներկայացված թեմատիկ առաջարկները վերաբերում են հետևյալ ողբուժների՝ տեսական, պատմական, ֆոլկորագիտական, միջդիսցիպլինար, մշակութարանական ուղղվածությանը: Բոլոր ամբիոնների առաջարկներում նշանակալի տեղ է հատկացվում մեր երաժշտավորների նուավոր ժառանգության ու հանրայնացմանը:

Ուրախությամբ կցանկանայի նշել, որ այս ուղղությամբ արդեն ունենք որոշակի ձեռքբերումներ. խրմագրվեց և հրատարակվեց Սիրայել Տերյանի «Հայ խմբերգային գրականություն» դասագիրքը, վերահատարակվեց Նովալիս Դերյանի «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն» դասագիրքը: Երկուսն էլ հայերեն լեզվով անշափ կարևոր և անհրաժեշտ հրապարակումներ են, և այդ կարևոր նախաձեռնությանն օժանդակեց ՀՕՖ-ի հայաստանյան գրասենյակը: Աշխատանքներ են տարվում Ո-որերս Աթայանի, Էղվարդ Փաշինյանի, Գևորգ Արմենյանի, Ռաֆայել Ստեփանյանի, Սուսաննա Ամասունու, Մարգարիտ Հարությունյանի, Շոշանիկ Ավոյանի արխիվների ուսումնասիրման ուղղությամբ: Ամունը կոնսերվատորիան ձեռքբերելու հայ կոմպոզիտորական դպրոցի ուսհվիրաներից մեկին՝ Գրիգոր Եղիազարյանին վերաբերող արժեքավոր արխիվային նյութը: Ազայիսով, նման նյութերի շնորհիվ ոչ միայն հնարավոր է դառնում հավերժացնել երաժշտագիտական մտքի մեր մեծերի հիշատակը, այլև նրանց թողած ձեռագիր նյութերի հրատարակման հարստացվում է ուսումնական պրոցեսին օժանդակող հայալեզու գրականությունը:

Ներկայանալի տեղ են զրադեցնում հայ կոմպոզիտորական դպրոցի շատ երաժշտավորներ, որոնց ստեղծագործությունն առ այսօր ուսումնասիրված չէ կամ ամբողջական ուսումնասիրման կարիք ունի: Նշվում է հայ կոմպոզիտորական արվեստի տարրերը ժանրերի (օպերա, բալետ, վոկալ-սիմֆոնիկ, վոկալ կամերային, սիմֆոնիա, գործիքային կոնցերտ, ստատ, կվարտետ, անսամբլային երաժշտություն, վոկալ արվեստ և այլն) ուսումնասիրման անհրաժշտությունը, որոնք լավագույն դեպքում ուսումնասիրված են մինչև XX դարի 80-ականները, իսկ վերջին տասնամյակների ընթացքում այդ ժանրերում ստեղծված գործերի մասին՝ բացի առանձին հոդվածներից, գրեթե ոչինչ չի գրվել, համենայն դեպք, մասնագիտական ծավալուն ուսումնասիրության տեսրով:

Ուշագրավ թեմատիկ մշակումների առաջարկներ կան միջնադարագիտության, հայկական ձայնակարգերի առաջնահատկությունների, հայ ավանդական, ծիսական արարողակարգերի երաժշտական բաղադրիչի

Կ ո մ ի տ ա ս ս ա զ ի տ ո ւ թ յ ո ւ ն

համեմատական ուսումնասիրությունների վերաբերյալ:

Այս փաստաթուղթը կարող է հայեցակարգային լինել ոչ միայն կոնսերվատորիայի պրոֆեսորադասասաստական անձնակազմի գիտական ուսումնասիրությունների կամ երաժշտագետ ուսանողների և ասպիրանտների ավարտածառերի թեմաների ընտրության համար, այլև այս ասպարեզում գիտահետազոտական գործունեություն իրականացնող գործընկեր հաստատությունների համար, ինչպիսիք են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, Կոմիտաս թանգարան-ինստիտուտը, Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ը, Ա. Խոչաւորյանի տուն-թանգարանը, և այլն, որոնց հետ մշտապես համագործակցել ենք, սակայն ցանկալի է Էլ ավելի ակտիվացնել ստեղծագործական փոխանագործակցությունը, և, որ ամենակարևոր է, հաղորդակցական, տեղեկատվական համագործակցությունը: Մանավանդ, որ բոլոր նշված հաստատություններում աշխատում են նոյն մասնագետները, որոնք դասավանդում են Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, որոնք նոյն կոնսերվատորիայի շրջանավարտներն են, որենին նաև Կոմիտաս Վարդապետի գործի և պատգամների շարունակողները: Այս առումն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան սիրով և պատրաստակամությամբ իր մասնակցությունը կարող է ունենալ հայ երաժշտագիտության խնդիրներին առնչվող քննարկումներին, գի-

Բանային-քայլեր. Կոմիտաս, գիտաժողով, Ռոբերտ Առայան, երաժշտագիտական ժառանգություն, արժեվորում, զարգացման հեռանկարներ:

Ключевые слова: Комитас, научная конференция, Роберт Атаян, музыковедческое наследие, признание, перспективы развития.

Key words: Komitas, scientific conference, Robert Atayan, musical heritage, recognition, development prospects.

Տեղեկություններ հետինակի մասին. ՍՊՎՍԻՒՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ. 1989-ին ավարտել է ԵՊԿ երաժշտագիտական բաժինը (գիտական դեկավար՝ արվ. թեկնածու, պրոֆ. Ա. Բուղալյան): «Ետրուհական կրթությունը շարունակել է Սովորական Արվեստագիտության միութենական ինստիտուտում (Վասեոյունական արվական ակադեմիայի մասնակիությամբ)»: 2011-ին պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Եղար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունների ոճական առանձնահատկությունները» թեմայով (դեկ.՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Կ. Ա. Զալացպանյան): արժանաւորվ «ՀՊՀ-ի կողմից արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի, 2012-ին՝ դոցենտի գիտական կոչման: Աշխատել է «Արվեստ» ամսագրի խմբագրությունում որպես երաժշտության քանդակ խմբագրի, «Հայկական հանրագիտարանի հրատարակչությունում: 1989-ից առ այսօր աշխատում է ԵՊԿ-ում (1989-2012 թթ.)՝ ԵՊԿ ուկանությունը և գիտխորհրդի քարտուղար, 1994-ից՝ Երաժշտության տեսության ամբիոնի դասախոս, 2004-ից՝ դոցենտ): 2018-ից նշանակվել է ԵՊԿ գիտական գծով պրոպեկտոր: «Ետինակ է 3 մենագրությունների՝ «Եղար Հովհաննիսյան». Կյանք իուշերում (Տեքստը գրի առավ և կազմեց Ծ. Սովորականը», Եր., «Տիգրան Մեծ» հրտ., 1998 թ., «Եղար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները», Եր., «Իրանագիտական Կովկասյան կենտրոն» 2012 թ., «Յուրի Հարությունյան. Կյանքի գուգահեռուականներ», Եր., «Կոլլաժ» 2014 թ., ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածների («Արվեստ», «Երաժշտական Հայաստան», «Պատմաբանասիրական հանդես», ԵՊԿ-ում «Հանդես», Բեյրութի «Հայագիտական հանդես», «Մշակալինա ակադեմիա» պարբերականներում, միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածումներում):

Сведения об авторе: МОССИСЯН ЦОВИНАР ГРАЙРОВНА, в 1989 году окончила отделение музыковедения ЕГК (научный руководитель канд. иск., проф. А. Бугдагян), после чего продолжила обучение в Московском Всесоюзном институте искусствознания под руководством доктора иск., проф. Изабеллы Еолян (1992-1994). В 2011 году защитила кандидатскую диссертацию на тему “Стилевые особенности камерно-инструментальных и симфонических произведений Эдгара Оганесяна” (рук. д-р искусствоведения, профессор К. А. Джагацян), ВАК РА присвоил ей научную степень кандидата искусствоведения. В 2012 году получила ученое звание доцента. Работала редактором музыкального отдела в редакции журнала “Арвест”, в издательстве Армянской Энциклопедии. Начиная с 1989 г. работает в ЕГК (1989-2012 – секретарь Ректората и Ученого совета ЕГК, с 1994 г. - преподаватель кафедры Теории музыки, с 2004 г. - доцент). В 2018 году была назначена на должность проректора ЕГК по науке.

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊԿ ՀԱՅ ԵՐԱԺԴՅԱՆԱԿԱՆ ՓՈՂԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ

Автор трех монографий: “Эдгар Оганесян. Моя жизнь в воспоминаниях” (автор текста и редактор Ц. Мовсисян) Ер.: Тигран Мец, 1988; “Камерно-инструментальные и симфонические произведения Эдгара Оганесяна”, Ер.: Кавказский центр иранистики, 2012; “Юрий Арутюнян: жизненные параллели”, Ер.: Коллаж, 2014, а также более тридцати научных статей в периодических изданиях “Арвест”, “Еражштакан Айастан”, “Патмабанасирakan андес”, “Андес” ЕГИТК, “Айагитакан андес” (Бейрут), “Музыкальная академия” и в сборниках материалов международных научных конференций.

Information about the author: MOVSISYAN TSOVINAR HRAYR graduated in 1989 from the Department of Musicology at the YSC (Research supervisor A. Budghaym, Ph. D. in Arts, Prof.). In 1992-1994 she completed her postgraduate studies at the Moscow All-Union Institute for Art Studies under the guidance of Doctor of Arts, prof. Isabella Elyan. She worked as Music Department editor in the editorial office of "Arvest" magazine, and in the Armenian Encyclopedia Publishing House. Since 1989 she is working at the YSC. In 1989-2012 she was a Secretary of the Administration and Academic Council of the YSC. In 1994-2004 she was a lecturer and since 2004 an Associate Professor at the Department of Music Theory. In 2018 she was appointed Vice-Rector for Science of the YSC. In 2011 Ts. Movsisyan defended her Ph.D. thesis on «Stylistic Characteristics of Edgar Hovhannisyan's Chamber Instrumental and Symphonic Works» (the guidance of Doctor of Arts, prof. K. A. Jaghatzparyan), for which the HAC of the RA awarded her the scientific degree of Candidate in History of Arts, and in 2012 she received the academic title of Associate Professor. She is the author of three monographs: “Edgar Hovhannisyan. My Life in Memories” (the text was written down and edited by Ts. Movsisyan) Yerevan, Tigran Mets, 1988; “Chamber Instrumental and Symphonic Works by Edgar Hovhannisyan”, Yerevan., Caucasus Center for Iranian Studies, 2012; “Yuri Harutyunyan: Life Parallels”, Yerevan, Collage, 2014. She has also published over thirty research articles in “Arvest”, “Yerazhshtakan Hayastan”, “Patmabanasirakan Handes”, “Andes” EGITK, “Ayagitakan Handes” (Beirut), and “Musikalnaya Akademiya” periodicals, as well as in proceedings of international scientific conferences.

Резюме

Кандидат искусствоведения, доцент, проректор по научной работе ЕГК Цовинар Грайровна Мовсисян. - “Проблемы современного музыковедения. Размышления о международном фестивале-конференции «Комитас»”.

Статья посвящена фестивалю-конференции «Комитас», которая проходила в нынешнем году в монастырском комплексе Аричаванк. Музыковедческие дискуссии, проводимые в рамках мероприятия, были посвящены актуальным проблемам армянской музыкальной науки, а также 105-летию со дня рождения выдающегося армянского музыковеда Роберта Атаяна. Кроме того, в статье представлены задачи современного армянского музыкоznания в контексте научной деятельности Ереванской консерватории им. Комитаса. Признавая ценность научного наследия наших знаменитых предшественников, автор констатирует необходимость его дальнейшего развития с использованием многочисленных неисчерпаемых информационных и технологических возможностей, существующих в XXI веке.

Summary

Musicologist, PhD candidate, Docent of YSC Tsovinar Hrayr Movsisyan. - “Problems of modern musicology Festival “Reflections on the Komitas International Conference””.

The article reviews the “Komitas” Festival-Conference, which was held this year in the monastery complex of Harichavank. Musical discussions of the event concerned topical issues of Armenian musical science, as well as the 105th anniversary of Robert Atayan, one of the most prominent Armenian musicologists. The article also presents the objectives of contemporary Armenian musicology within the context of the research activities at the Komitas Yerevan State Conservatory. Recognizing the value of the scientific heritage of our famous predecessors, the author states the need for its further development using endless information and technology capabilities existing in the 21st century.

ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱՀԴԻ ԿԻՐԱԿՈՒՅԱՆ

**Երաժշտագետ-ֆոլկլորագետ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ**

E-mail: anki.mus@mail.ru

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԳԵԿՈՂՈՐԾՅԱՆ ԲԱԺՆԻ ԻՎԱՅՐ

«**Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» առարկայի դասավանդման հիմքը Կոմիտասի անվան կոնսերվատորիայում դրվել է դեռևս 1960-ականներից՝ դասընթացի և համանուն դասագրքի հեղինակ, երաժշտագետ-ֆոլկլորագետ, պրոֆեսոր Մարգարիտ Արամի Բրուտյանի (1922-2002 թթ.) կողմից: Տարիների ընթացքում դասագիրքը հրատարակվել և վերահրատարակվել է մնալով անփոխարինելի՝ բուհական ազգային երաժշտական գրականության ցանկում:**

Դասագիրքը բաղկացած է երկու բաժնեց՝ ա) «Գեղջկական երգի երաժշտական լեզվի տարրերն ու կոմպոզիցիոն առանձնահատկությունները», բ), «Գեղջկական երգի թեմատիկան և ժանրերը»: Նյութը նախատեսված է երաժշտագիտական, ստեղծագործական և խմբավարական բաժինների համար: Վերջին տարիներին, դասընթացի ծրագրում ներառվել է նաև երաժշտագետ-ֆոլկլորագետ, պրոֆեսոր Ալինա Աշոտի Փահլևանյանի տեսական աշխատությունը՝ որպես հավելում ոիթմիկայի բաժնում:

1980-ականներից մեր կողմից առարկան դասավանդվում է նաև ժողովրդական նվագարանների և երգեկողործյան բաժնի ուսանողներին:

Սակայն, Սպիտակի 1988 թվականի երկրաշարժը, այնուհետև 1990-ականների Արցախյան պատերազմը, Հայաստանում տիրող տնտեսական, բարոյահոգերանական ծանր վիճակի ամենասահելիորեն նպաստեցին նաև կրթական համակարգի աստիճանական խարխըլմանը:

Արդյունքում, 1990-ականների ուսանող սերնդի կրթական պատրաստվածությունն անվիճելիորեն սկսեց զիշել նախորդ սերունդներին: Երիտասարդների մեծ մասը սովորելու իր ողջ ցանկությամբ հանդերձ արդեն չուներ համապատասխան և բավարար երաժշտական կրթական հիմք (հատկապես Հայաստանից դուրս գտնվող հայաշատ տարածքներում՝ Արցախ, Զավախիք, Ռուսաստան): Երևույթն աստիճանաբար սկսեց թելադրել դասավանդման նոր՝ առևա մակարդակին համապատասխան մեթոդներ, մոտեցումներ, պահանջներ, որոնք էականորեն սկսեցին տարրերվել նախորդ տարիների պահանջներից:

Այսպես, եթե նախկինում դասընթացն անցկացվում էր ըստ դասագրքի հիմնական բաժինների հերթականության, ապա, համաձայն արդեն մեր կողմից ընտրված սկզբունքի՝ այս սկսվում է գեղջկական երգի ժամանակակից իսկ երկրորդ կիսամյակում միայն անդրադարձ է կատարվում երաժշտական լեզվի տարրերին: Այսպիսի հերթականությունն, ըստ իս, օգնում է ֆոլկլորին ոչ շատ ծանոթ ուսանողին նախ մոտիկից շփվել երգատեսակներին և ունկնդրել մեծ բանակության տարրեր ժամեր ժողովրդական երգեր: Դա, անշուշտ, օգնում է անհատին իր ականջի խորքում ու սրտում հավաքել ժողովրդական, ավանդական երգ ու նվազի մեղեղիական և ոիթմիկ դարձվածքների որոշակի պաշար, որի հիմնան վրա այնուհետ փորձում է վերլուծական հմտություններ զարգացնել:

Դասավանդման հենակետերն են՝ հիմնական նյութի մատուցումը դասախոսության ձևով (ընդգրկելով դիակատիկ նյութեր՝ կենցաղային ու աշխատանքային գործիքներ, որոնք առկա են լսարանում), կրկնությունը, թեմաների հարցումը, պահանջվող երգերի ուսուցումը, կրկնությունը և համանումը: Յուրաքանչյուր դասաժամ (սկսած 3-րդ շաբաթից) սկսվում է նախորդ նյութի կամ երգերի համարու կրկնությունից և հետո միայն՝ անցումը նոր թեմային: Այս կերպով հիշողության միջոցով պահպանվում է կապը նախորդ շաբաթվա անցած նյութի հետ, որն այս կամ այն կերպ ընդհանուր եզրեր ունի հաջորդի հետ: Կրկնության մեթոդը կիրառվում է նաև ուսումնական տարվա չորս միջանկյալ սսուզարձների ընթացքում: Որպես կրկնության տեսակ կարող են ընտրվել թե՛ բանավոր և թե՛ գրավոր միջոցները:

Մեր կողմից իրեն նոր մեթոդ կիրառվում է այն, որ զուտ ֆոլկլորային կատարումներից զատ ուսանողներին հրամցվում են նաև ֆոլկլորային նմուշների այլևայլ կատարումներ, մշակումներ, մեկնաբանումներ, բանի որ ֆոլկլոր, իրեն խիստ կենսունակ երևույթ, ներխուժել է ուղիղի նույնական տարրեր, համերգային բեմ, կինոարդյունաբերություն, մտել արվեստի տարրեր բնագավառներ՝ ժողովրդական, երգչախմբային, էստրադային, ջազային, ուռի և այլն:

Մեր կողմից ընտրված՝ ճաշակով և գեղարվեստական արժեք ներկայացնող բազմաստեակ կատարում-

Ն Վ Ի Ր Վ Ո Ւ Մ Է Պ Կ ՀԵՖ Ա Մ Բ Ի Խ Ո Ւ Ի 50 - ա մ յ ա կ ի ն (2019 թ.)

ների շնորհիվ ուսանողը ծանոթանում է նաև, այսպես կոչված, «Երկրորդային ֆոլկորի» գոյության, զարգացման և բնական փոխակերպումների գործընթացին: Դա արվում է զուգահեռ: նախ հրամցվում է ֆոլկորային նախաստեղծ նմուշը գեղջուկի կատարմամբ, այնուհետև՝ երկրորդայինը: Ֆոլկորի կենսունակությունը փասող՝ տարիների մեր այս փորձարկումը օգնել է երիտասարդ սերմարին իր ավանդական երգը ճանաչել, խորությամբ ընկալել, սիրել և, ինչու չէ՝ ճաշակ զարգացնել:

Նախկինում դասընթացի գործնական պահանջներից էր՝ մեկ ուսումնական տարվա ընթացքում սովորել և անզիր հանձնել մոտ 60 ժողովրդական երգ (անմշակ): Եթե նախկինում երգերը դասախոսի կողմից հանձնարարվում էին, և ավելիալիում էր անմերասպահ ինքնուրույն հանձնում՝ սոուզարքի ձևով, ապա այսօր դասախոսը՝ եղելով վերոնշյալ պատճառներից, ստիպված է դասաժամի հաշվին և դասից դուրս օգնել ուսանողներին՝ սովորել և յուրացնել դրանք, հետո միայն ինքնուրույն հանձնել որպես սոուզարք: Հաշվի առնելով այս հանգամանքը, նպատակահարմար ենք գտել այդ թիվը կրկնակի կրճատել, քանի որ երգերի որոշ քանակ իրենց բարդությամբ դժվար հաղթահարելի են: Մյուս կողմից՝ սա օգնել է քանակի փոխարեն կենտրոնանալ երգերը յուրացնելու և հանձնելու որակի վրա: Ի դեպ, գործիքահար ուսանողին (եթե չի կարող երգել) հնարավորություն է տրվում երգերը հանձնել՝ նվազելով սեփական գործիքով: Այսպես, ուսանողը փորձում է տոնայնապես մեղեղին ինքնուրույն հարմարացնել իր գործիքին և մեկնարանել յուրովի: Դա կարող է նաև օգնել երաժշտին նվազացնելի բնարության հարցում՝ հետազոյում ինքնուրույն օգուվել ֆոլկորային նյութից: Ժամանակի ընթացքում, մերողը ստեղծ է դրական արդյունքներ: Ուսանողն իր համար հետազոյում երգերի պակասը լրացնում է ինքնուրույն, իսկ շատերն էլ իրենք են կատարում ժողովրդական երգերի մշակումներ, գործիքավորումներ և տարբեր կազմերով ու մեկնակերպերով ներկայացնում համբությանը:

Ժողովրդական երգերի յուրացումն ամրապնդվում է նաև ուսումնական տարվա վերջում երբեմն կազմակերպվող դասարանական փորբերկ «համերգով», որն

Բանայի-բառեր. «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» առարկա, Մարգարիտ Բրուտյան, ժողովրդական երգերի անմշակ նմուշներ, ավանդական ֆոլկոր, «Երկրորդային ֆոլկոր», դասավանդման նոր մեթոդներ, հեռավար դասավանդում:

Ключевые слова: дисциплина “Армянское народное музыкальное творчество”, Маргарит Брутян, необработанные приемы народных песен, традиционное песнетворчество, “торничный” фольклор, дистационное обучение.

Key words: discipline "Armenian folk music", Margarit Brutyam, unprocessed examples of folk songs, traditional poetry, "secondary" folklore, distance training.

Резюме

Музыковед, доцент ЕГК **Anahit Artavazdovna Kirakosyan.** - “Некоторые принципы преподавания армянского музыкального фольклора”.

Статья посвящается преподаванию дисциплины “Армянское народное музыкальное творчество” на отделениях народного пения и инструментов. Приводятся методы преподавания в связи с “трудностями” 1990-х годов (социально-экономические, понижение образовательного уровня и др.). Проводится параллель с новшествами в связи с дистационным преподаванием в современных условиях.

Summary

Musicologist, Docent of YSC **Anahit Artavazd Kirakosyan.** - “Some Principles in Teaching Armenian Music Folklore”.

The article discusses the teaching of Armenian folk music in the Departments of Folk Singing and Folk Instruments. The author introduces teaching methods related to the problems of the 1990s (socio - economic difficulties, declining general educational level). The article also draws parallels with the innovative approaches related to distance teaching.

**ПРЕДОЛЯК АННА
АНАТОЛЬЕВНА**

*Кандидат искусствоведения, доцент кафедры звукорежиссуры
Краснодарского государственного института культуры
E-mail: aapkras@mail.ru*

**ИСКУССТВО ДИАЛОГА
В ПРОСТРАНСТВЕ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ**

Диалог как одна из форм решения проблем как никогда востребован. Посредством него решаются актуальные проблемы в области искусства. Смыслоное пространство любого из видов искусств динамично. Оно диктует специфику концепций, особенности интерпретационных процессов, иных творческих решений. При этом язык, избираемый автором для раскрытия основной идеи или сверх-идеи, подвижен и понимается как процесс. Следовательно, способы предицирования могут и должны быть различны, тем более что синтез в наше время не ограничивается лишь соотношением видов искусств. Научно-практическое поле является их взаимодействие на уровне языковом, композиционно-стилистическом, жанрово-драматургическом, синестетическом и т.д. Отсюда появляется игра смыслов, подвижность которых формирует собственную действительность. Последняя, в свою очередь, является частью представления объективной картины мира. Вектор направленности пространственно-временного континуума собирает в единой точке прошлое, настоящее и будущее.

В этой связи уместна мысль, высказанная Ф. Листом еще в XIX столетии. Композитор грезил обогатить музыкальное искусство посредством поэзии, литературы, архитектуры, скульптуры и т.д. Умение слышать друг друга, выявлять похожие тенденции развития искусств в наше время, видеть их различия и индивидуализацию – одна из основных задач при решении проблем, связанных с синтезом искусств.

Объяснять – это не только интерпретировать или реинтерпретировать художественный текст, но и выявлять скрытые техники когнитивных процессов мышления автора, учитывая “математически точную” структуру, созданную художником. В данном контексте “физика” выразительных средств в искусстве встречается с метафизикой и т. д. Здесь стоит вспомнить опасения, высказанные И. Кантом в защиту чистого научного познания: “Смещение границ различных наук ведет не к расширению этих наук, а к искаражению их” (1. С. 4). Данные проблемы решались в рамках Всероссийской научно-практической конференции с международным участием “Современные аспекты диалога литературы, музыки и изобрази-

тельного искусства в западноевропейской и отечественной музыкальной культуре”, проведенной 30 октября 2020 года в Краснодарском государственном институте культуры.

